ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՅ

# ԲՈՒՐԱՍՏԱՆՔ

## ՔԵՐԴՈՒԱԾ

ՏԵԱՌՆ ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՅ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

A III/4628

Ի ՎԷ՛ՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՅ 1851

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԹՈՒՐԱՍՏԱՆՔ

# ԵԴՈՒԱՐԴ ՀՈՒՐՄՈՒԶԵԱՆ

### ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐԱԿԱՑ

### ԱՌ ՊԱՐՈՆ

# ԱԲՐԱՀԱՄ ԱՂԱՆՈՒՐ

### ԽՆԴԱԼ

*ՄԻՆՉԴԵՌ վշտակիցք ընդ քեզ եղեալս այլք առնէին զիրերօք առ 'ի սփոփել զսիրտ քո կարեվէր 'ի կրկին հարուածոց մահուն որ զերկուսին դստերս քոյին որպէս շուշանս ամբիծս արկ 'ի սայր անգութ գերանդւոյն, և մինչդեռ զանձին մոռացեալ քո զսուգ՝ զգորովագութ Հայրենեաց հոգայիր փարատել զթախիծ, ուշ 'ի կուրծս իմն անկեալ՝ զՀայաստան աշխարհ 'ի դէմս Վրուրի Որմիզդեանց ածի նմա սփոփիչ:*

*Այլ քանզի ազգասիրութիւն զեղապարոյր 'ի քեզ ընդ բանասիրութեան աշակցեալ՝ որպիսի և իցէ առեղծս մուաց 'ի տիպ հաճեցաւ արձանացուցանել, զոր 'ի կեղծիկ դէմս յինէն յայնժամ քուեդ ընծայեալ Մամնի տիկնոջ, զայն քեզ արդ արժանաւորին սիրոյ իւրոյ և մեծարանաց ընծայէ Ուխտ Մխիթարայ:*

*Ի Հռովմ 10 Սեպտեմբեր 1851*


ԵԴՈՒԱՐԴ Վ. ՀՈՒՐՄՈՒԶ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՌ ՏՈՀՄԻԿ

# ՄԱՄՆԻ ՏԻԿԻՆ

ԱՂԱՆՈՒՐ

# ՈՒՂԵՐՁ

Էջ ըզբօսիր, ՄԱՄՆԻ ՏԻԿԻՆ, ի բուրաստանն իմ յայս ի ձեռ,
Ըզմայլելնիդ ըսքանչելով ի սմա ըզսուրբ Տանրաքախիծ.
Աստ Վիրգիլեան դըստրին քոյին, աստ Վարդուհի փաղամեռին
Վերկենդանեալք չըքնաղ ի տիպ Քեզ ընդ առաջ գան ի տեսիլ,
Ոչ նըկարէնք ի տատասկի, ոչ ի պարեան շընչեալ ի վէմ,
Այլ քուսակմանք յառնեն տիպարք այլակերպեալ ցեղածաղիկք.
Այն ՚ի շուշան արկ սըրբափայլ, այն ՚ի հաւնեարըն ճաճիշակ,
Ըզհոգեղէն իսկ ըզհոգին կենդանագրեն Քեզ սայք ըզգեղ.
Նըշխն գուշակ տիոց հոգին, Տիրանազեղ դիմացըն վարդ,
Բոլորեցուցին Քեզ քուսակաց աստ ըսփոփումն ընծայելով.
Սուգ աստ քաղեղն առնու տըժգոյն գիրկս ըզշիրմաւ հոգին արկեալ
Սուգ ուռենիք առեալ ընդ Քեզ լան ըզնուսա արտասուաթորք.
Ոչ ես հիւրոց ներք նոճեարն ազդէ ըզսուգ Քո աստանօր,
Այլ և ի տար աշխարհն գնայուն ածէ զըրտերց քոց յիշատակ.

# ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ բոլոր առաջնկայ քերթուածոյս, և նախամօրն կոչ յօդնութիւն :

Խրատք առ ՚ի խնամս ամենայն ազգի ազգի ծաղկանց պատկանաւորք · որակ հողոյ սատածիչ նոցին · ցան սերմանց · քաղահան մոլախոտոյ · հնարք ընդդէմ ճճեաց վնասակարաց, մանաւանդ խխնջունւոյ և մրջման · պատսպարութիւն ծաղկոցի ՚ի հողմոց · բաշխ բուսակաց, և ոռոգման նոցին զգուշութիւնք :

Սերունդ և դարման ծաղկաւէտ թփոց · յորոց սովորականք ՚ի զարդ ծաղկոցի՝ եղրեւանի, դեղձի բարդ և նռնենի, ոչէանդր՝ ուր և զկզդւոյ սրբոյն Պ ղարու բանք · ոզորեաց ազգ, մրտենի, կիտրոնիկ, յասմիկ, հօպոպ Մ րուսեկի, անուածաղիկ, և վարդենի ուր և զՄ արդալարէ բանք :

Սերունդ և դարման կոճղեղաց · յորոց յաճախեալքն ՚ի զարդ ծաղկոցի՝ շուշան, ազգ ամարիլլեաց, յակինթ, նարգէս, կակաչք, հրանունկ, անեմոն, քրքում, գորգինայք, մատուտակ, հերիկ, և հարմնամատն, ուր և զծխածանէ անհարկութիւն :

# ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ի ԶԲԱՐԳԱՒԱԾ դրախտի զբօսանս եւ ըղձալատակ բազմազգեարձ,
Իւ անդ ուրեմն 'ի յԵդեմ ըսկըզբնամարդն ըզբօսանէր,
Մինչ չեւ մահուն անդր 'ի ներքըս սողոսկեալ օձակերպիկ,
Ի զվաստակին՝ յոր ըսփոփումն արդ մահացուի է պարապել,
Երգից 'ի նուագ։ Իսկուհիդ Փլորա, եկ այսր, առ իս մատիր,
Որ չեւ մայր ըղձնելասէր զուլթ 'ի ծաղկունս արկանէիր,
Օ՛ երփնունակ զարմից նոցին ուսո ինձ ծ՚ն զանազանակս.
Ա՛յք անսերմն, ո՛յց ամենոր 'ի սերմանէ առեալ սերունդ.
Ո՛ր իւրաքանչիւրցն հող եւ զարմն պատկանաւոր.
Օ՛ յինչ սընունդ, ո՛ր 'ի նոցունց հիւր ընդ երկնաւ մերով բնակեալ.
Յետ տարագիր 'ի հայրենեացըն սահելոյ հասարակաց.

5. Փլորայն հեթանոսաց համարէր յաւերժահարսն բնակեալ յԵրանելեաց կըղզիս աստուածուհի ծաղկանց. յայս ուրեմն է առասպելաց զդրախտն եդեմական յԵրանելեաց կղզիս փոխեալ, եւ զնախամայրն Եւայ զնախկին խնամող դրախտին յաստուածուհի ծաղկանց, կոչելով զնա Փլորա. վասն որոյ Փլորայն 'ի նոցանէ առասպելեալ՝ է իսկապէս Ճշմարիտն Եւայ.

Ո՛յք 'ի ձմերոցըս գըրգաստնք, մըք քամահօղք սառամանեաց.
Եւ ե՛րբ արուեստ քըրօրէն դըրախտից 'ի զարդ օգնէ բնութեան,
Ի զկորուսեալ նախատըպըն նորաստեղծել զաղօտ պատկեր:
Զայսոսիկ ինձ մի առ մի լեր նախամայրըդ թելադիր,
Զի դու բնաւից ես հըմուտ աստուածուսոյց միջակուհիդ:
Շուրջ մեղուք անուշահոտ հիւթոյն 'ի ծուծ կան անձկաւէտք,
Ընկարէն ձախրէ թեւոկըն ըզմեւք թիթեռըն շուրջ 'ի թիռ,
Լուռ 'ի լուր ըզմայլական կայ օրիորդ ծաղկատարփիկ,
Հայկազեանք բարձեալ կողոփս յաւէրժհարսունք 'ի ծաղկաքաղ,
Կան ըրնաւք տաղիցս 'ի լուր, դու ձեռն ինձ տուր, և սկսանիմ:

Ընդըստին յաշնայնոյն մինչ զակաղձուն կըթուք ըզօսյն
Զըգէ եզնամոլ ձրուընչաձայն անուոյն 'ի գին,
Մինչ առոյդ պարէ մանկտի կարմիր ոտամբ 'ի հընձանին,
Եւ փըրփրադէզ 'ի բաժակ պըղպըջակէ հոյզ ծաղկահամ,
Դու զքամածոյ չանչն 'ի յանկեան ուրեք մըթերըս բայօթեաց,
Խառն 'ի խուռն ընդ աղըրղուկըս վառեկի դէզ առ 'ի փուտ.
Յաւէլ չեղջաբար անդր ըզգեղըն տերեւակոյտ,
Զանտառաց երբեմըն զարդ և հովանի դալարադեղ,
Ի բըքայոյզ արդ 'ի հողմոց դիակնացեալ անսօսաւին:
Զըմերունք քեզ զայն երբեակ 'ի թօնընկէցս ողողեսցեն,
Եւ սպիտակ ըզնովաւ հալեալ լուծցի ձեան կերպարան.
Երբ և փուտ 'ի յընդերըն խաղայցեն մաշարական,
Երկմատնի զայն վէր 'ի վայր ըստէպ շըրջեալ խարխարեսցէ,
Մինչև ծակուց նըքուրի տեղի տացէ զուղձ մանրամաղ:
Զայսպիսի մատաղատունկք ախորժեն բոյծ ծաղկունք 'ի մնունդ,
Բըրբիր և փըխրան՝ յոր հեշտ 'ի ներքըս զեռայցեն
Ըրբաթելք արմատըն ծաւալեալ շուրջ համատիւր,
Եւ ողողք զեղըս անձրևաց քամեալ 'ի խորս անդր անարգել՝
Մի զտակոխըն փափկիկըս խոնաւութք վընասեսցեն:
Այս և գըրգաստն բարուց նոցին է մնունդ 'ի ձահ,
Իբր կաթըն մանկըտւոյ և դիւրահալ պատկանեալ ջամբ.
Եւ ոչ թանձրահող նոցին 'ի դէպ պատահէ արտ,
Պարարտ 'ի կոչկոռ և պարարակ յաղբ անդէզ,
Յոր հաստաջով բանջարոց սերք և ծառոց բարգաւաճեն:

Զայսպիսի նոցին կանուխ ամբարեսջիր ախորժ պարէն.
Այն ինչ անդք 'ի քաղցրաշունչ եղկեալ 'ի սիւք գարնանաբեր,
Մինչ ջուրս 'ի սայր կոր յօտոցին քըշտէ մըշակ 'ի յայգեստան,
Եւ ծիծառն ըզկողերց կախէ գձագուցըն զօրորան,
Բակըսիր ըզծաղկանց տալ 'ի յաւանդ ըզսերմննիս.
Թող լուսնին ուռձալիր լուսափայլել կարակնաձև,
Եւ ապա սերմանեա. յուռթի ծնանին 'ի լուսնակի.
Ախորժ 'ի ճաշակ բազմաձըձւոյն է հատ փաւիկին,
Մի գնոսին առ 'ի ծնունդ գետնախըշտի 'ի յարտորէս,
Այլ յաղկըր խեցեղէն կամ 'ի գոգեալ արկցես աղցի,
Որ մի հեշտեաւ կարիցեն խառնափընդոր սողալ զեռունք.
Եւ չիք բազմաձիղ ած ըզնոքիմբք պատըսպարան,
Զի մի ոխերիմք ըզգըշ կատուոյն բրեսցեն Թաթուքք.
Գարնայնի վաստակ մեծ, գարնայնի հող ըզգուշութեան.
Անտի բոլոր ամառայնոյ պատրաստի յոյս բուրաստանին.
Գարնայնի մըլախոտ մըլի ընդ արտ ծաղկաբուսիկ,
Ի տղայաբոյս հասակի հեղձուցանել զարմ և զաւակ.
Դու անխոնջ 'ի գարնայնի արկ քաղահան ըզժամոտ 'ի բաց,
Մինչ չև զըժոխարմատ տիրեալ ձիտին և սերմնարկեալ.
Ոհ, գարնայնի դըժուարամարտ ընդ անիծիցն է պատերազմ.
Հոյլ 'ի հոյլ մանիշակ և ոսկեզօծ փըթթեր նարգէս
Երկիր ինքնայօրդոր չև 'ի յանէծըս դատապարտ.
Շըրջեալ մերոյ եղեռան ըզկարգ էիցըս համայնից,
Որոմն ընդ ցորենոյ տիրապետեաց ընդ անդաստան,
Փոխանակեալ ընդ ծաղկան զաղձն և եղիձ դաժանաբոյս,
Եւ համայն ուրեք տատասկ, համայն ուրեք բըստմնի զըժնիկ.
Անքոյթ 'ի հինից ատոի ըզբոյն պատրաստեսջիր
Բուսական ձաղուցն 'ի Թուխս, Թէ զուԹ 'ի քեզ է ընդ նոսին.
Իսկ և այլ ոխերիմ նոցին ոսոխ խըղըընջուկ.
Մանէ սպիտակ շաւիղ 'ի լորձն յարաձըգեալ քեզ զորջ հինին.
Անդէն 'ի գարանի զպատենաղէնն հար ջաղջախեա.
Կամ վաղ քաջ յարևածայրս յասպատակել յենուզակին

51. Զխոխըս լուսնական աւուրց առ 'ի մշակութեն ընդունայն համարին ոմանք. բայց բազմաց կարծիք ոչ անընդունելի համարին զազդեցութիւն նորա և 'ի բոյսս, որպէս 'ի մակընթացութիւն և 'ի տեղատուութիւն ծովու:

Հաս 'ի վերայ · ախորժէ 'ի ցօղալից ձեռնել 'ի բոյս ։
Իսկ զի՞նչ ըղմըրջմանէն իցէ օդել ինձ աստ 'ի ձահ ·
Քուրաժիր գընայ ընդ արտ և ընդ պարտէզ սեաւ ասպատակ ,
Ըզխուարծիս բուսակաց դեռաբուսիկըս ճարակել ,
Եւ զհանճար նախահօդակ , ո՛հ , չարաչար 'ի կեր արկեալ ,
Ըզ յոյս մըշակին աւարելով ազդ զօշաքաղ ։
Դու ըզբոյն մըրջնաբուծու 'ի լռաւէտ կոհեղ մայրւոյ
Ի կուղըն դարանեալ կամ 'ի խոռոչըս կեղեւոյ
Եւ կամ 'ի փուտ ոփւոյ 'ի փոր՝ ան 'ի ծաղկոց քոյին գաղութ ·
Խառն մարտի ընդ անհամդէտ անկեալ ընդ գունդն հըսկայազօր ,
Ընկձի եղեռնաւորն 'ի Տիտանանցն եղեալ նըկուն ։
Կամ 'ի բոյն նոցին հաս ընդ արահետըն հետեւեալ ,
Ընդ որ զամբարըն կըրեն լընուլ զանյագ ըշտեմարանս ,
Եւ անդր 'ի ներքըս յորձնեռանդըն լի՛ց հեղեղ սատակչական ։
Ընե՛ր ինձ արդ և զզառնաշունչ պատմել զեղեռն հիւսխակաց ։
Դահավէժ 'ի ափսեան գաղաթանէ անկեալ 'ի ծով ,
Յանձախ 'ի յանդունդըս զեղեւն ընկլոյզ մըրրիկ ,
Ընկոտեալ կայմից և թիոց զընան ընդ ծուփըս նըշմարանք ,
Կամ ընդ ժայռըս սառնակուռ ըզլաստափայտըն խորտակեաց ։
Մըրրիկ յահեղ մըռընչիւն և ընդ անտառըս մոլեգնի ·
Ջաղխեալ մայրից անդ կոհեղք վըկայք յաւերժք արձանանան ։
Զամենայն ինչ տապալէ բարկ հիւսիսոյ բըրդեալ զայրոյթ ·
Մանաւանդ մինչ գումարէ զօրոտընդոստ ընդ իւր կարկուտ ,
Հարկանէ անողոք ըզծաղկաւէտ նա զբուրաստան ,
Ըզվարդ ծիրանեփիեան առ ձիւնաթոյր շուշան ծաղկին ,
Եւ զյակինթ կապուտակ և ըզնարդէս խարտիշագեղ
Խառն 'ի խուռն 'ի յերկիր երփնանըկար արկեալ տապաստ ։
Յանկարծ ըզծաղկոց քոյին մըշակդ յապահովէս ,
Բարձր 'ի մարդէ ժանտ հիւսիսոյ ընդդէմ հինին արկեալ պատնէշ ,
Զի մի զաղխողըռն անցէ ստուերեալ քեզ 'ի տեսիլ
Ըզմանկըտւոյն 'ի դոյժ Հռամայ 'ի գիրկըս մարցըն կոտորած ։
Օգնէ և ծառատունկ շուրջանակի պատըսպարան

84 · Մըջնաբուծ , որ և հնդիկ մըջիւն , է ազգ ստուար մըջմանց՝ որ սատակիչք են մանուկց , և անխնասակարք բուսոց · զբոյն նոցա ժողովեալ յանտառաց ածեն դըրախտապանք 'ի ծաղկոցս առ 'ի բնաջինջ առնել զմանուկնան փչասակարս ։

Լօձից և սարդէնեաց զարշաւանսն բեկանել թափ.
Որպէս գունդ շրջապատ, յորժամ խորանս աչեղ ճամբար
Յարձակաւայրս հարկանէ շուրջ 'ի հնոց կասկածաւոր.
Երամն ուժով հընչէ այլ հողմաձայն 'ի ծաղկոյն,
Բայց մեղմոյ օդոյ հագխ ծայրից նոճեաց տատանելով.
Նայապխի եղեմնական էր ապահով, ամ նախամայր,
Ուր 'ի հեզլիկ սօսաւէն ծանեար ըզգնացս աստուածաձեմ,
Մինչ դեռ Եւր և խորշակ յեւոյեան այրս ամփափակեալ,
Զև ընդ ծով և ընդ ցամաք փոթորկէին մըրըրկայոյզք.
Բնէր ըզքաշխոս բուսակացն ընձիւղելոց արդ ուսուցից,
Ի՛բր ըզգուշեաւ ըզորնկախիտ սերմանս 'ի ձախ է բաժանել.
Թող զերրորդն 'ի խանձարուրս անդ արձակել զոյգ տերեւիկ.
Եւ ապա, ո՜հ, քեզ ըլկուրդեանն աստ Ենեթ յուշ լիցի հրամանս,
Զազկազկս 'ի մանկրտույն յանդուղ 'ի մահ դատապարտել.
Դու զազագունս 'ի նորածին սերմանց անտի արկ յարեէ,
Իսկ զառոյգս 'ի խոնարհել արփւոյն 'ի մայր իւր 'ի թաւալ,
Կամ շայեկանք մինչ ընդ եթեր անձրեւայոյզ կախին ամպուրք,
Նծ յածուս բուրաստանիդ, մի զմիջաւուրը, մի խակ այգուն,
Զի մի չեւ 'ի նոր կայսրն կայկայեալ 'ի ծուծ հիւթոյ,
Ի շողիցն արփենից տոչորեսցին դիւրաթառամք.
Մանրացօղ ըզնոքօք ած ընդ փողրակ նըրբացընցուղ.
Նյս և զարդուն հասակէն 'ի ձախ բուսոց է ոռոգումն,
Նձկալեացն անձրեւոյ ախորժելի ածեալ պատիր.
Մի, մինչ արեւն բոցակէզ տուընջենային բորբոքէ հրատ,
Նրբուցանէր ըզբուսակ. զի վրիպադութ խարշէ զնա սէր.
Ընդ երեկս առոգեա, երեկորէն առողջ է ումպ,
Մինչ տեղի տայ արեգակն զաձեցուն հրդատեալ բոտուերս,
Ի տօթոյն զովանալ և յեղկանալ ջուրցն ցերեակ.
Նմըշակ անկարեկիր՝ որ զձեռատունկըն թառամեալ
Թողու լըքանէ ծարաւահիւծ ցըւաղորդայն,
Մանաւանդ ուր ագահեն երկինք ըզշաղըն զովարար.
Հագխ հէքն ըզգագաթն իւր խոնարհեալ առնու 'ի վեր,
Հուպ ընդ հուպ ըզհետ արքմանն հասեալ եռանդն արփիահրատ,
Ծործէ սպառէ զըստածիչ նըւաղելոյն ըզհիւթն 'ի բաց.
Ոչ այլազգ ըզգառնըլս դիեցիկս հովիւ օտար

Ի մարգն 'ի սաէնէ քեցեալ մնցէ չև կըշտապլինդ .
Մի 'ի վարձկան Թերահոգ ըղձեռատունկ քո լըքանէր ,
Ինքնին յանձանձեա , ինքն 'ի ծաղկունս սրկ գութ և խնամ .
Հալեսցին աչկունքդ 'ի քոյս , աղէտք 'ի սիրտ քո յուզեսցին .
Ոչ այնպէս մանկտի 'ի խնամս հայրենականս հըրձուեալ քերկրի ,
Որպէս տունկք՝ ըղձայունք գոգցես ձեռնըն տէրունի ։
Տուր բուսկանն յուշիկ ըմպել , և կազդուրել ըղցայգն 'ի բուն ,
Այլ մի զմատաղատունկըն ծայրայեղ ողողանէր .
Անդ իսկ եղեռն ածեն կարի խոնաւոյթք ։
Օշարակ զարդացելոցն 'ի տես մատո շուրջ բաժակեալ ,
Զանգեալ ընդ ալիս ըղձաղախուռ կորկ արջառոց ։
Զայսպիսի մատըռուակէ սնունդ բանջարոցըն պարտիզպան ,
Եղան 'ի ձեռնն կացեալ բոկիկ 'ի գլուխ առուի ,
Եւ ոտամբն ընդ կորի յուղարկելով վիժակ զոնդող ։
Ի սոյն 'ի յունիսի նարընջենի ախորժ 'ի ծուծ հիւլեան մեղուաց
Ծաղկեալ անուշահոտ , չեկակարմիր պըտղնի 'ի միրգ .
Այսպիսի արքունին 'ի ձայն և ծաղկաւէտ Թըխսատանին ։
Այն ինչ արևն ընդ Կարձին ձմարուս 'ի բաց արփաԹևեալ ,
Մեկնեա զդեռաբուսիկ ընձիւղս առ մօրըն բողբոջեալս .
Կամ ծիլս 'ի յոստոց , առուլԹէ մայրն իցէ , հատեալ
Ի նոր աշնայնի ածս 'ի յածուս ընկադրեա .
Տաշտալթաղ յարտ զաւակ աղեղնաձև զըձեալ ուղէշ ,
Կամ 'ի տոհմիկ մօրէ ձիղ յանտոհմ 'ի բուն կեցո պատկէն .
Կամ պըտուկ տերևոյ ընդ միջն 'ի բաց զերծ 'ի յոստոյ ,
Կեղև ընդ կեղև յեռեալ յանքնիկ կողը 'ի համբոյր ։
Հըրձուի անարգ Թըփիկն յանկարծ յօտար ծաղիկ գեղազարդեալ ,
Եւ արմատս առեալ Ջրղիկն եղանի մայր գեղածաղիկ ։
Այսպանակ ածէ խնամեալ և սերմնոյ եղըևանի ,
Հընդիկ 'ի ընէ սաեղնեալ Թըփիկ , և ընդ երկին մեր ընդելեալ .
Անմատոյց 'ի Ջըձուոյ և հիւրամերժ բամից Թըռչնոց ,
Դառնատերև 'ի ձաշակ ընդդէմ հինից պատըսպարեալ .
Ծոձէ ձեղենակ սաղարԹազեղ կողերցն 'ի ծայր ,

172 Եղըևանի . Lilla, Seccomoro. լեյլաք . որոյ տերևք դառնինք անախորժք են ձձեաց և Թռչնոց ։

Կապուտակ ընդ կարմիր խառնեալ երանգ անմախոտից,
Իբր այն՝ յոր երգունէ ըղձիր երկնի գիշերավառ ·
Մանաւանդ զոր Պարիզ 'ի զարդ յըղէն մերոց բուրաստանաց,
Ուր ցըմեծ հեռաստան ածեն զեփիւռք բուրումն անոյշ:
Ի նոյն երանգ կարմրորակ փըթթէ դեղձի յարաթըփիկ,
Փոխանակ փափուկ մըրգաց ծածկեն ծաղկունք խաւ 'ի խաւոյք
Համան զուղեշըն նըրբենիս՝ չև տերևեալ կանաչագեղ:
Հանգոյն և նըռնենի ծառոց արքայն ծիրանազգեաց,
Բարդ 'ի բարդ փոխան պըտղոց բերէ ծաղիկ յոստ սաղարթուն ·
Յամ երկաքանչիւր քան զհամագգիսըն մըրգաբերս,
Նաև յուշիկ 'ի յերկուոս գեղեցկագոյնք ծաղկաւետեալ:
Իսկ ոլէանդըր ծառաձև ամբառնայ թուփ գեղազիտակ,
Յաւերժ սաղարթագեղ՝ զոր ոչ աշուն բըքայորդոր
Կապտէ 'ի զարդուէ, և ոչ արագ ցըրտասառոյց ·
Ի վարդագեղ փունջըս ծաղկանց զամառն 'ի բուն զըւարճացեալ,
Յարափըթթիթ ընդ երկնաւ՝ ուր ձըմեռն ոչ ալևորի:
Նաւեալ գոյր ցանկալի դըրախտից 'ի զարդ վայելչութեան,
Թէ ոչ ժանտ շընչէր սըղուխ, թէ ոչ դըժնիկ սըփռէր ծըմակ ·
Խամբին 'ի հովանուջըն մանրատունկ ծիւրեալ բուսակք:
Սայրասուր յար 'ի ձեռին յոտոց՝ քըշտեա զաստ 'ի խոնարհ,
Բարձրաբերձք աճումն առեալ զարդ քեզ 'ի թուխս յօրինեսցեն,
Նըկեալ յեղերըս ծաղկոցիդ անվըրդենակ ըստուերս 'ի բաց:
Նոյնպէս հիւրոցն 'ի դէմս ածէ կըղզեակն երանաւէտ,
Ուր Թաման Հանդըրին ծոցոյ շուրջ 'ի պարոյր ալիք ծանծաղ ·
Ուր մեկուսի 'ի դըղորդմանց օթէ յաւերժ խաղաղութիւն,
Միրաձայն սարեկին մընչեալ ևեթ երգ հեծութեան:
Նըզըր հալածականք Հայոց մեծաց բնակեն Մուսայք ·
Մանրանըկար ինքն ըզպատկեր քոյին բերէ, ո՛ Հայաստան ·
Ընդ հրեշտակ քո հոլաթև ըզկըղզեկան սաւառնեալ,

181 Գեղեցիկ զարդ գործեն 'ի ծաղկոցս անպտուղքն դեղձի և նռնենի, որք զամենայն զօրութիւն իւրեանց 'ի ծաղիկն ժողովեալ՝ փթթեն բարդ 'ի բարդ առանց պտղաբերելոյ, կացեալ մնացեալ միշտ 'ի չափ թփոյ:

188 Ոլէանդր կամ դափնէծաղիկ, ռհ. ՆԷՐԻ՛. 'ի ցուրտ գաւառս՝ որպէս և 'ի Կոստանդնուպօլիս և 'ի Վենետիկ, կորուսանեն 'ի ձմերայնի զկոճղս · վասն որոյ և չծաղկեն նախ քան զյուլիս: Այլ 'ի բարեխառն գաւառս՝ ուր հազիւ ձիւնէ 'ի ձմերայնի, որպէս և 'ի Հռոմ, պահին կոկոնքն աշնայինք անեղծ, և փթթին անդէն 'ի գարնայնի:

Պաշտպանէ Թևապարփակ զաւանդըս հարց քոց ցանկալիս,
Ոչ 'ի նանիր վէհ որերոյն մարգըրտատիպ հեղեալ քըրտունք.
Այլ ձըռըմնչուն մանրոց յաւէրժ նօթձէ նոյա անմահութիւն,
Ոչ ևս ահիւ ամենածախ ժամանակին սարսել ժանեաց։
Բարբառ յոր նախ դըրախտին այերց եռան հովիտք քո արձագանգ,
Ի նախատիպն իւր 'ի գեղ պանծայ պաշեալ անդ անտըրխեղծ.
Ընդ ուսուցին ինձ Մուսայք առնուլ 'ի նոյն երգս 'ի մըրմունջ,
Այլ զըսպաս ևեթ նոցին տարփից ծաղկանց գերադասել.
Այլ ըղխոնջեալս 'ի վարժից նոքին 'ի դըրախտ ըստէպ ձայնեալ,
Ընդ 'ի բարըս բուսակաց եռան լինել ինձ խելամուտ։
Բայց ողորկք գեղածաղիկք համայն և շնորհս ունին օգտից.
Կէսք անդէն 'ի ճարակ մատուցանեն տերևակոյտ,
Այլք 'ի խարտէշ զառ 'ի յերանգ ուսուցանեն կեղծաւորել,
Ոստ 'ի դաւ ձըռնձըղկի ոմն ընծայէ 'ի յարմատոյ,
Այլ 'ի տարր պըրեցագործ հրադէն ձայթմանց տան այլք ածուխ.
Ծաղկակալ հիւսեն սակառըս բոլորից ուղէշք ճապուկք,
Բոլորքեան 'ի գարնային ծաղկազարդեն ըզբուրաստան.
Մանաւանդ գընդածաղիկըն զարդարեալ ձիւնատեսիլ,
Կանխափըթթիթ ընդ Խոյիւ՝ դեռ թօթափեալ ըզձիւն 'ի բաց։
Մի զմըրտենին իսկ լըռեցից զանուշահոտ և յարագուարձ,
Հաճոյ Ընտըղկան պայծառերանգ ծաղկաւէտեալ։
Մի և թըփիկըն կիտրոնիկ լըցի յինէն անյիշատակ.
Նըրբատեղն ըզնուլաւ աճումնաձիգ ծորեն կողերք,
Ընփառունակ 'ի ծաղիկ՝ այլ կըրկնակի յաղթող բուրմամբք,
Սաղարթուցըն խընկենեաց զիւրեանցն ընդ հոտ ծաղկին խառնեալ։
Մըրսէ ըզգիրգըն սարսուռ, դէզ առ արմամըն աղբևակոյտ.
Կիզու Ակընդէն ըզնա բոց, դու ստէպ մատո արբումն 'ի գիւր.
Սընո 'ի շուք զայն ծաղկոցիդ, սընո 'ի դեղ քեզ 'ի դըմի։

216 Բզրի, Viburno, սեռական անուն ճապուկ և ծաղկաւէտ թփոց, որոց իբր յիսուն տեսակք են, և ծաղկունք նոցա գեղազանք, բայց գրեթէ բոլորիցն խոկ սպիտակք. որպէս գնդածաղիկն, Palla di neve, Պօլ տը նէժ, և այլք՝ որոց յատուկ անուանք անծանօթք են մեզ։ Փայտից սոցա ածուխ խառնի 'ի բաղադրութիւն վառօդոյ և հրաբուեստական խաղուց։

225 Մրտենի, Mirto, Միրթըն աղաճ. որոյ իբր ութսուն տեսակք են, այլ սովորականն ծանօթ ամենեցուն։

227 Կիտրոնիկ, Cedronella, erba luigia.

233 Քանզի տերևք թփոյս ունին զզօրութիւն չայի և զայլոց ծաղկանց օգտակարաց 'ի հարբուխս։

Նաեւ զսափփինայց տարփաւոր ըղձքաղցրահոտ սընտ զյասմիկ,
Ճապուկ 'ի ձիղըս ծաղկաւէտ ածել ախորժ քեզ հոլանեակ.
Յորոնք ազգատոհմին են երփնատիպ սեռք զանազան.
Բընիկն 'ի ձահ ձողաբարձ բուրեան սպիտակն ընդ դեղձանիկ,
Բազմաշըրայլ ուռքն 'ի գարնան յառեալ 'ի սայր սուր յոտոյի.
Իբերունին կարմրանիշ՝ զոր իբերեան տածեն ալիք,
Պարսիկն, Արաբ, Ազորիկ, Հընդիկն 'ի ծի՛ն լայնատաղարթ,
Նաեւ որ այլք 'ի տարակոյս մարդից նըժդեհք առ մեզ օթեալ,
Յարկածածուկք պահպանին դըժոխըմբերք սառամանեաց.
Այլ համգունակ բոլորից հող զարմանոց և սերընդեան,
Բոլորից թերթք հոտեան խառնեն օձառ խղեփեցիկ.
Յարկածածուկ և հոպոպ Արուսեկի սիրէ ձմերել,
Գանգրաձև փունջըս ծաղկանց ձօձեալ ըղնուրք ուռոցն 'ի կախ,
Իղալթուրմ վարսիցն 'ի հոտ տխթմառհեայ բուրեալ հարսին.
Օ՛ ինչ և ըղձքէն յաւելից, անուածաղիկըդ դերահրաշ.
Օսմանիկըն զանկայուն 'ի քեզ դիտէ զբախտին անխ,
Այլ ես բեեռս 'ի քեզ տուուխս և քըսամնափուշ հայխմպըսակ,
Որովք հարսինն 'ի հրաւէր եղբօրորդեակն էջ 'ի պարտէզ,
Կարմիր և սպիտակ ներկեալ յարեան իւր 'ի բոսոր.
Նա զզուշին տըպաւորեաց 'ի քեզ սիրոյն առհաւատչեայ.
Սովին մըշակդ 'ի ծաղկոցի դալարազեղ զործեա վըրան.
Հըլու և զորմըս պըձնէ, ժուժկալէ խիստ սառամանեաց.
Այլ ըզնըժդեհըն սերունդ, զոր ընդդիմոյն յղէ աշխարհ,
Նաեւ զոր ալիք ամազոնեան գետոյն ներկեն 'ի նիշ արեան,
Փափկասուն կալ 'ի ձմերան 'ի լոյս թափանց ընդ ապակի.
Նոյնգունակ և վարդենի սերեալ, ըզնոյն հայցէ և խնամ.
Նաեւ ոչ նախանձ 'ի Պեստոն բերէ աշուն ընդ գարնայնոյ,
Այսպէս երկաբեր անդ վարդենիքըն մըշակեալ.
Գոռ զձեռ տուհմիկ ած 'ի ծաղկոցքոյն 'ի թերթըս բարդ 'ի բարդ,
Նաեւ յեց 'ի նեցուկ կացո 'ի զարդ 'ի կիցս ուղեաց,

239 Յասմիկ իբերունի կամ սպանիականն, Gelsomino di Catalonia, փոքր պատհող: Իսկ հնդիկն, Gelsomino cedrato կամ Mughetto, լայնատերև է, և հոտ նորա նման ծաղկան կիտրոնի:

245 Հոպոպ Արուսեկի, Phaseolus Caracalla, [illegible]:

248 Անուածաղիկ, Grandiglia, fior di passione, չարխի ֆէլէք:

260 'Ի Պեստոն քաղաք Լուկանիոյ երկիցս 'ի տարւոջ ծաղկէին վարդենիք. 'ի գարնայնի և յաշնայնի:

Կամարկ 'ի կարգ գեղեցկաշար ձողաբարձիկ 'ի սարփինայս ·
Բեղ ապրիէշ ծիրանազգեաց արքայակերպ անդ ձեմառեալ ,
Գեղունակ զարմից ծաղկանց բուրեացէ հոտ անմահութեան ։
Այն ինչ դուշակ գարնայնոյ աւետիկ ծաղկէ նըշէն ,
Արձակին կանաչազուարճ ծիլք 'ի նոսա , պըտկէն կոկոնք ·
Նըրկունք երկարատև ըզգեղ ծաղկին ածէն 'ի փթիթ ,
Ճիգն յոգնատաժան և եօթներեակք խընդրին երբեակ
Ի հիւսըս թերթիցն և 'ի տողորըս կարմրափայլ ։
Նոյն և 'ի ծնունդս անդէոց եղեալ 'ի բնէ դաշն անյեղլի ,
Մաղ մըրգուզք 'ի նոցունց զերկունըս մարցըն լուծանեն ·
Ոչ այլազգ և ծաղկանց հեշտածին պարգք ձահաւորեալ ,
Նըրկեան պըտկեալ բոլորք վաղ 'ի սերկեան գան 'ի պարզուած ·
Մատակ և ժամանակ ըզհրաշակերտս ածին 'ի լոյս ։
Տակաւ 'ի բաց այնուհետև քօղն առիթեալ կանաչազեղ ,
Տակաւ ծաղկանն հոլանեալ գան ծընգասէր դէմքն յերևան ։
Ոչ յԱնտըղկանըն տարփենւոյ թերթքն 'ի բոսոր արեան ներկեալ ,
Ի զուր զըրոյցք դիւցազնեայք պաճուճազարդ վիպասանեն ,
Այլ ընդ քեզ , ով նախամայր , 'ի պատկառանս համակեցան ,
Կանխիկ քան ըզփուշ առեալ զերանգ ամօթազեղ
Ընդ խաբս օձապատիր՝ յոր գըթեցեր մայրըդ գլորեալ ·
Արուեակն ըզնորօք այգուն այգուն արտասուէ շաղ ,
Իբր ըզկարմիր այտիւքդ յեռեալ մարգըրտազեղ ցօղս արտասուաց ։
Նորանըշոյլ արփենւոյն ցայտեալ ապա ցօլք 'ի նոսին ,
Բուրէ անուշահոտ զեփիւռ 'ի վայրըս հեռաստան ,
Հրաւիրակ օրհորդին յօրինելոյ փունջ և պըսակ ,
Կամ տաճարին Տեառն 'ի դըրանդիս մանեկաձև կախել դըրաանկ ,
Կամ սըրբոյ սեղանոյն ածել 'ի նուէր զայն և 'ի զարդ ։
Փող հարկք , յաղթաստեանք , տօնախըմբել ըզՎարդավառ ·
Ո՛ն զըսկիզըն ինձ ըզտօնին վիպեա , Մուսայդ աքանացեան ,

279 Ըստ առասպելաց թերթք վարդից սպիտակք էին յառաջագոյն , և ապա յարենէ Ադոնի տարփաւորին Աստղկան կարմրեցան ։ Զի 'ի սիրել զնա դիցուհւոյն առաւել քան զդիս և քան զՆերեւս այր իւր վասն չքնաղ գեղոյ պատանւոյն , հաս 'ի դէպ հրամանէ կինձ վայրենի 'ի վերայ նորա 'ի վարդաստանս , և սպան զնա . և 'ի ճապաղիս արեան նորա ներկան թերթք վարդենեաց , և ինքն զօրութեամբ դիցուհւոյն կերպարանափոխ եղև յանեմոն կարմիր ։

Իւ Նաւասարդ գարնայնոյն նախնին կոչումն առեալ ամիս ։
Լուսափայլին, յոր ծովածուփ յոյս աշխարհի ապաւինեալ,
Տիպ 'ի յաւերժ յիշատակ գլստորոտովք Մասեաց ծերոյն
Օրգարէր ամի ամի, մառ 'ի գոհար առեալ վարդից ։
Պար ըմնոլաւ յօրինէին դստերք չքնաղք Արարատայ,
Ոսկեփայլ ծամդուրք փարսից զուսովք նոցին գեղածրփեալ ·
Նոյին 'ի նուագըս բամբռանց մանկտին քաջազըն զուգակցէր,
Յօղ ըղլաստին ուրուատիպ, ցօղ գիրերօք սրըսկեալ աւեաց ։
Եւ ծերունեացըն ձառ արկեալ՝ Թուանցն ըղվէպըն պատմէին,
Իբր երկնից բացեալ սահմանք, ծածկեալ երկրի հեղեղասաստ,
Ունչ յերեւաց երկրէ լեալ ըսպառըսպուռ համայնաջինջ ·
Եւ երկրորդ հայր աշխարհի Նոյր պահեալ անդ կենդանի,
Եւ համայնից ընդ նըմին շընչաւորաց զարմ և զաւակ
Ի գլուխ աւեորին հիւրընկալեալ Արարատայ ·
Երկնից անդուստ աղաւնին նոր արձակեալ դէտ 'ի ստորև,
Եւ անդէն շըղաքերին դարձ յերկրորդումն աւետաւոր ։
Օ՛այստիկ ծերունեացն ընդ մեծ աղէտըն վիպելով,
Եւ զարբեւցն էջս 'ի յերկիր 'ի վերըստին անմարդաբնակ,
Հապա 'ի ձախր ընդ եԹեր ըղվարուժանս արձակէին ։
Այլ աւաղ, դարք մնացկոտք ըզկնԹերեանն աւին 'ի վրէպ
Յաւեաց 'ի վեր երևեալ, և ձիւնափայլ զոյգս աղաւնոյ
Նըմա 'ի կառաըն կանքեղէայս օդաԹռչիչըս լըծեցին,
Վարդիւք ըղնա շուրջ վառեալ, վարդս 'ի բաղէն նորին ձօնեալ ։
Դուք ապա մոլորելոցն 'ի դրահեղեղ պաշտամունս Հայր,
Դուք զվարդենիսն Արարատայ սըրբեցէր Տեառն անդրէն 'ի նուէր,
Ըզձաձանչ 'ի նոսա զԹաբօրական յեռեալ լուսոյն ։
Փող հարէք, աւքանազեանք, տօնախմբել ըզՎարդավառ ·
Վարդըս քաղեցէք, և վարդաստանըս տընկեցէք ·
Յաւելից և զերփնունակ ազգըս նոցին ողել ձեզ ո՛ն ։
Ես յեւգանեան 'ի գեղազուարձ մօտիկ 'ի բլուրըս վարդաստան,

293 Յայտ է զի ամ հայկազնեան տօմարիս սկսանի 'ի գարնան 'ի Նաւասարդամսոյ ։ Վարդավառի տօնին, որ անկանի 'ի գարնան, պատճառ 'ի ջըհեղեղէն առնուլ՝ ցուցեալ է 'ի հնախօսուԹեան Հայաստանեայց · ստանոր յաւելումք, զի 'ի հին ձաշոցս մեր 'ի կանոն Վարդավառին նկարէն զարդք 'ի լուսանցսն յանդիման աւնէն զջըհեղեղն և զաղաւնին Նոյի ։

322 Վարդաստանս այս է արդարև մերձ 'ի Պադուայոյ, և որ ինչ նկարագրեալ է ստանօր՝ ոչ առեղծական ինչ 'ի մնաց և ոչ հուսակուԹիւն է քերԹողական ։



A 111/4628
ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏ.ՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Բոլորից բազմերամ ազգատոհմին սեւից դադար ·
Երկերիւր ՚ի նմա ծաղկէն ազգք վարդենեաց զարմանազանք ,
Յոգունք կարմրերփեան , և կարմրերփեանցն եւս ազգք յոգունք ·
Որ հրաշէկ , որ բոսոր , որ ծիրանի ձանձախարիթ ·
Ի զվարդամատն արշալուսոյն կէսք ըստեղանցըն զերփն առեալ ,
Ի զկուսազեղ այլք զայտից բերեն զերանգ պատկառանաց ·
Է որ դրակից ըսպիտակին ՚ի գոյն առոյգ հարեալ մարմնոյ ,
Ի սկիզբն ատոխձանաց բազմաձամուկըն նարօտի՝
Զոր անդամոր յօրինեն հիւսեալ կարմրոյն զանազանակք ։
Կէսք քըրքըմատեսիկք խարտիշագեղք և դեղձանիկք ,
Այլք ըսպիտակ կաթնաթոյր , և այլք պայծառ ձիւնատեսիլ ,
Ինչ կարմիր այլք ներկարէն իբր ՚ի յակի գրադմանիկն ·
Յօղալիցք մարգըրտայեռ փայլէն ըռնաւք ՚ի ցօղ արփւոյն ։
Են որ պարզք , են որ ՚ի թերթըս հարիւրեակ խառն ՚ի խառյք ·
Այն որ ընդ ծիլ շաքարաբուղխ խառնէ բուրեան քաղցրաւենի ,
Այն զոր յղէ Դամասկոս ՚ի հանդերձանս իւղեփեցաց ։
Գեղեցկագոյն ՚ի նոսա նազի ընութիւն ՚ի գարնայնի ,
Այլ են անդամոր և յարազուարճք մըշտափթթիկք ·
Անդ և օտար արփից տարփող ծաղկէ նըժդեհ զարմ վարդենեաց ·
Տեսի ըզըննաւ անդ ցեղակարդ ազգատոհմին հաւախումբեալ ,
Միայն աւեւորեկըն պակասէր անդ վարդենի ,
Որ ՚ի հոլխորս Երզնունեաց սփռէ բուրումն ամբրոսական ,
Եւ որ ՚ի յոնըս Թաղկեայ բուրեն տերեւք եւս քաղցրահոտ ·
Եւ այն՝ որ հազրեվարդ ՚ի նոյնքանեայ թերթից ձայնեալ ։
Քաղցր աստանօր է ինձ հիւսել քեզ դըրուատիս , ով վարդենի ·
Դու բոլորից գոս սիրելի սըրտից ՚ի վեր քան ըզըննաւս՝
Որ փըթթեին ՚ի բուրաստանըս սեւք ծաղկանց չըքնաղագեղք ·
Այլ հրաւէր արդ նոքա առ իս կարդան , Ճեպէ զիս հարկ ։
Աննախանձ , ով ծաղկունք , տուք դըշխոյին ձերում տեղի ·
Զի ՚ի խնամըս նորին ցայս վայր ըզձեռնս տաղըս յանեցին ։
Խնամեա զըշուշան յետ վարդենւոյ զանմեղութե՛ մըշակդ ըզտիպ ·

336 Հարիւրթերթեան վարդ , այն ինքն է Սատբէրկ ։

337 Այն ինքն է Օթթօ Կիւլիւ , յորմէ կազմի քաղցրաւենին ։

338 Վարդ Դամասկոսի , յորմէ մեծ վարդաջուր ածիւ և իւղ վարդի ։

343 Այն ինքն է Վէրտ Կիւլի ։

Թագուհի ծաղկանց վարդ, այլ Թագաւոր նոցին շուշան.
Քան զամենայն խառնըս խընկոց բուրէ նոցայն քաղցր ընդ իրեարս.
Առոյգք ընդ պառաւանց յաջորդեսցեն բստէպ կոճղէզք.
Մեկնեա 'ի մարցն ըղմանկըտին տածել ուրոյն տոհմին 'ի յոյս.
Զերեամ վաստակեալք տեղի դըստերըցն տացեն մարք.
Դու 'ի վարսից արմատոց սըրբեալ կանխիկ զարմն 'ի նըքոյր,
Դոյզն ինչ անդր յաւել զառամ ապաւառիկ արջառենի.
Հատընտիրս 'ի նոցունց ապա ցըրիւ արկ անդր 'ի կարգ,
Կուսին 'ի մուտս ատեղատան այսպէս կոճղէզքըն փայփայեալ,
Զուարթածաղիկ 'ի գարնան յառնեն կանգնին բարձր 'ի ցօղուն,
Շուրջ 'ի խոնարհ ծաղկանց 'ի հոյլս արքայակերպ շարժեալ ըզ յօնս.
Այալխի էր բուրաստան, ուր ստէպ հարսինն անարատ
Իջանէր եղբօրորդեակն հոլուել 'ի հոյլըս շուշանաց.
Ի՞բր աստանօր լըռել կարեմ ծիրանեփեանդ և գըեղ շուշան,
Հիւր 'ի յօտար երկնէ առ մեզ եկեալ չըքնաղդ ամարիլլիս.
Նաժիշտք զառաջաւորք պար 'ի ծաղկոցս ըզքեւ առնուն,
Այն որ ծաղկէ աստեղաձև երկրաբուսիկ որպէս վարսամ,
Այն որ 'ի տեսպ խըստորոյ անփառունակ արկեալ յերկիր,
Բերէ բուրեան շուշանիկ՝ առեալ կոչումն ամբրոսական.
Եւ այն որ Միրատարփ ձայնեալ 'ի վանդ տընկաբանին,
Զոր հըրուանդանըն Բարէյոյս յըղէ ծաղիկ հովանաձև.
Այն որ զԹագի արքունեաց բերէ ըղձև և զյօրջորջումն,
Որ Ճեղենակ ամերիկեան 'ի հերապանծ ծոպլին ոգեալ,
Եւ զի՞ մի մի զարքայաղին Թուլցեմ զարմին գեղ և զանուանս,
Որք երփն 'ի գոյն էըր աղնէգործ յեռեալ կիտուած 'ի զիպակի,

356 կոճղէզք, Bulbi, որոյ կրկին ազգք են, սոխայինք կամ ծխիթրասինք, Cipolle, և արջնակք, Tuberi.

358 Շուշանաց կոճղէզք փոփոխելի են ստէպ, զի յերկիս և 'ի չորս ամս պառաւեալ ակարանան:

367 Ամարիլլիս, Amarillis, շուշան ծիրանեփեան ածեալ 'ի Ցարոնաց, որոյ զանազան տեսակք են, այլ գեղեցկագոյնն 'ի նոցանէ կոչեցեալ Amarillis formosissima, ամարիլլիս ամենագեղ:

370 Ամարիլլիս աստեղաձև, շուշան սպիտակ, որ խտալերէն կոչի աստղ բեթլեհեման, Stella di Betlemme, լտ. Albuca major. 'ի Բարեյուսոյ հրուանդանէն ածեալ:

371 Խստոր ամբրոսեան, Aglio ambrosiaco, որ բերէ շուշան 'ի ձև գխաւոր աստեղ:

373 Ամարիլլիս սիրատարփ կամ հովանաձև, լտ. Agapanthus umbellatus, խտ. Fior d'amore.

375 Թագ արքունի, Corona reale.

376 Ցցունք կամ բաղիշ ամերիկեան, խտ. Crino d'America.

Ծաղկէն մանրերամ 'ի բուրաստանս ամարիլլեակք·
Սակաւ ջրաւից ախորժ է ումպ, վնասէ ջրաւից արտ խոնաւուտ·
Աւազախառն և փափուկ պատրաստեա զայն բարձր 'ի յերկրէ,
Ուստի հեշտեաւ աւելորդքըն քամիցին հիւթք 'ի խոնարհ·
Կամ 'ի թաղարս ըզնոսին աներկեան տընկագործեա,
Դիւրաշերծս 'ի սպառնալեաց սառամանուտ ձըմերայնոյ·
Իսկ բացօթեայք 'ի ցըրտոյ պատըսպարին ջերմահովիտ,
Համասփիւռ աճեալ զածուալ յարդ 'ի գոմոյ թուրմ 'ի յաղբիս·
Ոչ այլազգ և այլոց կոճղիզաց սեռք հայցեն խընամ։
Մանաւանդ յակինթ բուրեան, չըքնաղ երբեմըն պատանեակ՝
Որ 'ի Միհր և 'ի Զեփիւռ նախանձընդդէմ արկեալ տարփանս,
Արդ համանուն փըթթէ ծաղիկ՝ երփն 'ի պէսպէս առեալ երանգ,
Մերթ կապուտակ, մերթ կարմիր, է զի սպիտակ և դեղձանիկ·
Զորոց զարմ աղնիւ յըղեն մեզ բատաւիկք ոսկեգիսակք,
Աստեղախուռն 'ի մի փունջ փըթթինազարդ բոյլ շուշանաց·
Եւ նարգէս խարտիշագեղ, այն որ 'ի ծին բարձրայօնակ
Հակեալ ըզգըլուխ իւր սիրատարփ՝ դեռ նըկատէ զինքն 'ի յալիս,
Դեռ նըւաղի՝ 'ի դեղին դէմըն 'ի թալուկ գունագեղեալ·
Եւ կակաչ բազմաձաւնուկ 'ի տիպ բոցոյ վըռեմաբերձ,
Զոր աւէք ոլորտապտոյտըն Մէանդրեայ առոգանեն,
Ի գունակըս բիւրազգի թերթիցն 'ի յերփըն գեղգեղեալ·
Հարիւրեակք հընդերիր փըթթեն նորին ազգք արուայիկք·
Կիպրականըն վարդաձև վառեալ 'ի գոյն ծիրանագեղ,
Եւ հրանունկ և անեմոն 'ի նուրբ 'ի ստեղըն յարաձօձեալք·
Զորոց գիտել թէ զնարօտ ոք զերանգոցըն կամիցի,
Նոյն խընդրեսցէ 'ի միտ առնուլ քանիք ընդ դաշտ այըրարատեան

388 Յակինթ, Giacinto, Հիասէնթ։ Յակինթ էր պատանի յոյն չքնաղագեղ, զոր այնքան առաւելէն սիրեալ Ապողոնի՝ մինչև զբօսնուլ ընդ նմա բոլորակաւ 'ի խաղ։ Ընդ որ նախանձեալ Զեփիւռի՝ շնչեաց 'ի բոլորակն, և ձահ դիպեցուցեալ զայն 'ի գլուխ պատանւոյն՝ սպան զնա։ Եւ 'ի տրտմել յոյժ ընդ այն Ապողոնի, բողբոջեցոյց երկիր յարենէ նորա զհամանուն ծաղիկն յակինթ։

392 Ջի 'ի Բատաւիոյ, որ է Հոլանտա, գան աղնիւ յակինթք։

394 Նարգէս, Giunchiglia, Narciso, Ժոնքիյ։ Նարկիս էր պատանի գեղեցիկ, և 'ի վտակ ուրեք ակնարկեալ տեսեալ զդէմ իւր՝ այնպէս հարաւ 'ի սէր, մինչև նուաղել 'ի սիրոյն, և կերպարանափոխ լինել 'ի համանունն իւր 'ի ծաղիկ։

397 Կակաչ, Tulipano, Թիւլիփ։

398 Մէանդր գետ 'ի Փռիւգիա, ուր գեղեցիկ են յոյժ կակաչք։

401 Կիպրական կակաչ, Gigante, Ժիկանթ թիւլիփ։

402 Հրանունկ, Ranuncolo. Անեմոն, Anemone.

Ի ձեմ ոտին գարնայնոյ ծիծաղախիտ փըթթեն ծաղկունք,
Եւ քանիք յարտևանունըս Ծաղկեայ բուրմունք խառնեալ:
Հանդէպ միջօրէի կալ արփամերձ առ որմով վայր.
Եւ իբրև այն ինչ յակընթեայք 'ի յայգեստանս եփին ողկոյզք,
Դու ձեռն 'ի գործ յայնժամ արա և ըզկոճղեզս ա՛րկ ընդ հողով:
Ազդ ինքնին իսկ քեզ առնեն՝ ծի՛լս արձակել ահա սկըսեալ.
Այքան սէր 'ի նոսա, այսքան տարփանք բուռնեալ ծաղկին:
Այլ կանխեսջիր քան զաղերս, ծիւրէ անձուկ և ըզնոսին
Որպէս 'ի սիրտ պատանւոյ գութ անմըռէր բոցածաւալ:
Հընգից մատանց չափ 'ի միջի իւրաքանչիւրցըն թող սահման,
Իբր ուլունք 'ի ճատրակի հանդէտ կայծք արկեալ 'ի շար,
Ջև մատուցեալ ախոյենացն 'ի ստուերակերպ անդր 'ի ճակատ:
Ծամծաղ ըզնոքօք 'ի չափ ափոյ ած հող 'ի սփիւռ.
Փխրաժիր ըզգարնայնոյն առնուն անդէն երկնել ըզշուք:
Քաղցր է նոցա առ 'ի սնունդ և եթ սաղմին ծըծել ըզհիւթ.
Ամնոր բերեալ ծաղիկ, ոչ ևս է փոյթ կեալ մարցն 'ի հող.
Հաղիւ ըզսէզ կամաչագարդ ըզհետ ծաղկին 'ի բացընկեցք,
Հրաւէր այլոց տան բուսակաց ծաղկել 'ի կայս անդր յաջորդեալ:
Այն ինչ ամառն յորդաբորբ ըզխոնաւուտ վարէ զգարուն,
Եւ երկուորեակք եթերաձեմք ըզհետ ցըլոյն հասանեն գան,
Հան ըզնոսա 'ի յերկրէ ընդ նորածին սերեալ մանկտին,
Այլ մի զմատաղատունկս յայնժամ 'ի մարցըն բաժաներ.
Ի գիրկըն մայրենիս աներկևանք կան պահպանին:
Ըզմանրերամ կոճղիզաց մինչ չև ըզխնամս ածեալ յամբոկ,
Յիշեցից և ըզքըրքում, մի և սոխիկն այն խոտեսցի,
Ոյր կիլիկեանըն Կորիկոս սընուցանէ ընտիր գըրոհ,
Ի ծաղիկ անուշաբոյր ոսկեփայլիկ և ոսկեհեր.
Այն որ յոգունց ընծայէ ծաղկանց 'ի փառըս գլուըն երանգ,
Եւ զառագաստ արշալուսոյն 'ի շէկ գունակ իւր երգունեալ:
Բարձրակող եղևին փոքու ծաղկանն առ 'ի խընդիր
Կոհակակոծ ընդ արկածըս խիզախէ դիմագրաւեալ.
Նոյն երբեմն 'ի մայրենեացըն տարաղէմ 'ի Լիբանան,

429 Քրքում, Croco, Zafferano, ղ.ֆ. րու:

432 Ջ յոգունս 'ի ծաղկանց, առ 'ի ցուցանել զգունագեղ պայծառութիւն նոցա, կոչեմք քրքմագոյնս. նոյնպէս և զարշալուսոյ ոսկեփայլ պայծառութիւն:

Տիւրացի շղարշից 'ի ներկ դառնայր նովաւ գայր ակաղձուն ,
Կոճղէզ բարերար' որ Ասկղեպեայ հոյզ ախտաբոյժ ,
Աւեարիկ կոչնոց համեմ, դեղ մեցամէս ուտձնոց վանից ,
Եւ անուշից խնկոց բուրումըն պատրաստէ եփեցական .
Դիւրագոյն հոգ խնամոյ հայցեն կոճղէզք վարազատակ ,
Վեհք 'ի վեհից արմատոց հսկայաղինք բուսեալ ծաղկունք .
Բողկաձեւ տակ առեալ հողախըշտիք գան 'ի սերունդ ,
Կեսք ընդ երկրաւ ախորժեն կալ մինչ 'ի բողբոջն անդրէնածին ,
Որպէս հերիկըն Լիւրիկեան և մատուտակ ախտահալած .
Այլք ըղձըմեռն 'ի բուն հրաժեշտ տան 'ի յերկրէ երկակենցաղք .
Բայց բոլորից ոխերիմք են ձըմերունք խոնաւայոյզք ,
Զի բըքայոյզ այծեղջերն ըզշուք 'ի բաց կապտեալ ծառոց ,
Մինչ ահիւ սառամանուտ կարաձմերան խոյս տան յերկրէ ,
Կամ առ սեամըս գարնայնոյ յորժամ 'ի յեղկ օդոց հրաւէր
Ծարաւիք անդրէն հիւթոյ հառաչեն յելս 'ի ձմերոցէ ,
Իբր որթ դիեցիկ 'ի ծուծ ըստեանցըն մայրենի ,
Կամ ընջուղ 'ի գոմոյ դիմեալ 'ի մարդ առ 'ի ճարակ ,
Յարո ժառանգ ազգատոհմին 'ի յարմատոյ ճետ հարազատ .
Իսկ յեղյեղուկ սերմանց սերունդ բերէ գունակըս գեղազան ,
Մանաւանդ ուր երփներանգք գան 'ի համբոյր միմեանց ծաղկունք .
Այլ յամի 'ի տիս ժամանէ 'ի յերկրորդումն 'ի կուլթս այգեաց .
Զի Տալեայ 'ի հակոտնեայց հիւրընկալեալ ըզգորգինայս ,
Ոչ այսպէս ճոխաճեմ 'ի դրախտըս մեր սիգայր աշուն ,
Եւ ոչ 'ի հուսկ ծայր սահմանաց ձըմերայնոյ տիրապետեալ .
Նա գյոգնազան զերփներանգ տոհմին գըրոհ վըսեմազարմ
Ած սերեցոյց , նախանձելի ամառայնոյ զաշուն գործեալ ։
Ամբառնայ հասակագեղ թըփիկ տըկար յեց 'ի նեցուկ ,
Եւ համակ զարդարեալ 'ի բարդ 'ի բարդ ծաղկին 'ի հոյլ .
Յօրինէ մանրանըկար անտառախուռըս ծաղկեղէն .

445 Հիրիկ, Iride, սուսամ չիչէկի ։ Մատուտակ, Peonia, շագայըք . որ և 'ի դեղ պիտանի է ։

455 Մանաւանդ գորգինայք սերեալք 'ի սերմանէ փոփոխեն զգոյն և զբարդութիւն . վասն որոյ պարտ է արմատովքն պահել զճետ նոցա , իսկ սերմանք յոգնասերել զտեսակս ։

458 Տալեա եբեր յԱմերիկայ զգորգինայս , Giorgine , վասն որոյ կոչին և Տալեայք . Dahlie .

Քաղցր է ձեմել ընդ ուղի գեղաշխտակ ցանկեալ նովաւ,
Քաղցր 'ի զընին երկուստեք յերփն երանգոց նոցա զմայլել.
Ի կապուտակ եթերին աստեղք 'ի մի փայլեն 'ի գոյն,
Աղքս աստեղաձև 'ի բիւր ազգի ազգի երանգ.
Ոչ զաստեղաց և ոչ ըզբոյլըս գորգնայց ածել 'ի թիւ,
Ըզնոցայն աստեղադէտ, ըղսայց կարող լեալ տընկաբաշխ.
Անկարօտ տաժանաւոր ռոճանաց բարգաւաճեն.
Նա աւանիկ գարուն թմնուտ գործէ ժողխեալ 'ի նոսա փուտ.
Աստի զգուշացեալ մի յոյժ յարեգ վըստահանար,
Ահեկանըն ձահագոյն նոցին է յելս 'ի ձմերոցէ.
Յայնժամ հանն, յայնժամ 'ի շար սրկ ընտոսա գեղեցկակարգ.
Իսկ մինչ մատաղքն ընձիւղք 'ի վեր գան լըրթատիպ կանաչացեալ,
Դէտ 'ի հինից կայց ըզգոյշ՝ զի մի խուընջայն զաղրաթորմ
Մ'ի մըրջիւն եղեռնագործ ըզխաւարծին կըրծեալ խամրեն.
Բոլոր յոյս աշնայնոյն 'ի սկըզբնաբոյս հող հասակին
Ընայ ակընկալեալ, զարգուն հասակն ածէ անխնամ.
Ոչ այսպէս արքածաղիկ մատուտակին են կոճղիզակք,
Մ'իշտ երկչոտք 'ի խոնաւոյ, յար դիւրախուսք, յաւէրժ մանկիկք.
Յաճախ ըղծոպըն ծաղկեայ երկնեալ ձըգամբ 'ի ծիլ ծայրին,
Ուտիճ անողորմ հուպ 'ի փըթիթս ընա խամրէ.
Ի սոցունց անէրկեան, թէ սէր 'ի քեզ իցէ ծաղկին,
Յըցունըս գարնայնոյ յօրինեսցէ գեղածիծաղ,
Վարդագոյն, ձանձախարիթ և ձիւնաթոյր փըթթեալ ծաղիկ.
Գարնայնոյ և հիրիկըն բազմերփեան յօրինէ զարդ.
Կոճղէզք անգեղեայք, որ ծիթրասինք և որ արջտակք,
Փըթթեն ծաղիկ գեղանի 'ի բիւր երանգըս զանազան.
Ալխոց անուշահոտ 'ի դիցուհւոյն ձօրհեալ Հերայ,
Ադօտ 'ի յայլըս դիւցական գեղոյն նըշոյլ տըպաւորեալ.
Անօսր և աւազուտ հաճոյ բնաւլիցն է տալը հողոյ,
Բոլորից է դըժպըհի, բոլորից զեան գործէ տամուկ.
Լըճաւէրն ևեթ հիրիկ զաղտիւր և զգէջ ախորժեալ վայր,
Ի յակունս Եփրատայ ջրասոյզ 'ի խաղս անդր ընդ երեկ,

473 Սոխն վասն պարտ է հանել զար- մատս նոցա 'ի հողոյ, և 'ի ներքս առնուլ. իսկ ուր ուրեք չիցէ երկիւղ սառուցից և փտութեան, մարթ է թողուլ զնոսա 'ի հող և 'ի ձմերայնի:

496 Լճասէր հիրիկ, Iris halophila.

Ի ծագել արուսեկին նորազուարճ գայ յերևան,
Հարմնամասն 'ի գետափնեայց անտի 'ի բնիկ ձայնեալ բարբառ.
Որպէս կարապ ձիւնաթոյր 'ի կայխտրեան ալիս 'ի լիւղ,
Մ՚երթ 'ի յողող ընկլուզեալ, և վիզ 'ի վեր մերթ երևեալ.
Ամբառնամ 'ի ծիլ երկայն բըմաւք յոխորտ ըզգագաթունս,
Ծաղկախիտ զուարթատերև խառնեալ բազմերփըն ծիածան,
Թուառ ըսքանչելի 'ի փայլ արփւոյն յօրինելով,
Ի զեփիւռ քաղցրասիք ճօճեալ ճեմեալ գեղածըփեալ,
Որպէս վէտ վէտ շողայ գանգրեօք և ծածանի ծով ծիրանի,
Մ՚ինչ վարսից արփենից ցայտեն ցօլմունք ճաճանչաւէտք,
Կամ լուսնակին ըղնդքօք արծաթափայլ ճառագայթեալ.
Այսպիսի ընդ եթեր պատգամաւորն Հերայ Հիրիկ
Գեղափայլէ երփներանգ 'ի թևածելն ամպախաղաց,
Ընդըստին իսկ ծաղկին կոչումն հիրիկ առեալ 'ի ճահ.
Այլ հերիք այսոքիկ մինչև ցայս վայր արբին ծաղկունք.
Ժամ է այլոց արդ յարբուցումն բուսակաց բանալ ջրադարձ.

499 Հարմնամասն, նունուֆար, ոձ. 509 Հիրիկ, ծիածան, պատգամաւոր չէօլ պիւլպիւլի. Տես 'ի Հնախօսութեան Հերայ առասպելեալ 'ի քերթողաց. Հայ. Ա. 177.

## ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՑ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ երկրորդի գրոցս զսերմնածնի ծաղկանց առ հասարակ ։

Նախահոգ խնամք դաստիարակի ծաղկանց, և դժուարութիւն խնամոց բազմութեան ազգի ազգի սեռից նոցա ։

Երկուն ազգք սերմնածնի ծաղկանց . ամանորաբերք՝ որպէս խաշխաշն և բռուկ, և այլն, և մշտակեացք՝ որպէս մանանէծաղիկն, և այլն ։

Յեղափոխել բնութեան երկաքանչիւրոցն իսկ դիւրաւ, և խրատ զգուշութեան առ այս . գլխաւորք 'ի նոցունց առ օրինակէ յիշատակեալ՝ մանուշակն և թարխնջակ, զանգիկն և ոսկեծաղիկ ։

Նկարագիր և զարման մեխակի, և հնարք բազմաթերթ և գունագոյն յարդարելոյ զայն, և զայլս ոմանս 'ի ծաղկանց ։

Զի ինքնին իսկ ծաղկունք առ միմեանս տնկագործեալք առնուն զկերպաց բնութիւն . օրինակ դղմնիկն և որմզդիկ, ցինկ, անթառամն եռագունակ, աստղիկ և աղաւնիճ ։

Այլոց ևս սերմնածնի ծաղկանց զանազան բարք, և այլևայլ ժամ և ժամանակ ծաղկելոյ նոցին . ուր և զծաղկեայ ժամացուցն Լիննէի յիշատակ ։

Գով ծաղկանց առ հասարակ, մանաւանդ շահպուրակին, և խնամ նորա ։

Զանազանակք բարեխառնութեան գաւառաց, և ազդեցութիւն նոցին 'ի ծաղկունս . ուր և ներբող հայաստան աշխարհի, պարծանք նորա, և քաջազունք որ անդ կացին մինչև ցՎարդան ։

Պիտանութիւն ծաղկանց 'ի դեղորայս, և բժշկական հմտութիւն հայաստանեայց . ուր և պատրուսի ծաղկոյ առ 'ի նոյանէ գիւտ ։

Խնամք հոտաւէտ բուսոց . յորոց գլխաւորքն՝ խնկունի, օշնան, անանուխ, կենեղուան, մակերան, ծոթոր, ռաւհան և զուֆրակ ։

Ակնարկութիւն առաջարկութեան յաջորդի գրոց, և յորդորակ մշակութեան ծաղկանց ։

### ՎՐՈՒԺՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Ի ԶԾԱՂԿԱԶԱՐԴ ափունըս քո այժմիկ, Եփրատ, առից երգել.
Ուր անեղծ դեռ ևըս հետք աստուածատունկ դրախտին պահեալ,
Ինքնեկ ընդ հովիտս ամենայամ ծաղկեն բուսանք։
Հողիդ այրարատեան, որ բոցեղէն ձօձեալ սուսեր՝
Պետգերիս տակաւին ձեռն ընկայրօքդ առեալ 'ի պահ,
Թոյլ տուր ինձ, և մատեայց ըղձեղ և զբարըս նըկարել
Իծաղկանց՝ որ ընդ ոտիւք քովք յօրինեն գորգ երփնատիպ.
Նկարել որքան այժմուց բաւէն դրախտից մերոց 'ի զարդ,
Որքանեաց զօրէն 'ի խնամ մահկանացու ձըգունք տարտամ.
Զի ոչ ընաւիցըն գոն հասու միտք 'ի զլմբաղ դատապարտեալ։
Թէպէտ այնչափ չննեական կարգեալ վարժեարք և բուսարանք,
Իզորնկոց տարաշխարհիկ հիւրընկալէն սեաս անծանօթ,
Իդամական արմաւենի, չէկ նարընջեաց տոհմ յօդնաղար,
Իւրնիկէնիք սաբէականք և հակոտնեայց փայտից գըրոց,
Իսարշափուն բանջարոյ և արմըտեաց ազինք յոլով,

Որ 'ի ձմրան անդէոյ և որ 'ի մնունդ մարդկան 'ի ձմեռ ,
Եւ 'ի քարից անդր 'ի հողմոց բոյլք ծաղկերամ համախմբեալ ,
Սակայն ոչ ինչ աւելի ջան և արուեստ մեղ հայթայթեն ,
Քան որչափ լեռ՛ 'ի կղզիս ծայրածաւալ ծովու մեծի ։
Ընթիւք 'ի կապուտակ դաշտ եթերին աստեղք ցանեալ ,
Ընթիւք 'ի հովիտս խուռներամ ծաղկունք սփռեալ .
Իսկ քոյդ դարափն , ով Աֆրատ , ընտրեցին գոյր ապրնջական .
Ուստի չեւ ընկերգմահայրըն մշակաց արտաքս անկեալ ,
Հրմուտ բարուցն իւրաքանչիւր՝ յանուանէ զմէն մի յորջորջէր ,
Իբր բղբոյն աստեղաց կոչէ հրամանն արարչական ։
Հագիւ այժմիկ մեղ մատեանք փոքր 'ի շատէ բաւեն պատմել ,
Նուագունք ծանօթ բուսաբանին , և նուաղագոյնք գոն մշակի .
Մոռացօնք աստի ոտիս և ադիգար անտի երկիր
Ընախմէին բաստի , աւա՛ղ , շորթեն 'ի մէնջ կապտեալ նրբեհ ։
Ընդ այսոցիկ 'ի պայքար մտանել ընդոտ է մշակի .
Քեզ մատենիկ յուշարար ցուցցէ զսերմանց արկանելոյ
Եւ զբաշխից բուսոց զատեղս , համայն և զերկ հողավատակ .
Օ ինչ ձմերային առնոց կանուխ խնամք 'ի ձմռ են նախահող ,
Եւ որ 'ի նոր գարնային մինչ ծաղկազգեստ շրպարի մարդ .
Օ ինչ մինչ արտունձ խառնէ զերգս ընդ շրկահրն կոր գերանդւոյ ,
Եւ զինչ 'ի կութս ողկուզաց յորժամ զըւարթ ձեռն այգորդ .
Ամս իւրաքանչիւր հայցեացէ զխուրն 'ի քէն խնամ ,
Եւ արդարակ բաշխեալ վաստակք ըղտաղոտուկ հոգս ըախոփեսցեն ։
Որ 'ի սերմանց սերմանին մահկանացուք յաջնային բոյսք ,
Ակսոց սերմամբք եւեթ զարմ յոգնասերի յաւերժացեալ .
Որպէս խաշխաշըն գանգրագեղ նրւիրականըն Պեմետրեայ ,
Թոլմբրագեղ քնահատին և հինենեալ հաղոյ դիւրին ,
Որում անձկով ծաղկաքաղ գընայ գիշեր շուրջ 'ի խնդիր .
Եւ կատարրբունկն աքլորական բոսորերանգ արմնաղեղ ,
Ի մանրերամ ծաղկին 'ի հոյլս բարձրավիզ գոռոզացեալ ։

31 Թէպէտ և հմուտ ևս ոք իցէ խնամոց և մշակութեան ծաղկանց , սակայն առանց յուշարար մատենկան չկարէ գործել զամենայն բաս ժամանակին . զի այլ և այլ ժամանակք են այլի այլի ծաղկանց սերմանելոյ և բաշխելոյ , և հանելոյ կոճղիզաց յերկրէ և անդրէն տնկելոյ , և այլ ամենայն մշակական գործառնութեանց ։

41 Խաշխաշ , Papavero , որ և մեկոն՝ յորմէ ափիոնն կազմի ։

44 Բրուկ աքլորի , Cresta di gallo , հոբօզ Խոբօզ ։

Զոյգ թէ ոչ խնամով ըզսերմն 'ի յոյս զարմին անբարիցես,
Ընձեռ և անպաւակ կորընչին մարքըն վաղամեռ.
Իսկ այլոց ընդ երկրաւ նիրհեն արմատք վերակենցաղք,
Կորկնակի առեալ սերունդ՝ այլ վաղվաղակ 'ի բողբոջից.
Յաճախ-արբունքն անմոր լեալ 'ի փըլթիթս ապաժամն,
Ինքեանք ըզփառըս զարմին պահեն ծաղկամքըն մայրենեօք.
Որպէս հերուեան ծիրանագեղ մատնեծաղկին արմն 'ի թըմբիր,
Չև 'ի հրաւէր զարնայնոյ նորեկ սերմանցն հասեալ 'ի տիս,
Ինքն 'ի յերկրէ արտաւլաղիկ ճօճմնակէ պերճ ճեղենակ.
Այլ ոչ ընդհատ են խնամոց կարօտ և սայք են 'ի սերունդ.
Զի լըքեալ անմեկին բողբոջք 'ի բունըն զատամեալ,
Գըստերք մատաղօրեայք ընդ պատաւ մօրըն մահանան,
Կամ 'ի գուեհիկ խառնաղանճ խորթանայ ազգըն քաջատոհմ.
Ի քաղաքն համբաւատենչ յեօթանց բըլրոց գեղապարեալ,
Ինձ ձեռատունկ ծաղկէ դարաստ, թանան ալիք զայն Տիբերի,
Կապիտոլին սարաւանդ անդր 'ի հեռուստ ակնարկելով.
Ու վեհավայր տաճարին առ 'ի կուսէ ժանտ հիւսիսոյ
Պատըսպարէ հովանի, կանխաժաման գործեալ գարուն.
Հունձք են արդէն հընդերեակ՝ մանուշակաբեր անդամոր արտ
Փըլթթէր 'ի գոյն լըրջակապոյտ ծաղկունս 'ի թերթ խաւ 'ի խաւոյ.
Ի հրաւէր այգաստեղն ընդ ապակեակըն կիսաբաց
Բուրէր անուշահոտ զեփիւռ 'ի ներքս ըզմայլական.
Թէպէտ ցածունք անթխանդք ընդ սաղարթիւքըն թաքչէին,
Սիւք քաղցրածաւալ մատն և գուշակ լինէր նոցին.
Այլ աւաղ, տակաւ ըզզեղ և ըզբուրումն 'ի բաց կապտեալ
Սերունդ օտարախորթ ըզմայրենին անչըքեաց տիպ.
Ըզփորձ 'ի ըղձընդակ տուժիցն առեալ՝ պատուէր քեզ տամ,
Մ՛ի խնքնահրաման ներել նոցին տիրել ընդ արտ.

48 Ցոգունք 'ի ծաղկանց թէպէտ և բերեն սերմանս, այլ 'ի սերմանց անտի ծնեալ բուսակք՝ դժուարաւ 'ի միասեամ ամի ծաղկեն. վասն որոյ բնութեանն նախախնամեալ զայնպիսեացն պահէ և զարմատս ընդ երկրաւ, և յարմատոց անտի սեբեալ բաժանին և այլ արմատք՝ որք վաղ քան զսերմածին արմատս ծաղկեն ամի ամի։

52 Մատնեծաղիկ ծիրանեգոյն, Digitalis purpurea.

70 Ցեղյեղուկ քան զամենայն ծաղկունս է մանուշակ, միակ արմատ պարզ բուսական է զբազմութիւն բարդից յիւր բնութիւնն յեղաշրջել, մերձ առ նոսին բուսեալ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և եթէ թողցին բարդքն անխնամ, և ոչ բաժանեսցին ամ ըստ ամէ, և կամ եթէ դէթ ոչ հատցին թելքն՝ որովք կապակցին ընդ երկրաւ, փոխին 'ի պարզ։

Այլ քեզէն ըզբողբոջս 'ի յեղկանալ ամարայնոյ
Ի բաց 'ի մարցըն բաժանեա, ըզնուրբ սաղխըն կլորատեալ
Իւ ընդ խրեարըս վերունն ընդելուզեալ շըղթայաշար։
Անկցին քաղահան պարգք 'ի բարդիցըն տարագիր,
Մեա 'ի վատթարըն կոյս 'ի ընէ գտանի ընտիրն առ 'ի թաւալ,
Ոչ ինչ այլազգ մանկլաւիկ յուսոյն 'ի սէր զխրամախանձ,
Ո՞չ տեսանես երբ յեղյեղուկ թաւրընջակըն այլայլի գեղ.
Դորոյն ծաղկանց գարնայնոյ կարմիր և չէկ առեալ փըթիթ,
Եւ 'ի գիկ խարտիշագեղ բոլորածիր ժապաւինեալ,
Թէ միակ մերձ իւր յանկարծ տեսանէ պարզ ձօձեալ ծաղիկ,
Բերէ նախանձ ընդ յոյժն՝ վառնէ ըղթերթսըն բարդ 'ի բարդ։
Ո՞չ 'ի զանգիկն իսկ հայիս կապուտերանգ և ձիւնաթոյր,
Որ ըղթոյրս յեղյեղէ, երբր թերթից զըրժէ զարմին։
Զոսկեծաղկին իսկ յողդողդուն բարուցն առի յաձախ ըղփորձ.
Յոգնազարմ և բազմաթերթ ծաղկեր առ իս տոհմիկ գըրոհ,
Խուռներամ 'ի բոլորիցն յօրինեցի փունջ երփնատունկ։
Յառաջնումն աշնայնի գործեալ տեսիլ զըւարձընծայ,
Թողուէր ձենաղն 'ի ցօղ արփւոյն շըրջել ընդ զըրախտըն սիրամարգ,
Խըրձացեալ կարակնեալ բազմաձեմուկ տոհմոյն 'ի գեղ։
Դարձան զըւարթ այգեկութք, այլ պատրեցին ըզյոյս անփորձ,
Պարզեալ թերթիցն, և երանգոց այլագունեալ ոսկեծաղկին։
Զի զմանունըս թըւեցեմ, մանունքն 'ի թուոյ են աղբատանք.
Ի զըրախտ փըթթննազարդ երբ օրհորդ ընդ այգն 'ի ձեմ
Առ մըրգուզս 'ի ծաղկանց յապուրանկի առեալ դեգեր,
Զամնիւս ընտրանաւ հաւաքելով յօրինէ փունջ,
Հարևանցիկ նայապէս ընդ մանրերամ ծաղկունս անցեալ,
Ըզվեհիցն աւանդեմ զերկյագոյն լինամոյ նըւէր։
Չիք ոք 'ի նոցունց գոհար վարդին զուգակըշիռ.
Մեխակին ևեթ պահին փառք ընդ նըմա գալոյ 'ի վէգ,
Յերկբայս երկուստեք մնալով մարտին անպարտելի։
Գունազեղք երկաքանչիւր վայելչահիւսք և քաղցրահոտք.

80 Ըստ օրինակի մանուշակին փոփոխի բնութիւն և այլոց համազգի ծաղկանց առ խրեարս տնկելոց. զի բարդից առ պարզս կալով առ ընթեր, նուաղին թերթք. նոյնպէս և երանգոց պատահին յեղմունք՝ այլ և այլ գունոց առ խրեարս ծաղկեալ։ Թաւրընջակ, Primula, գուփէ ւիւէ։ Ջանգիկ, Campanula. Ոսկեծաղիկ, Crisantemo.

Այլ մեխակին արեւկան զերդ քաջալին գեղ պարմանւոյ,
Նա զգայութեանց հրզօրիչ խառն խմին բոյր բուրխձնիկ։
Ի յերկին հարիւրեակ տեսի զգեղոյ նորին յեղմունս,
Կարմրերփեան եւ խարտեշ, ծիւնակերպիկ եւ չիկորակ.
Նաեւ յոգունք իբր 'ի ճարտար գըրչէ կիտուած նըկարակերտ,
Կամ շուրջ բոլորածիր ածեալ թերթիցըն ժապաւէն։
Յառաջան հայցէ վաստակ, յարատեւակ սիրէ զըգուանս.
Այլ ոչ ընդ երկ քոյին տացէ քեզ 'ի փըթթմըն զըղջանալ.
Նա բնաւորեալ թէպէտ զիրկ 'ի սերմանէ ազգըն տոհմիկ,
Կըրկնակի փառք զարմին արձանանայ յաւէրժակայ։
Այն ինչ գիշերք յաղթանակել ըսկըսանին անդրէն տուընջեան,
Զեւ կըռչածայն կըռընկաց հընչեալ յամպոց կերկեր բարբառ,
Յարմատոց մատաղամարց չաչս 'ի սերունդ տընկագործեա.
Իսկ ըղմաց պառաւանց կըքեա զուղէշըս տաշտաթաղ,
Մինչ այն ինչ խարտիշագեղ ձեմի ընդ անդըս Պոեմոսէ.
Կալցի երկձիղ ընկձեալ երիթ զաման 'ի բուն զայն ընդ երկրաւ,
Մինչեւ հերք աղուամաղք ըղձեղքելով ձեղըն արձակին.
Նա այնուհետեւ շըրջաբոլոր գըղձամբն 'ի բաց,
Նորատունկ քեզ պատրաստեալ ծաղկաբերել 'ի գարնայնի։
Բատեղնի ծիլ ծընգակապ, եւ նուրբ առ ծունր խըրաքանչիւր
Նըկուստեք մահկաբար ոլորակէ զոյգ տերեւիկ.
Յար խնամեա, յար սըրբեա զգեղնատերեւն եւ զգօս 'ի բաց,
Նըղեգնեակ 'ի նեցուկ առ դիւրաբեկ ցօղունս ածեալ,
Ոզորակապ կալ ըմբերձիկ զանխիքնադօրն յոտընկելիս։
Նոյն եւ յերկուսնըս ծաղկին պահանջի հոգ ըզգուշութեան.
Կոճոպեա ըզկոճակըսն չըւայլեալըս խուռնախիտ,
Զի մի զիրերաց ծըծեալ ըզհիւթ աղաղեսցին,
Յաճախ եւ մայրենի կենացըն լեալ խարդաւանակ։
Զեան կոկոնից տեղատարափք, զեան բոցակեզ գործէ արփին.
Նա բաղում ծաղկադարմանս ընդդէմ աղունցըն քօղարկեալ
Տեսի զնոսա ամրածածուկ իբր օրեորդ 'ի նուրբ 'ի շղարշ,
Նայուիկ եւ 'ի ճըճեաց պատըսպարեալ աներկեան։
Մէնինին Նըտրուրիա զանըրւատունկն ածէ զըրոհ.

117 Բողբոջք կամ ծիլք մեխակի որ- անվրէպ, եւ ծաղկին յառաջիկայ առա- կեալք 'ի վերջ սեպտեմբերի՝ արմատանան բայնի։

Ի՛զմէն մի 'ի ծաղկանց փունջ 'ի յոգունց զոգցես կապեալ,
Եւ հիւսք բարդ 'ի բարդ գեղազանգուր թերթից նոցին
Ընդարոյքք 'ի պարուտակն հերձեալ վիժին անկերպարանք ։
Դու զմեղինաւ ըզմիջնըն հատ շուրջ 'ի քառից զրծեալ կողմանց ·
Որպէս մարի ձագուցն 'ի յելս օդնէ բեկեալ կլոտցան ըղձու,
Ափբէն վառեակք ընդ մայրենի թեւովքըն չև թեւաբուսակք ·
Այսպէս կոկոնքըն զայեկեալք ծնանին անեղծք գեղածաղիկք ։
Վ՛աղցը է զմանուկ չըքնաղ 'ի գիրկըս տեսանել մատաղամօր,
Վ՛աղցը ըզմեխակ զունեան 'ի ծիլ կանաչազեղ ձօձեալ ծայրին ։
Մանաւանդ մինչ զերանիկըն զայ 'ի ծնունդ փըլթեալ ծաղիկ ·
Յայնժամ 'ի ծմակ ած ըզփափկիկն, յայնժամ 'ի գիր հողմախաղաղ,
Եթէ յուշիկ հրաշանալ 'ի դեղ ծաղկանն ըղձանայցես ։
Խրատ քեզ առ այս ընծայեմ տածել 'ի բոյն զայն խեցեղէն,
Գրխաւակիր ըստ յեղյեղուկ բարուց երկնի ձահաւորեալ ·
Յաճախ և առ ձըմեռնաճոխ եղև նոցին մահահրաւէր,
Ընխախուսոս 'ի բացի զնոսա զրաւեալ անպատըսպար ։
Այսցիկ թէ սուղ կացցես խնամոց տարփողըդ մեխակին,
Ոչ զօտարին խանդայցես ըզխընկահոտ պըձնեալ ծաղկոց ։
Իսկ յանկարծ եթէ սպառի քեզ երփնազոյն զարմ բազմաթերթ,
Ի՛զմօրն համագոյից ժամ է յայտնել աստ ըզգաղտնիս ։
Նըրբաթելս 'ի ծոցին կըրէ ծաղկանն ազգ սինըքօր,
Ի մանրամաղ մածեալ փոշի հանգոյն թեթև թևոց թիթռան ·
Փոքրիկ 'ի միջի անդ գլխակացն է պարուտակ,
Ուր յոյս զարմին անկորուստ դարուց 'ի դարս յաւէրժանայ,
Յանտոհմիկ 'ի մօրէ բերեալ զաւակ ազնըւատոհմ ։
Զի սրխակին հատեալ գէսք և 'ի կապիճ յեռեալ կարմրոյն,
Կարմրախայտ 'ի սերմանց անտի ծաղկունքըն սերանին ·
Իսկ յոգունց յեռեալ 'ի մի վարսք 'ի կապիճ, ո՛ հրաշք անճառ,
Խառ 'ի խառոյք նըկարէնք և զանգրազեղ ծնանին մեխակք,
Աւէ զգուշեաւ ևեթ վարսիցըն փոքրելոց ունիցիս պահ,
Զի մի զփոշին բեղնաւոր հողմ կամ ձըձի զողանայցէ ։
Ի՛զնոյն և յայլս 'ի ծաղկանց տեսի 'ի կիր արկեալ արուեստ,

157 Ի բազում 'ի ծաղկանց պատահէ բաղդրութիւն երանգոց խառնիւք բեղնաւորական փոշւոյ նոցա ընդ իրեարս · այլ 'ի մեխակն յառատութենէ փոշւոյն այնորիկ յաջողէ և բազմութիւն թերթից ։

Մանաւանդ 'ի հրաշունկըն բազմերփեան և յանեման,
Եւ 'ի բուրեան շահպուրակըն յաքքունակերպ 'ի ձնղենակ։
Հողմ՝ նիքնին եղեռնաւոր ոչ գոյն ուրեք բարերարեալ,
Այլայլախառն 'ի մի ածու փըթթեալ ծաղկըն եկաց Հիմէն.
Այլ յաճախ 'ի հողմնավար խառնից անտոհմ սերեալ զաւակ,
Աստի 'ի ծաղկերամըն սերմնածին բարք յեղյեղուկ,
Թէ ոչ ծածկեալ 'ի նոսին կայցեն և այլ ինչ ախտարակք։
Այն ընդ ածու անկ ծածանեալ 'ի գոյնըզգոյն դըլֆինածաղիկ.
Արկէ կարմիր կապուտակ խայտանըկար և լուսաթոյր,
Բազմաբոյլ ծածկեն ծաղկունք ըզնըրբաստեղըն ծիլս հանակ,
Յարդդող ծաղկեղէն գործեալ 'ի դըրախտ քո երկնատիպ.
Եւ ոչ այլում գոյր ծաղկան վայելչագոյն տիրել ընդ արտ,
Թէ զբուրումն ընդ գեղոյ բերէր բուսակն այն զուգակիր։
Սակայն թէ ոչ քեզ այլ ուրեք երանգ անձնիւր ըզընիկ տոհմին
Ինքնուրոյն գըլթակիրեալ պահպանեսցէ զարմ և զաւակ,
Պատրեսցեն ըզայս քոյին յողդողդ սերմանքն այլասերեալ։
Զէ զյեղյեղուկն յիշեսցէ քան ըզծաղկունս համօրոր,
Զորմըզդիկըն գեղանի՝ զոր ոչ թիթեռն իսկ նըկարէն
Եւ ոչ բանից հաւուց թևք զըջէն 'ի գեղ գունապաճոյճ.
Յար 'ի յարփին շըրջեալ ըզգէսն, յար 'ի յարփւոյն շողեալ 'ի փայլ,
Զերկ 'ի բուրից մանուշակըն՝ գերափայլէ յերփն երանգոյ։
Զէ զցինկն երկչոտ յոր 'ի գալուկն հարեալ յաւէտ սուր գերանգուոյն.
Զէ զանթառամն արփիագեղ՝ վերածայնեալ եռագունակ,
Զանծաղիկըն վարսագեղ՝ ծաղկաձևեալ բոցատերև.
Զէ և զաստղիկն՝ իւ արտիկ պըճնի աստեղբք երկնահանգէտ,
Կամ զաղանձիձըն կարմրերփեան հիւսկէն զերկրաւ ածեալ դիպակ,
Եղինձաղ գարնայնոյ յօրինելով նըկարակերտ։
Ու այնքան յողունք ընդ օդըս թևածեալ պարէն թըռչնիկք,
Որքան 'ի դրախտ սերմնածինք ամի ամի ձօձէն ծաղկունք.
Կէսք գետնանախանձք, են որք ընդ ոտըս տողաղնացք.
Ամն 'ի խեչակ իւր սիրատարփ, այլ որ 'ի քնիկ վայրն՝ ուր ծընեալ,

171 Շահպուրակ, Viola, մէնէքշէ։
177 Դելֆինածաղիկ, լտ. Delphinium, իտ. Spironella, հէզարէ։
187 Որմզդածաղիկ, լտ. Flos Jovis, հէր. ձայի ճինէսէ։
192 Անթառամ եռագոյն, լտ. Amaranthus tricolor.
194 Աստղիկ, լտ. Astra, ամկ. աչուկ։
198 Աղաւնիձ, իտ. Verbena.

Ծփուրն երկաքանչիւր 'ի տարփաղեացն քեց և մոյք ,
Իբր ըղձեղուեան հայրենասէր սահեալ նըժդեհ տարաշխարհիկ :
Կեաք արփիատենչք , այլք հովասուն սիրեն ծըմակ .
Մըտաղիւր 'ի գնայըս Ջուրց բարդաւաճէ հրաշածաղիկ ,
Ընձեռագործ փունջ 'ի ընէ վերաբուսեալ սաղարթագեղ ,
Ըփնածիր առ լըճակաւ գեղապարոյր գործելով զիկ .
Փայլէն կարմիր և սպիտակ ընդ ծուփս ալեաց թերթքն 'ի ծածան ,
Նոյնքանիք ընդ ալեօք կախեալ 'ի լոյծ հայելւոյ փունջք :
Իսկ ընդդէմ երաշտասունկըն սակաւիկ ախորժէ ումպ .
Կեաք 'ի բուրումն առանց գեղոյ , այլք 'ի յանբոյր պանծան 'ի գեղ .
Ոչ ինչ այլազգ բաշխեալ 'ի ընէ գեղ օդայնոց և դայլայլիկ ,
Գեղգեղէ անգեղեայ սոխակն 'ի լուր ըղմայլելի ,
Մինչ սիրամարգ գեղգեղափայլ չիկնեալ ընդ կոկչ իւր ամաչէ :
Յօդունք ծաղկէն գարնանաբոյրք , այլք մինչ տալին մըրգովք գեղու ,
Ոմն այգածաղիկ , այլ ոք փըթթէ գիշերազուարճ .
Ընդ միջօրեայ ճառագայթիւք այլ ոմն ըզգեղ իւր հովանեալ ,
Եւ պահ իւրաքանչիւր զիւրն 'ի փըթիթ զերկն ընծայէ ,
Ծաղկեղէն հրաշակերտեալ գործեակ ժամուց քեզ ցուցական :
Ոչ ըստուեր ատոխձանաց զօրակըշիռ չափեալ արփին ,
Եւ ոչ աւեղն անուահոլով զուգամանակ առեալ շըրջան ,
Գուշակէր Լիննէի մեր տիւն առնու ձեռ ընդ եթեր .
Ոչ ուռն 'ի զանդ թօղեալ հընչիւն աղդէր ըղձաշ և ըդդադար ,
Եւ ոչ Ջրագող , կամ բիւրեղ ընդ աւազոյն ըղժամս հոսեալ .
Այլ ըստ պահուց կարգեալ ծաղկունք որպէս մանկտի 'ի մահարձանս ,
Ըզդ 'ի փըթիթս առնէին զայգ և ըզծայգ և զփայլածու ,
Զարեւածայր և զարփող , ըզշանթակող և ըզհրակաթ ,
Եւ զբոլոր իսկ ըզհանգոյցս արփիաձեռն քառածիրց :
Բաղդը է ձեռեղ ընդ ծաղկոց , քաղցը ըզբուսակըս բուծանել .
Ոչ ինչ նըւազ գութ 'ի սիրտ յուզէն ծաղկունք մատաղերամ ,

204 Հրաշածաղիկ կամ հիանածաղիկ , Maraviglia , [illegible] :
209 Երաշտասունկք են սեռք ծաղկանց՝ որ դրեթէ 'ի խոնաւոյ օդոյ կեան , յանարոյն իսկ դուն ուրեք կարօտք ջրոյ · զորոց 'ի յաջորդ գիրս :
221 Արդարև Լիննէոս 'ի փթթելոյ ծաղկանց գուշակէր զժամս տունջեան . զի են ծաղկունք՝ որք անվրէպ 'ի նոյն ժամս փթթեն :
223 Ջրագող , յն . Clepsydra , ժամացոյց նախնեաց 'ի ջրոյ , ըստ օրինակի աւազաչափ ժամացուցին կազմեալ :

Քան ձեռասուն անասնեակ, քան քաղցրախօս թըռչնիկ գերեակ.
Այն ինչ տըխուր տխրէ ձըմեռն 'ի բաց ըզգեղ կապուտեալ ծառոց,
Եւ ծածկէ ձիւնախառաղ գերկիր անշուք և տարազարդ,
Յայնժամ յաւէտ ցանկալի, յայնժամ յորդոց դըրախտ ծաղկաւէտ.
Զուր ճարտարին ձըգնի վըրձին քաղցր 'ի պատկեր աչաց ըսփոփ.
Ո՛ր Զեւքսիս, որ Ապելլէս ըզգեղ ծաղկանս գիտէ ստուերել.
Այլ ընդ այգն 'ի ցօղալից հմա 'ի դըրախտէ վարդ կարմրերփեան,
Եւ առ կեղծիսն մատո 'ի նմանահան գըրչէ գեղեալ.
Գիտակն անհոգի թուեսցի տիպարըն քեզ տըմոյն։
Գարուն զըւարթ, դու զտխրութիւն ձըմերայնոյ փութա սփոփել.
Ծաղկունք բանտարկեալք, արդ ելէք պըճնել ըզդըրախտ.
Ո՛հ, ընդէ՞ր ըզձեզ Վիրգիլ ոչ ժամանեաց առնուլ 'ի նուագ,
Մերձ 'ի կէտ վաստակոցըն զառագաստ իւր ամփոփել
Եւ առխեթել 'ի ցամաք ըզլաստափայտըն փութացեալ.
Երգս ըզձէնջ արժանաւոր նըմա եւեթ գոյր յօրինել։
Նա ձեւ ըզձեզ անշուշտ առնոյր ըզծաղկաքաղն 'ի գեղգեղել,
Զի բուրումըն ձեր անոյշ գըտեալ ըզմիտըս պարարէ,
Խանդ 'ի քերթողն, ով ծաղկունք, և ախորժակըս ներշընչեալ.
Վարդ մանաւանդ, շահպուրակ, զի զքէն խիկ պարտ է ինձ ոդել։
Յորչափ դըրախտք Այրարատայ 'ի շող արփւոյն ծաղկաւէտին,
Եւ Եփրատ արբուցանէ ըզբուրաստանս Հայոց մեծաց,
Դու 'ի ծաղկոցըս խընդրեսցիս, դու ծաղկոցաց յաւելցես փառս.
Համափիւռ բուրէ 'ի քէն հոտ անուշից շուրջ ծաւալեալ,
Ուշաթուրմ շընչեն այերք, համայն ուրեք գըրգին ըռնգունք,
Եւ մանկունք և օրիորդք շըրջին ըզհետ քո ծաղկաքաղ.
Որ քաղէքդ ըզշահպուրակ, եկայք խնամել զայն ուսուցից։
    Այն ինչ տերեւք ծառաստանին 'ի զուարթ գարնան առնուն պըտկել,
Հատընտիր պատրաստեա սերմն, և արկ կանխիկ 'ի հող փափուկ.
Ի յոգունց զայն նախ 'ի թուրջ տեսի արկեալ 'ի մխրաջուր.
Ուռձագարդ և բազմաթերթ անտի սերեալն ածէ ծաղիկ։
Մի բուրումն է բոլորից, այլ անձնիւրոց գեղ զանազան.
Ոմն ալէծաղիկ, ոմն 'ի գոհար վարդից 'ի վառ.
Կէսք 'ի գոյն կարմրերփեան, այլք նըկարէն և դեղձանիկ.

241 Վիրգիլ. Մշակ. Դ. 116։

Բուրմաւք խառն 'ի խաւոյք, ընաւից համգոյն է խնամ և հող,
Բայլ ոչ նոյն բոլորից արբունք ծաղկին ժամանակեալ.
Այն որ փրթթեն դեռաբուսիկ՝ զամառն 'ի բուն ծաղկազուարձք,
Բայց երկարաւլիցոք երկնեն միակ պերճ ձեղենակ,
Ակնազդաւք ընդ ծաղկին յերկայն երկանցըն մահացեալ.
Ա՛ւհ գեղեցիկ, այլ ո՛հ զի ոչ ձրգանոյն անմահ մնան արգասիք,
Ըզծաղկընկեց փառաց պատկեր զրոշմեալ 'ի դէմըս բերելով.
Սակայն համբաւ յուշիկ նուաճեալ ահէ և անոր խոկ քան ըզմահ.
Այլ ընաւից ցանկալի միձեղենիկն է շահպուրակ
Քան ըզգրոհ անձունաձեղ միշտափրթիթ զուարճացեալ.
Բայց ամօրուս զարմին ձեա 'ի սպառըսպուռ կորընչիցի,
Աթէ գեղոյ զպխոանին ոչ առնիցես նախամեծար,
Թէ ոչ մարգն անտոհմից երիցագոյն տարցիս խնամ.
Զի համօրէն զոյժ 'ի ծաղկունս վառնեն ըստերջքըն բազմաթերթք,
Պարզկցն ևեթ անգեղեցյց բերեալ ըզսերմն 'ի յոյս ազգին.
Մօտիկ սորին աղաւաւ 'ի տընկախնման աղատախումբ
Փայփայեա փափկասուն զոր միանգամ ընտրես 'ի մայր.
Մի՛ զբոլոր բուռեղունս առ 'ի սերմնդ թողցես յարմին,
Ի բաց հատ զաղաղունս, նուազունք 'ի նմա մնասցեն սերմունք,
Զի մի զաւաղկին 'ի ծուծ հիւթոց քաղեն զօգիս,
Իբր երկուորեակք ըզմայրենի կախեալք զըստեանցըն դիեցիկք.
Իսկ չիկոլակ շահպուրակին յառնեն 'ի ձղացըն պայազատք,
Ասամակին մերձ 'ի մաւտս առոշողի տընկագործեալք.
Բայց թէպէտ զայս ամենայն խնամս 'ի կիր արկեալ ծաղկանց,
Սակայն ոչ ընդ համայն կողմանս երկրի կեան բոյսք համայն,
Այլ ոչ նոյն ընդ համար երկնաւ չափի նոցին կենցաղ.
Զի երկեամ 'ի յեւղանեան աճէ 'ի բլուրըս շահպուրակ,
Զի երկեամ ըզձեղենակ իւր երկնելով գեղածաղիկ,
Այրեմնեակ 'ի մի ստեղն 'ի չար արկեալ գոհար ակունս.
Ի դաշտ լայնատարր՝ ուր բատաւիկըն գու բնակէ,

265 Շահպուրակք բազմատեղունք սերմանեալ 'ի գարնան, սկանին ծաղկել յամարայնի. իսկ միատեղըն սերմանեալ 'ի գարնայնի՝ աճէ զամառն 'ի բուն, և 'ի միւսում գարնան ծաղկեալ և մեռանի. և չէք խոկ սերմն բարդ շահպուրակին: Նա մանաւանդ յեւղանեան բլուրս յերկրորդում գարնան ծաղկէ, զերկեամ աճեցեալ անծաղիկ. վասն որոյ և հրաշագեղ բերէ ձեղենակ բարձրաբերձ բազմաթերթ և ատամածաղիկ.

Ո՜ր բաղխեն ըսպառնալից ալիք ծովուն գերմանական,
Բազմատեղեան յողնաթերթ և բուրաղարթ փըթթեն յակինթք.
Եւ կակաչ երփնուռնակ գունապաճոյճ Հանդըրձն 'ի ծոց,
Ափչէ առ Տիբերի ընդ դէմն յանկարծ պլպղունեալ.
Ծովանաթոյր ըղծաղկունս երփնեն Պանգեայ ծուփք ոսկեբերք.
Սատակաբոյր խընկէ զնոսին գետոց արքայն Եւրիդանոս:
Անց ընդ Ապենինս, ատոր փըթթեալ զայն ծաղկաւէտ
Անտի տեսցես մերձ 'ի յԱլպս չև խակ խաղացս 'ի բոյս անկեալ.
Ոլեանդր յարատերթիթ զամառն 'ի բուն յայսկոյս ծաղկեալ,
Յամէ յայնկոյս մինչև մընչել գիշերախօս անուշ ծըղրիթ,
Ի ծարաւուտ Կիւկլադայս նուաղին ծաղկունք երաշտահար.
Ոչ ցօղ քաղցրածաւալ, ոչ թօնըմկէցք զըւարթարարք,
Եւ ոչ աղբիւր զովացիկ մեղմէ զՕ ընկէն անդ բոցակէզ.
Այլ անխու ձըրմընչաձայն բաշխէ արբունն յամի 'ի հոլով,
Մինչ զաչացու յածի զըրասատ 'ի հետ անեղր առ ջըրհորով.
Սակայն Կիլիս 'ի հատ անոյշ ծաղկէ անդ մերձ յեղեան ալիս:
Իսկ վըրկանիկք 'ի տերևոյ ծորէն անոյշ բոյսք օշարակ,
Մինչ այն ինչ ցօղալից վարսիւք հասեալ Ձեմի անդ այգ:
Ի՞բր այբարատեանդ ըղըքէն աշխարհ լըռեցից սար,
՛Նախանձըրդ ծաղկոցաց և նախէից բուսոց դայեակ.
Ոչ աւանեան յուռթի պարտէզք և այգեստանք ողկուզաւէտք,
Եւ ոչ երեկորնեայքն ոսկեխընձոր վայսից բերըկք,
Ոչ քեզ դըրախտք Բաբելոնի կախաղանեայք հաւասարեն.
Բամբիշն ատրնական առ սէր քոյին լէք զայնուհի,
Պերճանակ 'ի հոլխուլս քո ընտրեալ ամարանոց:
Եղեւնաբուղխք ըղբուրաստանըս քո աղբերք արբուցանեն.
Եւ վարդանման արշալոյս ցօղէ զանոյշ 'ի քեզ զազպէն,
Ի վարսիցն արփենից մարգըրտաբեղ շողեալ 'ի փայլ,
Եւ նորահրաշ երփն 'ի զուռնակ յեռեալ ծաղկանցըդ չըքնաղից:
Պըրախոտին աստուածատունկ դաս դու յաւէրժ վայր և վըկայ,
Ըզնորին ընդ աղօտ վերբերելով 'ի քեզ պատկեր.

309 Զմեղրածորան տերևոց տես 'ի Հնախօսութեան Հայաստ. Ա. 176:

319 Զորմէ ասէ մերս Զենոբ. “Որպէս մանանայն իջանէր յերկնից անդ առ Հրէայսն, նոյնպէս և աստ 'ի մերում երկրիս ('ի Տարօն) 'ի վերայ անտառացն իջանէ քաղցր տաւէլ քան զմեղր, որ կոչի գազպէն”:

Զանգէոյ քոյ զատամանս ոսկեզօծեն արօտք քոյին,
Ոսկեգիսակ պըճնին 'ի բլուրս քո խաշինք ձորակաւորք:
Շարժեալ Մասեաց քոյ ըզ յօնս բսպանձալից սառեն հիւսոյ,
Եւ 'ի մարգըս քո զեփիւռք յաւէտագուարճք գեղապարեն:
Երջանիկ մանկտի հայկազն ըզհայրենիդ սիրեա զերկիր.
Ի կոյր ընդերըս լերանց խորասուզեալ հեղձամըղձուկ,
Պեղեսցեն այլք հետաղօտ զոսկին 'ի յոյս անդ դարմնեալ.
Ի բոսոր վըտակս արեան այլոց զարօտըս ներկեսցեն
Նիզակախուռըն վաշտք ընդ դաշտըս ծածանեալ ոըխրատեսիլ.
Իսկ դու զհովլիսըս քոյին զըւարձալիցըս ծաղկեցո.
Արծաթաղբերք 'ի դըրախտըս քո գնասցեն վէտ վէտ գեղաձեւեալ:
Երջանիկ մանկտի հայկազն ըզհայրենիդ մըշակեա հող.
Ընտի նախաստեղծիկն հաստեալ իրան արարչակերտ,
Ընկալաւ զանմահութեան դըրոշմ 'ի փըչումն աստուածաշունչ,
Եւ նախամօրն համայնից այն ի՛նչ փայլեալ անդ կերպարան,
Զամօթի հարան ծաղկունք՝ յանձն ըզկորանս յայնժամ առեալ:
Դեռ հետք աստուածաձեւ գարշապարացն անդ նըշմարին,
Եւ յոլովք մահկանացուք՝ անդ զօրք անմահք պահակերեն,
Բոցաղէն քերովբէից պար ըզկենաց փայտին առեալ:
Բարձրեալն 'ի յանդըս քո երդուաւ, մըկայ աղեղըն բազմերփեան,
Ոչ սերմն այնուհետեւ, ոչ հունձք անցեն դու՛լ և դադար.
Ամառն և գարուն պահեալ զխըրեանց կարգ անյեղլի:
Բոցակէզ աստ զերկիր այրէ կամաց մըշտատոչոր,
Ընդ 'ի ձմեռն յաւերժական սառուեն բեւեռք ցըրտասառոյց.
Իսկ 'ի յաղեղն խոր ըզքեւ ամենազօրն հաշտ ակնարկեալ,
Ծաղկունք 'ի դըրախտըս քոյին և հունձք 'ի յանդըս ծածանին:
Ի՛բր ըզըմնաւս իցէ ողել ինձ զայգաղխուց երկիրդ պարծանս,
Ազգհըսկայս՝ որ այտի յարեան կացին անտառախիտ,
Ի բարկաձայթ աղեղունս իբր 'ի յերկինս ոստընդոստք.
Հայկ արին և Արամ, և քաջաց ձեռ քաջըն Տիգրան:

324 Զոսկեզօծելոյ ատամանց անդէոյ յարօտս լերին Խամըբերդոյ՝ որ մի է 'ի բիւրակնեան լերանց, տես 'ի Հնախօսութեան Հայաստ. Ա. 268. և 'ի Նոր Հայաստ. 80:

334 Ականակիտ և արծաթափայլ աղբերաց և գետոց բազմութիւն 'ի Հայաստան յայտ իսկ է, մինչև գլտակն որ 'ի Բասեն մերձ 'ի Կարին՝ Արծաթաղբերս կոչել:

353 Խորեն. Ա. 29. « Սիրեմ կոչել այսպէս բառաքաղութեան, Հայկ Արամ Տիգրան. քանզի վասն իմ՝ քաջաց ազդ քաջքն »:

Ընդ ձիւաղըս մենամարտ Վահագն 'ի վէգ նահատակեալ.
Եւ Տորք անգեղեայն մըրըրկակոծ կայմից ընդ ծով
Պարաժայռս 'ի սարից լեռնահանգէտըս հոլովեալ.
Նիզակ բոլորատեգ կայ խորամուխ դեռ յորձաքար,
Հուժկու բազկին Արշակայ վըկայ յեզեր ծովուն մեծի.
Գուպարայաղթ յասպարիզին քառաձիոց վերջնահանգ,
Ըզթումբըս գետոց 'ի ձեռն ոտին աւերելով,
Եւ զյորձանս 'ի ցամաք փոխեալ արքայն քո սէգ Տըրդատ.
Ահ և դու անմոռանիդ լիցիս Վահան անյիշատակ,
Ընդ զաւակ զամէկին յերկիր ըզգօռ վիրագըն տապալեալ.
Ահ և սիւնիդ 'ի սուսեր միասայրի զինեալ Բաբիկ,
Ըզհոնանդուրըն սատակեալ՝ ըզհայրենիդ կանգնելով զահ.
Իսկ ըզքոյդ, Վարազդատ, վիպէ Եփրատ ըզքաջութիւն,
Վազս ըզնովաւ առեալ ընդոստ գեր ըզՔիոն Լակոնացին.
Ընդամոր հայկազն Աքիլլ անխոցելի կացեալ Մուշեղ,
Վըկայէ Հոմն 'ի յոտին նորա դըրոշեալ առ գետեզեր.

354 Խորեն. Ա. 31. « Ցետ որոյ և ընդ վիշապաց առէին յերգըն կռուել նմա և յաղթել »:

355 Խորեն. Բ. 8. « Ցեղերս ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց Թշնամեաց, դիմէ 'ի վերայ. և 'ի խաղալն նոցա 'ի խորն իբրև ասպարէզս ութ, և սա ոչ ժամանեալ նոցա, առնու առեն վէմս բլրաձևս, և ձգէ զկնի. և 'ի սաստիկ պատառմանէ ջուրցն՝ ընկըմին նաւք ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն, որ 'ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս »:

357 Խորեն. Բ. 9. « Արշակ որդի Վաղարշակայ պատերազմելով ընդ պոնտացիս, և նշանակ եթող յեզեր ծովուն մեծի (Պոնտոսի) զնիզակն իւր զբոլորատեգ՝ որ էր արեամբ զեռնոց մխեալ. ձըգեալ 'ի հեռաւորուց խորագոյնս նստոյց յերկանաքար արձանին՝ զոր կանգնեաց 'ի ծովեզերն »:

359 Խորեն. Բ. 79. « Եւ 'ի ձիընթացս մեծի կրկեսին կառավարել կամեցեալ, 'ի հմտութենէ հակառակորդին առաջեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառսն »:

Ագաթ. էջ 99. « Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս 'ի բանս կարգի առակաց, թէ իբրև զսէգն Տրդատ՝ որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ 'ի սիգալ իւրում զյորձանս ծովուց »:

362 Խորեն. Գ. 9. « Զօրավարութիւն նիզակաւորացն լեալ անարի ումն սպայ վառեալ, և Թաղեաւ կաձեայ բոլորովին ամենեփե պարածածկեցեալ՝ շահատակէր 'ի մէջ զօրացն : . . . Յայնժամ քաջին Վահանայ ամատունւոյ հայեցեալ յեկեղեցին կաթուղիկէ, ասէ. Օգնեա ինձ աստուած, որ զդաւթեան պարսաքարն դիպեցուցեր ճակատու խրոխտացելոյն Գողիաթու, ուղղեա և զնիզակս իմ ակամ հզօրիս այսմիկ : Եւ ոչ վրիպեցաւ 'ի խնդրոյն, ընդ զաւակ ձիոյն յերկիր կործանեալ զահագին զվիրագն »:

365 Սեբէո. Օրպել. Փ. « Ընդ դատապարտեալ լինէր անհնարին հսկայն Հոնանդուր, յաղթողանայր քաջն Բաբիկ, աճապարէր 'ի սուրն միասայրի՝ որով անդէն սատակէր զմարդախողխողն և զվիշապազօր գազանն »:

366 Խորեն. Գ. 40. « Վազեաց զեփրատաւ առաւել քան զլակոնացին Քիոնեայ վազելն քան և երկուց կանգնոց չափ »:

369 Մեսրոպ. Ի. « Ճարտարաց Արուեստ պողովատիկ գրչաւ նկարեալ զՄուշեղ ձեռնակ երիվարաւն յարձանի առ գետեզերըն, և զհոմն յոտս նորա »:

Ինքն 'ի սպիտակ հեծեալ 'ի ձի, ահ վիմարդեան իսկ արկանէ ։
Ընդ խաչանիշ նախկին շողեալ պսակ 'ի գլուխ արքունական,
Ի վարդագեղ ձապաղիս արեան նախնոյ վկայուհւոյն
Խուռներամ հոյլք 'ի յերկրէ անտի վկայից վերաբուսեալ ·
Եւ զի՞ զնոսա մի մի թուեցեմ, պայծառացիր երկիր Հայոց,
Դաշտ Շաւարշի արեամբ նոցին ծիրանեփեալ,
Եւ քահանայք որք լուսածնունդ որդւովքն անկեալ անդ գլխատապատ,
Ընաւից ըզքեզ գեր 'ի վերոյ ներբողենից կացուցանեն ·
Բայց Վարդան գլէ զգլխացն որեար աղանց բոլորեցունց,
Ընդդէմ հրաշունչ վիշապաց հեծեալ 'ի խրոխտ շահատակին,
Իբր 'ի ձակատն երկնախումբ վառեալ հրեղէն զօրացըն պետ,
Ի փլուզանել անդրնդասոյզ 'ի վիհ ըզգունդն սատանածանմրտ ։
Կամ ըզվէհս եթէ փոքունց իցէ 'ի ձահ համեմատել,
Նորահրաշ տընկեալ 'ի քեզ յայնժամ դըրախտ, ո՛ Հայաստան,
Ընդ մանկոնեան ծաղկեր քաջադն և ծաղկէին անդ քաջաղունք ·
Ընտի քաղեալ փունջ 'ի բուրումն անուշահոտ յօրինեցան
Ծաղկունք այբաբատեանք, յորս բարձրեալն հոտոտեցաւ ։
Արշակեա մանկտի հայկադն ըղհող արեամբ նոցին սըրբեալ ·
Դա աւանիկ և հըզօր մատուցանէ Ասկղեպեայ զէն ·
Աստի անդեղայս ուսոյց խառնել քոյդ Միհրդատ,
Եւ հոյզ կենսակայլակ շըթքէ ներհուն քեզ տարրաբաշխ ։
Ազխորդ ախտաժէտ զլմեալ ցաւոցն անդր 'ի դարման,
Եւ 'ի ծի՛լ ծաղկան զըեհիկ յաղթէ յաձախ ախոյենին ·
Ինքն իսկ երկ հողալանտակ բըլթէ զպաժան ծերոյն մանկաղ ։
Ե՛րթ ըզըխրախնեան շուրջ ըզլերամբք և 'ի Հաշտէնս,
Ընդ ըզնոցին մնացեալ գեղ՝ հետազօտեա զոյժ ախտա[illegible]
Պեմք և Մաքաւոնք կան ընդ զըժոխս անդ 'ի վըսեր ·

372 Խնդիր է՝ թէ արդեօք Թեկղի՞ աշակերտուհւոյ սրբոյ առաքելոյն Պաւղոսի նախ վկայեալ իցէ վասն Քրիստոսի, թէ մերոյս Սանդխտոյ. կէսք 'ի քննաբանից զասքան զնա երիցացուցանեն ։

389 Թիւրակէ գեղթափ 'ի մերոյս Միհրդատայ հնարեալ՝ յայտ է գիտնոց ։ Տե՛ս 'ի Հնախօս. Հայաստ. Գ. 124 և 126 ։

394 Տե՛ս 'ի Հնախօս. Հայաստ. Գ. 125 ։

396 Պեմն և Մաքաւոն. Պեմն բժիշկ անուանի եգիպտացի, ընդ Ասկղենի՝ որ մականուանի և աքեայացի ։ Մաքաւոն որդի Ասկղեպեայ և աշակերտ Քիրոնի. սա մի 'ի բժշկացն է՝ որ 'ի պաշարման Տրովադայ զարմանէին զդիւցազունս. և Վերգիլ դնէ ընդ դարմանաւորս յորովայն հռչակաւոր ձիոյն ։

Մարժապետ վեհագոյն անցեալ բազմի փորձ 'ի յաճու,
Եւ առ 'ի խառնըս դեղոց անդ սափերից դադարեն պէտք։
Այլուր մահահամբոյր տիրապետեալ արքունց Ասողիկ,
Ընդ բըժըշկանացըն Ասողիկ հայկազն 'ի զըօս ծաղկանց
Ուսուցանէ մանկըտւոյ երկայնաւուրըս ժառանգել։
Զի՞նչ համգոյն բերեն Պերով և ոսկեհանքըն Լիւդականք·
Լախձիրք նօքինք և ձապաղիք արեան ըզդաշտս ողողեցին,
Եւ առ քաղց ոսկւոյ ըզքաղցր հատանէ զօդ դաւ և դարան·
Իսկ երկիր Այրարատայ ծաղկաբերէ օձան կենաց։
Ըզգեանաւոր իսկ դրախտի ծաղկեալ դարուն գեղածիծաղ
Մահահոտ խամբեր խորշակ՝ ձախողակի ձայնեալ Օձաղիկ·
Ի պանքայեան հրացայտ ժայռից դըժոխաշունչն ստեաւ վիրագ,
Հարկանէ զմատաղատունկ հասակն՝ ուր կոխ գտանէ ոտն·
Կամ թէ խնայէ երբեք յարև, թողու ըսպեօքըն պխակեալ
Ըզկարմրագեղ փայլունն այտից զերդ կարկտահար կեղև նըռան։
Ապստամբ 'ի հնարից զպըրանայր հէնն համաձարակ,
Անցեալ ընդ Եփրոս և ընդ կըրկին աշխարհ սփռեալ։
Ըզտասներեակ դարուց լալիս որեար հայկազըն լըռեցոյց,
Զուսեղն յաւէժ ծառոց դրախտի 'ի մարդատունկս յեւեալ պատուաստ
Ի հոտեան ազգ հողաբոյս անշուք՝ 'ի գեղ և 'ի ծաղիկ,
Որ յար սաղարթուն բուրէ՝ յաւէժ ձեամբ իսկ ծածկեալ·
Յաճախ նորին 'ի խընդիր շըրջի խոհեակ ընդ բուրաստան,
Ի համդերձանըս խորտկաց ակըմբահոյլ բաժեալ կոչնոց։
Ընկալնին բաժակակալք ոսկիք, բաժակքըն պըսակէն·
Դըրդեալ 'ի յումպ ախորժակք, հընչէ զըւարթ յարկն համօրէն,
Յաճախեալ ըզխրախուսն 'ի կիծ խընկոց մըրգուցն համեմ։
Մի և այնորիկ 'ի քէն անտես լիցի խընամ·
Մըշակեա 'ի պարտէզ քոյին ըզզարմն ազնըւատունկ,
Պընդնէ սաղարթագեղ ըզտըխրութիւն ձըմերայնոյ·
Խընկունին նըրբատերև 'ի տիպ թըփոց վերըմբերձին,

400 Ասողիկ դուստր Նոյի, պաշտեցեալ 'ի Հայս իբր բժշկամայր։

407 Ախտս այս ծաղկոյ յԱրաբիոյ անցեալ յԵգիպտոս յամին 622, անտի էանց 'ի Սպանիա, և անտի ընդ ամենայն վերին և ներքին աշխարհս ծաւալեցաւ։ Պատուաստն դեղ ախտիս այսորիկ 'ի մերազնեայց առի հնարեալ յանցեալ դարու։

426 Խնկունի, Rosmarino, [illegible]։
Օշնան, Lavanda.
Անանուխ, Menta, Նանէ։
Կենեղուտ, Salvia, [illegible]։

Նու օշնան խաղաբուղխ ընդ անանուխըն կըծուահամ.
Կենեղուտըն մողոշիկ և մակերան խընկողկուզիկ.
Ցարփալըն 'ի ծուծ հիւլեան մեղուաց ծոթորըն սաստկաբոյր,
Ռահան և զուիրակ ընդ այլ բուսակըս մանրախոտ.
Ընաւից զոգցես համդորժ 'ի ցուրտ շնորհեալ կենցաղ երկարակեաց,
Նոյն դու ստէպ 'ի ծիլ ձըղաց յարօ զաւակ մատաղատունկ.
Զի ծերունեացըն խըրթնացեալ անշըքի տիպ խոժոռադէղ.
Զի՛ զքօսուցիկ և քանի՛ոն է պիտանի դըրախտից դարման,
Սանաւանդ ընդ քոյլն փողփողենէջ ամարայնոյ,
Ուր երկեն անյողդողդ ըստ հայկաղեն բարուցդ 'ի ձահ
Ոչ ըղձիր զովացիկ և ոչ ըղջաղ քեզ ազահէ.
Ջըմեռն եւեթ անողք գեղոյ դըրախտիցդ է ոխերիմ.
Ուսցիս ընդ նըմա 'ի դէպ ժամու յարդարել մարտ,
Յերեսաց նորին ըզցիրդ բուսեարն 'ի բաց պատըսպարեալ.
Իբր հովիւ 'ի քանասար գայլոց ըզխաշն ածէ 'ի գոմ,
Կամ զամիքու մոլսիկ ընդ վոհմակըն մըղեալ ձակատ.
Նստանօր զհամաշխարհիկ տընկոց յամբոկ ածեմ հրահանգ.
Հայեաց 'ի դըրախտ եթերըն՝ ուր բոցագոյն փայլեն ծաղկունք.
Բաղցր է զնոցին նըկատել ըզգեղ և զնացս արփիաձեմ,
Նոյն ոչ յաղթի 'ի նոցունց քոյոց դըրախտից գեղ երփնազարդ.
Նոքա զձեռըննն հաստողի պատմեն ըզփառս և զզօրութիւն,
Սոքա զնորին զերահրաշ 'ի դէմս ածեն գեղոյ տիպար.
Ընկձըն անդ միտք, աստ ըղձայլըն. նոքա քեզ ահ, սոյք ազդեն սէր.
Նոցին տեսող, սոցին մըշակ արարչակից յԱ՟յէն պատուեալ,
Մ՛ի փառացդ լցես անփոյթ, մի՛նդ ձեռատունկդ անկարեկիր.

Մակերան, Maggiorana. Ռահան, Basilico, ֆէսլէէն:
Ծոթոր, Timo. Զուիրակ, Origano.

ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԵՐՐՈՐԴ ԳՐՈՑ

Զի բոյսք տարաշխարհիկք, զորս երրորդ գիրքս այս աւանդէն զխնամս և զդարման, կարօտին ձմերոցաց ։

Յաղագս լուսատենչիկ բարուց բուսոց առհասարակ, և յաղագս դրից և պատկանաւոր ձևոյ ձմերոցի ։

Յաղագս ընդարձակութեան նորին առ 'ի ստածումն բուսոց ։

Յաղագս որ 'ի նմա աստիճանացն և ածուոց ։

Յաղագս չափոյ ջերմութեան ձմերոցին, և սովորելոյ բուսոց յօտար կլիմա. ուր և զքաղցրախառն ձմերայնոյ հոտոյ բանք ։

Յաղագս աղբերցն ձևոյ և արբուցման որ 'ի նոսա բուսոցն ։

Ժամանակ փակելոյ զտունկս 'ի ձմերոցս, և անդրէն 'ի դուրս հանելոյ ։

Յաղագս զրեխյն դարմանոյ, ուր և զփշերահոտէն ուրոյն բանք ։

Գլխաւորք 'ի տարաշխարհիկ ծաղկանց առ 'ի զարդ դրախտի, կոտիմն, օրտենսիա և կամելիա. ուր և զշոգեմուղ նաւարկութենէ ։

Զբժշկական բուսոց, ուր և զմոլախինդէն և զմահուանէ Սոկրատայ և Տրդատայ և Ներսիսի մեծին ։

Այլք 'ի տարաշխարհիկ ունկոց, ակնեպիաս, փուքսիա, կորկոբայք, իրեւլեայք, արևադէմք, արջաղի, պատկառուկ և կաստա ։

Զլիբէական և զամերիկեան երաշտատունկ և ստուարամարմին բուսոց ։

Զեւք նոցա անուոր, և դեղք երանգոյ՝ որ 'ի նոցանէ քաղին ։

Պատուաստք նոցա ընդ իրեարս նորահրաշք ։

Յարաջուարձ բոյսք գեղասաղարթք՝ 'ի զարդ ձմերայնոյ պատկանաւորք ։

Բուսարանաց 'ի ձմերայնի զուարճութիւն և բերք ։

Զբօսանք դարմանոյ ծաղկանց և վարժից մնկաբանութեան ։

Յորդոր առ 'ի նոյն վարժս և 'ի բանասիրութիւն ։

Խնդիք քերթողին պետանի հայրենեացն թողլոյ զառաջարկութիւն ։

## ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑՆ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Ըզքեզ արդ, Վիտրուվէ, և զքեզ Պալլադ և Սանսովին,
Կարդամ 'ի նոր ասպարէզ՝ առնել հրաշից ձերոց հանդէս.
Ըսցեն վայրիկ մի դադար տաճարքըդ ձեր գըմբէթայարկ,
Դադարեսցեն արքունիք՝ զորս ամբառնայք ոսկեձեղուն,
Ըզկայ և սիւնակապըդ առցեն կամարք ապաստանաց
Ի խըրխինջ ամէհի և 'ի շաչիւն հընչել զինուց.
Չեղ ծաղկունք արդ գըրգասունք հեղուն աղերս աղիողորմ,
Տունք ախտակցաբար խուռն ինչ նոցին տուք դադարիկ.
Նըժդեհք տարաշխարհիկք ըղձերանայօտ լըքեալ գաւառս,
Դան 'ի գեղ այլազան ըզբուրաստանըս մեր պըճնել.
Ըզորխուր նոքիմք ըզգեմս ուրախաւէտ ծաղկազարդեալ,
Սակայն դարան կենաց նոցին գործէ ձըմեռն արեւխուշտ.

1 Վիտրուվիոս Ճարտարապետ հռոմայեցի անուանի, կեցեալ առ Օգոստոս կայսերաւ: Պալլադ և Սանսովին Ճարտարապետք իտալացիք, առաջինն ծնեալ 'ի Վիկենտիա յամին 1508. իսկ երկրորդն 'ի Ֆլորենտիա յամին 1476:

Յերեսաց ժամու սարսռոյ լերուք նոցին պատըսպարան.
Ես ըղձալուց նոցին 'ի ձայն առից ըղձն ազդել յարկին,
Դուք ըղձուք արուեստից և զհանգամանս անդր յաւելէք։
Զարև նախ, զարև ըղձիւք, զարև 'ի ձեռն հայցեն բուսակք.
Ոչ այնպէս շող արփենի մահկանացուի է կենսատու,
Որպէս նոցին կախեալ կեանք ընդըշուլիցն են արփենից.
Դեղնաշորթ 'ի գալուն հարկանի ծառ սաղարթագեղ,
Եւ գունատ արձակէ ծիլ զերկ 'ի նոցունց դալարաբոյս.
Զըգտին երկայնին ծըղօտք ծաղկանց ոտնք 'ի վեր,
Ոխրեալ առ անձուկ հասանելոյ առ տարփածուն.
Եւ յամրածին երկնեալ կոկոն խառնի յաճախ 'ի ծիլ ծայրին,
Որպէս մօր նիհարելոյ մանկիկ նիհար գըրկաբարձիկ.
Յարևու ծաղկէ գարուն, արեգունի պըտղնին դարաստք.
Ընդ 'ի ծըմակ արկ 'ի ծործոր, հազիւ տեսցես անդ դեղ դալար.
Իսկ 'ի վայր անմըշոյլ հեղձամըղձուկ նուաղին բուսակք,
Ոչ այլազգ քան 'ի մըղձկուտ բանտեալ 'ի յօդըս շընչաւորք։
Նուանցոյցք ապակեայք կացցեն հանդէպ միջօրէի,
Բարձրագոյն բուսարանին յայնըմ մարզէ կանգնեալ ճակատ.
Իսկ առ 'ի կողմըն կուսէ և հակառակ ժամու հիւսիսոյ
Որմածք անթափանցք կացցեն հողմոց ընդդիմամարտելք,
Որպէս ընդդէմ փոհմակաց մացառախիտ ցանկեալ մակաղ.
Գայլ հօտից ոխերիմ, և հիւսիսակ փափկիկ ծաղկանց։
Եւ արահակ յետկուսէ ածեն յոգունք նըրբակածան,
Ի պահ զինուց և կարասւոյ 'ի պէտս ազգին բուսականի,
Ընդդէմ սառամանեաց կըրկնապարիսպ կանգնեալ պատնէշ.
Եւ սեմոց առ 'ի կուսէ մուտս 'ի արահակ անդըր բացեալ,

29 Թիւն 1 ցուցանէ զյատակագիծ ձմերոցին, ուր տեսանին սատիճանք թաղարացն յետկուսէ. իսկ յառաջոյ 'ի մնացեալ տեղւոջն կազմին ածուք արկեղաձևք։
Ա է դուռն ձմերոցին. Բ և Գ են կրկին բաժանմունք, յորս մարթ իցէ յաւելուլ զջերմութիւն առ 'ի պէտս փափկագոյն բուսոց։ Քանզի խողովակք, որ երկուստեք ածեն զշոգի, բացխփիկ բանալեաւ աւելի կամ նուազ 'ի միջավայր ձմերոցին հաղորդեն զջերմութիւն։
Թիւն 2. է ճակատ ձմերոցին ապակեզարդ։
Թիւն 3 ցուցանէ յայտնագոյն 'ի կողմանէ զձև սատիճանացն, և զդրան. բայց ոմանք զդուռնն յետկուսէ 'ի արահակ անդր բանան, և անտի ապա ընդ այլ դուռն մուտս 'ի ձմերոցն, որպէս զի մի ընդ ծակտին հողմ 'ի ներքս սպրդեսցի։
Իսկ Դ, է արահ անձուկ 'ի հիւսիսոյ կողմանէ թողեալ, որպէս զի կրկին որմովք ապահովագոյն պատսպարել զձմերոցն։

3




2



1



Զի մի՛ հէնն ընդ ծակոյն 'ի կայս բուսոցն խաղայցէ ,
Այլ անդ յանդաստակս անկցի նորին խորտակեալ թափ :
Երկայնաձև ըղձաղկաձեւմ ապարանից կառս զչնուած ,
Արփայնոյ ճառագայթից գոլ ճահագոյն ընդունարան ,
Իսկ յարկին բարձրութեան նիւթանք քեզ բոյսք կըշռեսցեն չափ .
Մուսայն մանաւանդ՝ որ դրախտատունկ վերաձայնի ,
Ոյր սաղարթուցն ծաւալ յաղթէ բնաւից դալար թերթից .
Ողջնիկ 'ի բունն 'ի մայրենի իբր 'ի յարգանդ կերպարանին ,
Եւ տակաւ լուծեալ զերկունըս մօրն 'ի լոյս գան տերեւեալ ,
Իբր առագաստ ըղկայմիւ կանաչագեղ պարզեալ կերպաս .
Ոյց եթէ ոչ բարձրակառոյց յարկին տեղի տայցէ կազմած ,
Բեկտեալ խորտակին , անշըքի վեհ թըփոյն դիտակ :
Բարձրայարկ հայցէ կայան և հեշտ շընչոյ տուրեւաւիկ .
Այերբ մահկանացուք , այերբ և բոյսք շընչեն ըզկեանս .
Դիւրասպառ յանձուկ միջնօղըս պատահէ տարր բստածիչ .
Համեմատ բամից բուսոցըդ պատրաստեա տուն լայնատարր ,
Ի հովանի իսկ 'ի ցածուն հեղձամըղձկին շընչաբուսակք :
Արմատք զերկրի , և սաղարթք ծըծեալ զայերց ըսպառեն հիւթ .
Սոլի տըկարն , հըզօրին ըզբօսանդակ շորթեալ պարէն :
Աճեցական ազգատոհմին այսգոյն կազմեալ պատըսպարան ,
Ասփածանըս սանդղաձև կառ 'ի նմա ընդ միջօրէ ,
Աղածըի երամոյն յանդորր 'ի դիր և 'ի բազմոց .
Տողեալ աղկերք անդ շար 'ի շար կացցեն յարփին ակընկառոյցք ,
Իբր 'ի շուրջ տեսանելեաց բազմեալ 'ի կայս հանդիսատեսք ,
Յորժամ 'ի բաց պատուրի նախնի դարուց քօղն անջըրպետ ,
Եւ դիւցազունք 'ի կօշիկըս բարձրաբերձք գան 'ի տեսիլ :
Սակայն նիւթանք նորահրաշ թատր անդանօր կացուցանեն ,
Ամառն 'ի ձմերայնի գործեալ 'ի դրախտն յարկածածուկ .
Ընդ դաշտ ձիւնախաղաղ ճգան յոտին ելեալ 'ի ձեմ ,
Գեղեցիկ է տեսանել դրախտ 'ի միջի անդ ծաղկաւէտ ,
Որպէս կըղզեակ 'ի ծովու շուրջ յամեհի ալեաց բաղխեալ ,
Եւ միջնաբերդ անառիկ՝ զոր շուրջ աշեղ պատէ ճամբար .
Կամ գեղեցկին գեղեցիկ թէ ճահագոյն իցէ սարաս ,
Որպէս ծաւի բիբ 'ի սպիտակ ակնակապիճ կուսի փայլէ :
Ի ստուերակերպ 'ի դրախտիդ յարեւն կոյս առ 'ի թաւալ

Մանրերամ բուսոց 'ի բոյնըս ջերաջերմ կազմեա ածուս.
Օթեւանք այլ և այլ լիցին անձնիւր բուսոց 'ի ձահ,
Եւ կենսակիր օդոց 'ի տեղ ըզգարմնեալ բոցոյն շոգի
Փողրակ շըրջածու գալար ընդ որմն առցէ պատեալ,
Բացխըփիկ բանալեաւ ուր առաւել ուրեք նըւազ
Կըշխու ըստ գըրգասուն բարուց նոցին բաշխելով տօթ.
Ազդ զաստիճանս արասցէ փայլուն սընդիկն քեզ ելեէջ,
Կըրկին երրեակս յոլովից ռէոմիւրեանն ազդէ գործեակ.
Նուազունք քան զայն աւելի մըրսին բուսակք տարաշխարհիկք.
Եւ յոգունք ընդելեալ յուշիկ երկրին ուր նըժդեհին,
Ոչ ինչ ընդհատ քան զհընդիկն ընդ բոցակէզ բնակեալ երկնաւ,
Մերձ 'ի սպառուած Ովկիանու՝ ուր մեծն Ատլաս բարձեալ 'ի յուս
Շըրջէ զառանցս երկնից յեռեալս 'ի բոցափայլ բոյլս աստեղաց,
Սովորին ձըմերայնոյ համաշխարհիկ նոցին բուսակք.
Հըրուանդանին Բարեյուսոյ բընիկք 'ի գալն առ մեզ ծաղկունք
Խնուայց կարօտէին 'ի ձմերաստանըս քընքշայեալք.
Պարագայց ամօք տակաւ բարուց նոցին կըրթեալ 'ի տօկ,
Ի խիստ եւեթ սառամանեաց խընդրեն այժմիկ տալ խոյս 'ի բաց,
Հանդուրժեալ առ Տիբերի և բացօթեայք լոկ ընդ երկնաւ.
Անդ ըզձըմեռն 'ի բուն 'ի վէգ գայ հիւսիսակ ընդ հարաւոյ.
Բազում այն է զի յաղթի, բայց դու անդէն զերդս ապակեայս,
Տալ շունչ կենդանարար բանտարկելոց քոց բուսակաց,
Մինչ օրն ընդ մէջ անպախաղաց ասպարիզին արփաթեւէ.
Եւ ուրեք՝ զի և յաղթէ, յայնժամ աղէտք աղիողորմ
Ոյց յանդուգն 'ի յոյս պատրեալ՝ չառին զառաջըս վըտանգին.
Ոչ բոյսք եւեթ, այլ և թըփեարըն թըթուենեաց մըշտադալարթ
Այրի ցըրտակէզ 'ի գառնաշունչ բըքոյն 'ի սաստ.
Լացեն յաճախ ըզգլխակոյտ մըրգայն յերկիր անկեալ տապաստ,
Ըզկիտրոն դեղձանիկ և ըզնարինջ շիկակարմիր,
Ցամաքեալ 'ի նոսին և օշարակըն ծաղկահամ.
Այսոցիկ նախահոգ յաւէլ մըշակդ 'ի զգուշութիւն.

80 Վեց աստիճանք ջերմութեան ըստ ռէոմիւրեան ջերմաչափի բաւականք են առ 'ի պահել զբոյսս առ հասարակ 'ի ձմերայնի. սակայն այնքիկ են՝ որ առաւելագունի ջերմութեան խնդրեն կարօտք.

99 Թթուենիք, իտ. Agrumi, են թթուահիւթ պտղոց ազգք առ հասարակ.

Առ 'ի վարժ ձմերայնոյ թողուլ թողցես բոյս 'ի բացի,
Այլ ըզձետ նոցա զգուշեաւ 'ի ձմերոցի յապահովես.
Բներ զաղկերցն իսկ ազգեցից, որ այնոցիկ ձեւ ճահագոյն.
Մ՛ի լայնատարր 'ի վեր կոյս եւ 'ի յանձուկ նիստ աւարտեալ,
Այլ սխնաձեւ ծայրատաշ մեզմիկ 'ի ստոր անկեալ 'ի շեշտ,
Զի շըրջափիւռ արմատոյն լիցի անդորր առ 'ի ծաւալ,
Եւ մի լայնշի խեւք շըրթանց զուր զաստիճանսըն դըրաւեսցեն,
Զափազփուն կայկայեալ եւ 'ի հողմոց դիւրակործան.
Առ տես բուսակին արկ համեմատ անօթ 'ի կիր.
Սաղ իսկ ծաղկունք գան 'ի փըլթիլթըս պարագիրք 'ի նեղ թաղար.
Կորընչի յաճախ 'ի լայն աղկեր փոքրիկ բունեալ բուսակ,
Մանաւանդ արբունն ըստէպ թէ ընկալցի չեւ ծարաւեալ,
Սըխպադութ օրհորդին զոհ ծայրայեղ փայփայանաց.
Ճըշգիւ ուսցես, լեր յարբուցումըն ուշդ քան շռայլ.
Հըմուտ ծաղկանց դաստիարակ առնու զբարբառ նոցին 'ի միտ,
Թէնդ 'ի փոր խեցեայ աղկեր յօդիւք մատանցն 'ի փորձ տըւեալ.
Յըղփութեան բուսակին է նըշանակ հըրնչիւն կերկեր.
Իսկ 'ի շըրթ թէ 'ի կամաւ տեսցես ըզթուրծըն տամկացեալ,
Գուժէ օրհան, 'ի բաց անտի ըզձեռատունկ քըյլն հանցես,
Նոր որրանս աւաղկին եւ նորամունդ հայթայթեալ տած.
Ընդ մուտս արփւոյն 'ի Կարիճն՝ ըզգիրդ բուսեարն ած 'ի ձմերոց
Զորս աւազուտըն Նիլոս, զորս Ամերիկ յըղէ հակոտն.
Իսկ այլոց, որք հիւր 'ի դըրախտ քոյլն բնակեն բոյսք դըրդատունք,
Ներեւշըր ցերկկերպըն Աքեմնաւոր կալ 'ի բացի.
Այն ինչ ապա ընդ եթեր դարձ առնէ Յուլն եղջերագեղ,
Յորժամ արտաքս 'ի մըրրոյ դիմեալ խայտայ ոլթ ընդ արօտ,
Յայնժամ եւ բոյսք փափաքեն եւ թըլթուենիք բացօթելոյ.
Հան ըզգըրեից յայնժամ 'ի դուրս 'ի ձմերոցէ զազդ յօրնազարմ.
Նըրմնազարդ քեզ գարուն յօրինեսցեն ծաղկաւէտեալ,
Թէ աճեցուն զըոհի նոցին իցես տեղեակ յանձանձանաց.
Ծաղկաբեր թըփաստանին կեցեալ 'ի տխպ զամ յօրնաբուն,
Սերմանի ձեռ հարազատ՝ ածս 'ի փափուկ արկեալ 'ի հող.

132 Գրէ կամ Կռունկ է ծաղիկն Geranio, բազմատեսակ, 'ի ձեւոյն գլխուն կոչեալ.

Իսկ խառն ՚ի յերփնագոյն ծաղկանց սերմանք բեղնաւորեալ,
Նոր ծխածանըս գունոց պատրաստեսցեն քեզ անագան,
Թէ ՚ի փըլթթել վարդենեաց՝ ՚ի մանրամաղ ցանեալ յերկիր,
Քօղ ըմպոքօք նըրբենի ածցես ծըւէնըս կըտաւիս,
Զի մի հատքըն փափկիկք ՚ի բարկ շողից տոչորեսցին.
Իսկ աղուրայց պատեհ ՚ի բաշխ ՚ի մարերւոյ մինչ ՚ի հուր.
Ըստէպ պապակեն, տուր ծարաւեաց արբումն ըստէպ.
Գուրգուեա փայփայեա և գգուս ՚ի բաց հատ ըղտերևս.
Կանաչ ՚ի նոսին խանձի զեռուն, ներկ յարեէ.
Նաւ զագախումբ հիւսս արմատոցըն շուրջ զաղկերըն ոստայնանկեալ
Յապաւեսջիր ամի ամի, շուրջ մաքրենի արկեալ երկիր։
Ընդէն ՚ի նոր գարնայնի առնուն ծաղկել փըլթթինազարդ.
Որքանիք քեզ ՚ի դրախտի մնանին զաւակք ազգատոհմին,
Նոյնքանիք ՚ի նոսա փայլեն կարմրոյն զանազանակք։
Յոր ըզ ՚ի յայնց ակնարկիցես, նոյն քեզ թըւի գերափայլել.
Իսկ փայլմանն ըսպխտակին և ոչ շուշան յաղթել կարէ,
Քան ըզկաթն և քան ըզձիւն գեր ՚ի վերոյ արշաւասյր.
Ծիրանեգոյն ՚ի ծոցին կիտեալ ծաղիկ մանրանըկար,
Ընդ խսկաքանչըն գեղոյ ՚ի ստուերատիպըն գեղ մըրցի։
Հաճոյ բնաւիցն են ցոլք արփւոյն թէ ՚ի շողիցն ամրածածուկ
Ըզ յորդաբորբ ամարայնոյ մեղմէ ըզտօթ նուրբ տաղաւար,
Իբր հովանեակ ըզգըլխով ածեալ քընքուշ օրիորդի։
Յաղթականք յոլովից գոյնն ծաղկունքն այն մանըրկունք,
Բուրումն անուշահոտ թէ ՚ի նոյնն յաւելոյր գեղ.
Սակայն արդար ՚ի բնէ բարձին իւրաքանչիւր ումեք հասեալ,
Այլ անգեղեայք են ծաղկունք՝ բուրեն տերևքըն խընկահոտ։
Իսկ վարսաւեղըն դրէնկ գիշերահոտ ձայնեալ ՚ի Ձաւ,
Թէ և անշուք քան ըզգուեհիկ գրոհ դաշտայնոց փըլթթեալ ծաղկանց,
Ըզբնաւից խառն ըզբուրումն ազնիւ զարմից բերէ յինքեան.
Նըսեմաւ փայլեն աստեղք, և նըսեմաւ բուրէ դրէնկ.
Ըզբոյր ընդ փայլ աստեղաց կարկէ դրէնկ գիշերահոտ։
Այլ ՚ի թուփ կանգնաւոր հանգունատիպ քերցն ամբառնայ,

163 Գրէնկ գիշերահոտ, իտ. Geranio notturno, որ ՚ի տուընջեան անհոտ ամե-նևին՝ գիշերի բուրէ անուշահոտ։

Այլ ցածուն գետնամախանձ կոճղէգ փոքրիկ դօղեալ 'ի հող.
Այն ինչ ծաղկեն մարգագետինք, սաղարթագեղ արձակէ ծիլ.
Եւ զամենոր բերեալ բուրումն՝ ապա կոճղէգքն յոքնասերին.
Նաշխիցն 'ի դէպ քեզ ժամանակ ազդէ Արշիոն եթերաճեմ.
Խուն և ըստէպ մատո ումպ որպէս մատաղ մանկըտւոյ ջամբ:
Ըզգօլորից իսկ ընդրժդեհ բուսոց ըզնոյն պատուէր քեզ տամ.
Յօրինաց աստի 'ի բաց նուաղունք վաղեն ջրասէր բուսակք.
Որպէս կոտիմն յարազուարճ անուշահոտ ուանուշահամ,
Որ ծաղկունք չիկակարմիրք համեմ և զարդ գործեն 'ի ճաշ.
Նոքն ոռոգմամբ ուռճալիր վերստեղեալ իբր որթատունկ,
Պատաղի 'ի նեցուկ՝ պըճնեալ համակ զայն վարսագեղ
Ի սաղարթըս բոլորչիս խառն ընդ ծաղկունըս խուռնախիտ:
Առաւել հայցէ գըգուանս ազգըն տոհմիկ խաւ 'ի խաւոյ,
Յածուն և խոնարհ անվերստեղըն համեստացեալ.
Սա 'ի ձըղաց, միւսն ամենոր 'ի սերմանէ առեալ սերունդ:
Օտարաւի քան ըզնոսին չըքնաղագեղըն որտենսիա
Ջառաչէ միշտ 'ի յումպ, սիրէ յողող կեալ 'ի յերկիր.
Յայնժամ սաղարթքըն վըսեմք դալարագեղ վայելչացեալ,
Յայնժամ կապոյտ և կարմիր կախին գընդակք գեղածաղիկք:
Ածք և տաշտաթաղ պահեն ըզձեռ նորին անխահ.
Սօսափիւնք զով անտառաց հաճոյ նըմա են և ըստուերք,
Եւ 'ի տաքը անտառայինն ուրախացեալ բարգաւաճէ:
Ստուերատենչիկ և յափնիկն իսկ նայամէտ կամելիա,
Վարդենեաց մերոց չըքնաղ գեղոյն իբրով բերէ նախանձ.
Վարդ դըշխոյ զարնայնոյն, և ձմերայնոյ կամելիա,
Քամահէ ըզպարտու, ոչ կարօտի կեղծ ամոքան:
Ըսպիտակ ընդ կարմրոյ ոչ այլ ուրեք վայելչագոյն,
Եւ ոչ 'ի խառնըս պէսպէս երփնազարդեալ զարմանագան,
Որպէս 'ի յայտըս կուսի, որպէս 'ի թերթըս կամելեայ:
Գեղեցկագիր ըզնոսին ընդ աստիճանս արկ շուրջ 'ի շար.

176 Կոտիմ, իտ. Nastruzzo, որոյ ծաղիկ է անուշահամ, և խառն ընդ աղցանս ուտի:

184 Որտենսիա, ճպ. Hortensia japonica, ծաղիկ չքնաղ՝ յանուն Որտենսեայ դշխոյի այսպէս վերաձայնեալ:

191 Կամելիա ծաղիկ բազմատեսակ՝ որ ծաղկէ 'ի ձմերայնի, առանց կարօտելոյ ջերմոցաց: Ծաղիկս այս կոչեւ զանուն իւր 'ի Կամելլի յիսուսեան հօրէ, որ երբեմն զայն 'ի Յարոնիոյ՝ ուր երթեալ էր յառաքելութիւն:

Սաղարթք լըրթատիպք կանաչացեալ յաւէտագուարձ,
Գործեն բոլոր երփնազարդ՝ ըստուերս ընդ ցոլ ծաղկանցն յեռեալ։
Ապշի դաժանագոյն ձըմեռն ընդ նոր երկունըս իւր,
Եւ փարի 'ի համբոյր ընդ ծաղկաբեր ամարայնոյ։
Աշխարհածով ընդ ալիս զայն Կամելլի եբեր մեզ հիւր,
Կենսատու փայտին փոխան՝ զոր ած տընկեաց նա 'ի Յարոն.
Տաժանաւոր անդ ուրեմն էր ծովածուփ դեռ ասպարէզ,
Եւ մահաբեր բուսոյ առ մեզ 'ի տար մարզէ տեղափոխել.
Խաղալիկ մըրըրկաց զոյր լաստափայտ կոհակակոծ,
Կամ յանդորր հողմախաղաղ ըղկայ անշարժ առեալ 'ի խորս,
Զանեզրական յաւիտենից ըզ յուսահատ բերէր ձանձիր.
Մանաւանդ մինչ նաւաստին Թեւձակ 'ի լոյծն յեցեալ 'ի տարր,
Ըզլեռնաձեւ եղեւնն ձիգն 'ի նանիր գործեր 'ի մէջ.
Ոչ յետկուսէ խուսեալ ցամաք, ոչ յառաջոյ զայր 'ի նըշմար.
Շուրջ ջրեղէն անապատ 'ի ծիր անհուն ոլորտացեալ,
Բամս արձակալայր գործեր անել և անփախուստ.
Ազգ մահացու և բուսական լըլկէր յայնժամ ծարաւահոյծ,
Ոչ օրէորդ յայնժամ և ոչ գըռնայր ծաղիկ 'ի ծով հեռի,
Ի Թալուկ երկաքանչիւր հարեալ, ծիւրեալ երկաքանչիւր։
Արդ Թէս առեալ սրանայ ընդ ծուփըս բարձրակող մայրն 'ի յիւղ.
Ոչ հողմունցոյ առագաստից մըղէն ըղնա արդ Թըռչարանք.
Հիմնայ հուր 'ի ծոցյն, ճախրէն անիւքըն փըրփրացայտ.
Ազդ 'ի խորոց անդընդոց առնէ քեզ կայծըն ծըխաշունչ,
Եւ ընդ դաշտըն կապուտակ հանդիսարան քառաձիոց
Գան սաղապաձեմ հասանէն կառքն ապերասան։
Քեզ, ով Փափէն, ոչ նաւաստին եւեթ այժմիկ օգտածարաւ,
Այլ տընկաբանն իսկ, այլ ծաղկունք անգամ զտանին շնորհապարտք.
Զի զվայրս հեռաստանեայս դու մօտաւորըս կացուցեր,
Ըզվերին և զներքին կըցորդելով զաշխարհս յիրեար։
Ի ստորերկրեայց 'ի դըրախտից ուղէշ միշտ այժմիկ ածեալ,
Պատկըն ըղձիւր ծաղիկն 'ի Թուփըս մեր յեռու արդ 'ի փըլթիլթ.
Գըրգասուն արդ օրէորդ ուղեորի ծովագնացիկ,

224 Փափէն գաղղիացի, որ խելամուտ լեալ ուժոյ շոգւոյն 'ի վերջ կոյս եօթնե-տասներորդ դարուն, նախ նա 'ի կիր էարկ զայն 'ի մեքենայս։

Արդ փափկագոյնք 'ի ծաղկանց նըժդեհք առ մեզ գալ յօժարեն,
Եւ բուսականն որ ըստ օրէ յոգնասերի առ մեզ գըլրոհ.
Դըրախտք զարդարին, ընծայականք ծաղկեն վարժեալք,
Եւ Գաղիէն և Իպոկրատ 'ի բուսարանըս մեր ճեմեն։
Արամեանք, ճեպ տուք, մանկունք, հրաւէր արդ ձեզ կարդան բուսակք,
Որ բընիկք և որ հիւրք ընդ դըժոխոց 'ի ռազմ խըմբեալ.
Տուղտենին թըփաձև և ձիւնակերպ թանթըրուենին,
Եւ երիցուկն՝ իւ 'ի հիմայս մանկտոյն հայկազն ըզբօսանի,
Ի խիլ տերևոցն երկայնաւուրս հետազօտեալ.
Բընաւք քըրտնաբեր, ընաւից եփոյ հերքէ զհարբուխ։
Որ ընդ թաղուկ խիղախեալ 'ի կռիւ մեղրուկըն կապուտակ,
Եւ անուշիկ բոսորագեղ արեան մոլոշն անփառունակ.
Օշինդըր զառնահամ ազդիւ յանզօր ոյժ 'ի ստամք.
Եւ լաւդան իբերունի զախտ 'ի յօդից հալածական։
Որ ըզբօր զազրաթորմի սըրբէ խոտոց արքայն ընձխոտ,
Եւ սարսըռոյ ջերուցիչ զոպայն ընդ որմ՝ վերաբուսիկ.
Իսկ փըրփըրեմ և թըթըռուկիչ ընդ հակառակըն զօլարարք.
Փեգենայն մըշտադալար յոգունց 'ի դիւր ազգից օձան,
Եւ մոլեխինդ թըմբրադեղ 'ի մահաթոյն դըժնեացեալ.
Ա՛հ, ըզվեհըն դիւցազանց նա ըզՍոկըրատ արկ յարևէ,
Եւ 'ի բարւոյ արքայէն որք զարամեան կացոյց գըրոհ։
Ըզմահ մեծի հովուապետին ողբան լերինք Այրարատայ,
Բիւրակնեան ողբան աղբերք, ողբան անտառք սօսանըւէրք։
Քաղցր ինձ աստանօր զաշխարելի առեալ նըւագ
Ըզհովուին Բագրատունեաց զըստորոտովք Կապուտօնեայ,
Ի սըրինգն հոգեշարժ ինձ 'ի նմանէ շարայարեալ,
Հեղուլ գերարտօսր. այլ ինձ անդըրէն ձայն տան բուսակք։
Եւ ոչ ըզպէտնիկ բուսոց բաւեմ վիպել ըզգեարս,

237 Տուղտ, Altea, կիւլխաթմի։
Թանթրուենի, Sambucco, մուրվէր։
Երիցուկ, Camomilla, [illegible]. պապաթեա։
Մեղրուկ, Borragine, եզան լեզու, սըղըր-տիլի։
Մոլոշ, Malva, էպէ կիւմէճի։
Օշինդր, Assenzio, բելին։
Լաւդան, Laudano, լատէն։
Ընձխոտ, Fumaria, շահթէրէ։
Զոպայ, Issopo, զուֆա։
Փրփրեմ, Portulaca, սէմիզ օթու։
Թթուկիչ, Acetosa, գուզու գուլաղը։
Փեգենա, Ruta, սէտէֆ։
Մոլեխինդ, Cicuta, պալտըրան։
254 Ակնարկէ 'ի գեղեցիկ եղերերգութիւն վարժապետին իւրոյ Վ. Հ. Արսէնի Վարդապետի Բագրատունւոյ ընդ մահ մեծին Ներսիսի, զոր է տեսանել ընդ տպագիր տաղս նորա։

Արուեստ երկայն և կենցաղ սուղ, վրձնեաց ներհուն բժշկապետ.
Զբօսնալից ևեթ դայեակ ծաղկանց Մուսայք զիս կայուցին.
Ազնոցին բեր ինձ և զայլ ազնիւ առից քեզ արդ ոգել:
Ա՜ բուսակ պատաղիձ ասկլեպիաս ձայնեալ մրսեղ,
Մինչ 'ի սաղարթ, յոր 'ի ծաղիկ, զըւարթ այտից փըթթեալ 'ի գոյն,
Եւ 'ի փայլ ոսկեխի բերէ բեւրեղըն սառնորակ:
Ոսկեխի նորեկ մեղուաց բուրէ վաստակ անուշահոտ,
Այն բուրումն 'ի ծաղկանց անտի սրխալ քաղցրածաւալ.
Ընծիմածիգ ուռոց նորին խեցեակ փոքրիկ բաւէ 'ի մունդ.
Ամբառնայ տարածանի զարդարէ շուրջ ըզպատըշգամ,
Կախին 'ի ծոպըս ծաղկաւէտըս բարունակք 'ի վայր անկեալ:
Պայծկէ սաեղըն նըրբենի հիւթ բաղմահոյլ ծաղկանցն 'ի ծուծ,
Եւ ծիլ ծաղկին զամ մի փըթթեալ երկնէ յաւէրժ նորեալ ծաղիկ.
Յուշիկ ծերանայ, ածէ թոռնեայս ձեղքըն 'ի սերունդ.
Բուսակ սակաւապէտ և անկարօտ փայփայանաց,
Սակայն նուաղունք 'ի ծաղկանց այնպէս ըզխրտ զրաւեն 'ի սէր:
Իսկ փուքսիայն մանրատերև ծիրանեգոյն բերէ ծաղիկ.
Որ 'ի գլուխ ականակուռ այնպէս բըլթակ նորահարսին,
Իբր 'ի ծաղկին յայն 'ի կախ պըծնին նորին ձիւք նըրբենիք.
Մանուշկագոյն տերևիկք յեռեալ 'ի ներքս անդ 'ի ծոցին,
Զանձախարիթ ընդ ծիրանւոյ ածեն չըքնաղ երփն 'ի տեսիլ,
Այրբաւարտ 'ի ձեղենակ ցըցոնազարդ և կարմրորակ:
Օ՜ն զկորկորայցն ոգեցից որ ընդ հրավառ ծաղկէն զօտեաւ,
Օ՜ն զլոբէլեայց ազնիւ զարմից՝ զոր Ամերիկ յղէ փարթամ.
Հիւր 'ի ծաղկոց քո զաղթականք խառն ընդ նոսին կացցեն 'ի շար
Արևադէմքըն պերճաւէանք, որ յար շըրջէն դէմս 'ի յարփին.
Եւ լէոնուր խարտեաշագեղ ծոպ ըղծոպիւք վերըմբերձիկ,
Կոմաձև անկեալ 'ի շեշտ հանդոյն ձենաղն ապարանից,

262 Ասկլեպիաս մսեղ, բոյս քաջածանօթ առ ծաղկադարմանս, որոյ ծաղկունք սառնորակք՝ թուին 'ի մոմոյ կազմեալ. Asclepias carnosa.

275 Փուքսիա ծիրանեգոյն, Fuchsia coccinea, որ 'ի բերողէն զայն 'ի գաւառ մեր զանուանն կալաւ:

281 Կորկորայք, Corcora, ազգ ծաղկանց՝ որոյ իբր բառաւոռն տեսակք են, և կեան ընդ հասարակածիւ:

282 Լոբէլեայք, Lobelia, ազգ ծաղկանց ածեալ յԱմերիկայ:

284 Արևադէմ, Vaniglia, ածեալ առ մեզ 'ի Պերուայ, որոյ վաթսնիւ չափ տեսակք են:

285 Լէոնուր կամ արջագի, Leonurus, որոյ ծաղկունք մի զմիով ամբառնան հովանաձև, տակաւ փոքրկացեալ:

Կամ իբր 'ի ռազմ հրաւիրակ ընդոստ 'ի նուագ զանգականին ։
Ըզպատկառուկն իսկ ամօթխած սրտի խնամով 'ի ծաղկոցին,
Ի նախանձ ըզգաստութեան մըշակուհւոյ ծաղկատարիւի.
Հազիւ մատին հուպ 'ի մանրիկ լեալ տերեւիկս, կծկին ամփոփի ։
Որ ըզգացումն 'ի նմա կարծեմ կենդանական ազդեալ 'ի բնէ,
Այլ պատկեր եւեթ նորին զարմանահրաշ տըպաւորեալ ։
Որ ինչ այլազգ կերպացեալ յանբանից սիրտ տենչ գերաբուն,
Ողջախոհ մինչէ տատրակ առ վարուժանն ամուսնասէր,
Եւ զանձն 'ի մահ մատնէ շընիկ հըսկեալ 'ի պահըն տէրունի.
Եւ մեղուք ժիրաժիրք ըզգըշխոյիւըն պար առեալ,
Առաքինի արութեամբ " տան նահատակ զանձինս 'ի մարտ,
Եւ առ զէնըս դիմադրաւ խընդրեն վիրօք մահ գեղեցիկ „ ։
Իսկ նըժոյգ ըսպառազէն այն ինչ առեալ ըզհոտ ռազմի,
Մազս առնու փըռընչելով, 'ի լուր փողոյ վաշ վաշ կարդայ.
Շողան աղեղն եւ սուսեր, շխահէ զնովաւ վահան եւ տէգ,
Ինքն որոտայ ամեհի, դաւիր հատանէ սալասըմբակ,
Փըրկելով ըզվերելեալն ընդդէմ նետից շահատակեալ ։
Ակն 'ի գորով հաւալըսանն արկ եւ 'ի գութ ծընեալսեր.
Որ մայր հանգունատիպ ած ընդ որդեակըս իւր խընամ.
Կըրծէ ըզկուրծըն մայրենի ջամբել արիւն ձագուցն 'ի կեանս ։
Աստ ըզգայնոց ըզբանաւոր կենդանութեան բերեալ ըզտիպ,
Եւ անդ խաղացք ներքուսականք ըստուերակերպ առաքինեալ,
Խառնին յոզունք 'ի բուսոց առ 'ի բերել սերմն 'ի սերունդ.
Եւ պատկառուկ ինքնին ըզբնաւ շնորհել սերմանց ըզհիւթն 'ի ծուծ,
Մեռանի փոխանակեալ զանձն առ 'ի տալ զաւակ 'ի լոյս ։
Բայց կասիայն հոմացեղ, ամպար 'ի զրոյց ռամկին ձայնեալ,
Ո՛չ ի նուազ է զգայուն՝ ձըգէ երկայն կենաց նարոտ,
Հոտեան եւ խարտեշ 'ի յաջնային ձօձեալ ծաղիկ.

288 Պատկառուկ, լտ. Mimosa pudica, ֆր. Sensitiva, բուսակս այս 'ի նիւթական ամփոփմանէ ջղացն իւր թէ 'ի պատկառելոյ զանունն կալաւ. որով կարծիս տայ զկենդանական զգացման, որպէս յոլովք 'ի կենդանեաց 'ի կենդանական զգացմունս իւրեանց կարծիս տան զբանաւոր առաքինութեանց. որպէս տատրակն զողջախոհութեան, շուն զտիրասիրութեան, մեղու ժըրութեան եւ զհաւատարմութեան, ձի քաջութեան, եւ հաւալուսն զորդեսէր գորովոյ ։ Այլ որպէս սոքա ամենեքին 'ի բնաւոր բերմանէ գործեն զայս ամենայն, այսպէս եւ բուսոց ոմանց թուելն պատկառել եւ կամ այլ ինչ կիրս կրել՝ առ աչօք ինչ է, եւ չէք 'ի նոսա զգացումն ։

312 Կասիա կամ ամպար, լտ. Mimosa odorifera, ֆր. Cassia, տճ. ամպէր ։

Այլ բուրումն իսկ ծաղկին ընդ պարագայս ձըգեալ ամաց,
Ի պահարանս ընկուզեայս խընկահոտ զհանդերձանին ;
Նորահրաշ բանան ինձ Թատր արդ Չիլիս և Ամերիկ.
Ճիւաղք բուսականք, դըժնեայք 'ի Թոյն և 'ի վըրիժակ,
Դիմեն 'ի հանդէս վէճ ընդ ծաղկունըս մեր բերել.
Կանկատունկք ժանտաբոյսք և հալուէից ազգ զարմազան,
Այլ բնաւք իսկ յոյր բուսոց ազինք երաշտատունկք վերածայնեալ,
Փըլթթեն գեղածաղիկ կոկոնս յանկարծ պըտկեալ 'ի դուրս ;
Անեծք աստուածասաստք գան ընդ օրհնից հաշտք 'ի համբոյր,
Ոչ այլ ուրեք այնպիսի քըստմնեալ ոգով ըստուարասուր,
Իբր աստ առ 'ի ստուերել ըզմահացու ներհակակիրս ;
Ի սպառազէն բուսականի ազգին և դէմք իսկ դըժընդակ.
Ոմն օձատիպ առեալ զալար, այլ ոք ոզնւոյ կրէ կերպարան.
Ի սայրասուր ոմն 'ի սըլաք զինազարդեալ Թեւս արձակէ,
Ի մըկունդ բոլորատեգ յառնէ կանգնի միւսն ուղղաբերձ.
Իբր 'ի կըմբեայ ոմն 'ի վահանըս սաղարթուքն ամրածածուկ,
Ըզբազմասայր սուսերց բերէ սպառնող այլ ոք դիմակ ;
Բնաւք 'ի տօթ և 'ի յերաշտ 'ի տիպ Ճըպուան սխրատարփեալք,
Բնաւից օրհաս սառամանիք, բնաւից Թօնուտք ածէն վըտանգ.
Արկ մանրախիճ նոցին խըշտեակ կամ խեփորոց փըշուրս 'ի խոր,
Զի տարափք յորդահոսք գնասցեն ընդ մէջ զեռեալք 'ի բաց ;
Ըզգունազեղ դեղոց նարօտ 'ի բազմերփեան շողից արփւոյն
Նոյնք առեալ մատուցանեն 'ի հրաշակերտըս ճարտարին,
Որ անկայուն էից գեղոյ հնարի կայունն 'ի տատասկի ;
Որդնիկն 'ի զարդ կարմրորակ գնայուն ընդ դաշտս Այրարատոյ,
Ըզծաղկանք իսկ հակոտնեօք ձեռմի 'ի փայլ ծիրանազեղ ;
Բնէր արդ և զմիւս այլ զարմանս ոգել բուսոցըն ձեւեղկաց.
Ի յոգներամ ազգատոհմին են որ ճըղճիմք և գըրգասունք՝
Խամրին 'ի խուն ինչ խոնաւոյ, սարսուեն 'ի մուտս անդ Այծեղջեր.
Այլ են որ հաստարմատք մըրցին ընդ ցուրտ և ընդ տամուկ.

320 կանկատունկ, Cactus, հալուէ, Aloe, և այլ սոցին ազգի բոյսք՝ կոչին յոյր բուսակ, Piante crasse, որք 'ի բազում ցեղս զանազանին ;

339 Փարպեցին յէջ 20 ասէ. "Նաև զարմանս եղեգնաբեր բուսոցն ոչ ընդունոյն մուցանէ յինքեան ամենաբազմ դաշտն Այրարատոյ, այլ և 'ի նմանէ ծնեալ որդունս 'ի զարդ կարմրատեսիլ դունոյ ընծայէ օգտակարացն շահս և շքեղութեանս": Արդ նոյն որդունք և 'ի բոյս յայտնիկ գոյանան 'ի բնիկ դա-

Որդ տըկարաց եղեալ հըզօրըն մայրօրէն պատըսպարան,
Դայեկէ նոցին սընունդ՝ յինքն ըզխոստ բերեալ պատկէն.
Յայնժամ խափշիկն աղշի արմ ընդ քաջազնեաց ստեղանցն ընդ ծիլս.
Եւ չհամազգիք ծըծեն՝ 'ի նոյն արմատոյ հիւթ փըթթեն ծաղկունք.
Հըրձուեալ բերկրի երփնազան որդեկօք մայրըն թաթաւուն,
Եղբարց պըլասեւից ըզմիոյ մօր լուծեալ գերկունս.
 Մի դու մի լիցիս անտես և մանրերամդ երաշտատունկ,
Որ մինչ չև օրակըշիռ երկիցս արփւոյն պարունակեալ,
Ի կոկոնից ըզծաղիկ և 'ի ծաղկանց սերմն ընծայես.
Մի յաբոնիկն խոկ շաւաշար լիցի քեզ աստ անյիշատակ,
Մի և որ այքն 'ի սաղարթ խայտախարիւ և նըկարէն
Յարագուարձ վայելչացեալ գործեն գարուն յաւէրժական,
Ոչ քեզ ընդհատ 'ի ծաղկանց յաձախեալ գեղ ձըմերայնոյ.
Յաձախ 'ի թուայս անդ մնացօնք քեզ պատահեն ախորժականք,
Ո՛ւր արփին յայնժամ չեմի, զի վաղվաղէ տիւ յՈվկիան.
Որպէս աման անդ ձեռագործ ծաղկեղ գործէ քաղցըր պատրանս.
Բուսակք խոկ մըրգաբերք անդ մնացեալ զարփից շըրջան,
Զանպարտական երախայրիս ձըմերայնոյ մատուցանեն.
Եւ եղակ կարմրորակ անդ զամն 'ի բուն կարծէ գարուն.
Իսկ անանաս անդ 'ի պատկեր հայրենական երկնին պատրեալ,
Բերէ զհընդիկ միրգըն՝ փափկիկ՝ բուրեալ 'ի քիմըս նայապէս.
 Որքան է զըօսալի երկ մըշակին 'ի հող ծաղկանց.
Մանաւանդ որ յաւելու լինել հըրաշիցըն խելամուտ,
Զոր ներգործէ 'ի բուսեարն համազգիցըս մայր կից.
Իբր յարմատոյ անտի սըփռեալ հիւթն 'ի ստեղունս և 'ի սաղարթ,

ւաւան. այլ առ մեզ, որպէս բաղումք 'ի բուսոցս ոչ ծաղկել կարեն և ոչ պտղաբերել առ 'ի չգոյէ կարևոր ջերմութեան, և առաւել որդունքն բնակաւորք 'ի նոսա ոչ նժդեհանան առ մեզ:

342 Արդարև զարմանալիք են երաշտատունկսս այսոցիկ պատուաստք. զի ոչ միայն բոյսք փափուկք պատուաստեալք 'ի հզօրագոյնս՝ առնուն 'ի նոցանէ զօրութիւն, այլ և 'ի մի և 'ի նոյն արմատ բազում ազգք բուսոց պատուաստեալ՝ ընծայեն տեսիլ նորահրաշ այլակերպութեամբ տերևոցն և ծաղկանց:

351 Ազգ մանրիկ երաշտատնկոց՝ որք առ նմանութեան կոկոնիցն ընդ փոքրիկ մատին ագըռաւ կոչին բիտք, և որոց ծաղկունքն նոյնօրին գան 'ի սերմն. և են յազգէ փրփրեմից, Portulaca.

354 Յաբոնիկն շաւաշար, Aucupa japonica, թուփ՝ որոյ մշտադալար են տերևք, և խայտախարիւ փայլուն որպէս զկիձն կանաչ հին:

364 Անանաս պտուղ հնդիկ, որոյ համ նման է ելակի, իսկ մարմին դեղնագոյն և փափուկ որպէս զսեխ:

Ըզգուշաւոր 'ի ծայրին երկնէ անձնիւր ծին ըղձալին․
Զի 'ի նոյն 'ի հիւթոյ ոմն 'ի կարմիր ոմն 'ի կապոյտ
Եւ 'ի բիւր երփն երանգոց այլ ոմն այլազգ առնու տոգորս․
Լինչակամքն են ազգատոհմք տրոհին դրօշմաւ ցեղակարգեալ,
Եւ որ ինչ այլ տնկաբանին է անկ 'ի խոյզ և 'ի խնդիր․
Շուրջ 'ի կայս թատերաձև կայ 'ի յայթիռ մանկտին 'ի լուր,
Եւ ներհուն 'ի միջի արձանացեալ բուսաբանում,
Զանձնիւրքն 'ի ցոյց մակամառ ածէ ըզբարս և զկերպարան։
Իսկ դու ցե՞րբ, ազգ անմուսայ, ձեռն ըզլանջիւքդ ընդգրկիցես,
Ընարժան նախնեաց քոյին՝ որ ձիթենեօք պսակաւորք
Ընդ ուրեմն 'ի յԵրազմոյն պարէին մորըն դըպրութեանց․
Ի զհայրենի դէթ ըզվաստակըդ ցանկալիս հետազօտեա,
Զոր 'ի նըկուղս այրեացաւէր երկրիդ ծախեն զարք որկորայք։
Ոչ 'ի նամիր 'ի նոստ ցօղեալ քըրտունք մարդըրտատիպք․
Գտցեն աւուրք՝ զի ապերախտն ամաչեսցէ պղերդութիւն,
Յորժամ նըժդեհն 'ի յարեւմուտս խնամատուհին վրտարանդի
Ընդըր 'ի Թիլն 'ի ճմիկ տաճար իւր վերըստին արասցէ դարձ,
Եւ բոցակառ ջահիւն անդրէն ըզկոյր 'ի բաց մերժեալ խաւար,
Զիւրոց պարգեւացն ըզվաղեմի յայնժամ նըշխարս
Ըպրեցուսցէ անկորուստ 'ի լոյս ածեալ վերակենցաղ։
Լիցի յայնժամ ինձ 'ի դարանըս մատենից անցանել կալ,
Կամ հայեցի եղեգամբ իցէ՞ ընդ նոսին դալ ինձ 'ի վէգ․
Սակայն նոքա 'ի լուր ըզխօսըս հայրենիս ժառանգեսցին,
Իսկ ես 'ի ծերալըս գերեւոց հէք հայրենեացըս խիլ արկեալ,
Ի բոլբոս մագաղաթեայս ըզկորուսեալն հետազօտեմ։
Ըստղ բախտիս . . . այլ՛ լաւագոյն ինձ աստանօր լիցի լռել,
Զի զարժանին ողբերգութիւն բովանդակել աստ ոչ է կար։

380 Զպատկերէ դիցն դպրութեանց՝ որ յԵրազմոյն, տե՛ս 'ի Խորեն Բ․ 49 եւ և յԱգաթ․ ճը։

386 Զպատկերէ Աթենասայ՝ որ 'ի Թիլն, տե՛ս 'ի Խորեն Բ․ 14․ և յԱգաթ․ ճծ․ Նանեակն յայնեալ։

# ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑ

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

### ՉՈՐՐՈՐԴ ԳՐՈՑ

ՊՐԱԽՏԻՑ յօրինուածոյ նախատիպ եդեմական, և քառավտակ որ անտի բղխեալ գետոյն նկարագիր ։

Գուրց և ծառաստանաց հանդէս ։

Ամբարանոցին Ադրիանոսի, որ ՚ի Տիբուր, նկարագիր ։

Շամիրամայ կախաղանաւոր բուրաստանացն նկարագիր ։

Ծաղկեոց լերին և որ ՚ի նմա ամարաստանաց արքայիցն մերոց նկարագիր, և ընդ անկեամն նոցին ողբք ։

Զերեկորնական պարտիզաց անձնարկութիւն, և բրիտանեանցն պատկեր ։

Զածուոց տրոհելոյ հրամանք ։

Եդեմական դրախտին պատկեր, և երբ անտի նախաստեղծիցն ՚ի բաց անկումն ։

Որ ինչ զհետ այնորիկ բուրաստանաց հասեալ աղէտք ։

Յորդորակ առ հայկազն մանկտին պարապելոյ ՚ի մշակութիւն և ՚ի դրախտից դարման ։

Բերթոլին երբ ծեր և երբ յօրինուած քերթուածոյն ։

Զականատես վտարանջութենէն Խոտաչաց յիշատակ, և դրախտից որ շուրջ զքաղաքաւն Հռովմայ աւերած. վասն որոյ Գաղղիական բանակին անդր գալ հասանել ։

Վերջաբան հակիրճ ։

### ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ

# ԲՈՒՐԱՍՏԱՆԱՑ

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ԴՐԱԽՏԻՑ նախկին արարչակերտ և հեշտնակ միջակութեան
Անեղն ինքնին եկաց բնութիւն. ձեւ 'ի յԱդեմ տուք, հայկազնք,
Ընդ 'ի չքնաղն 'ի նախատիպ 'ի դրախտական մարզել յօրէնս։
Վայր հողմախաղաղ ընտրել 'ի ձմեռ է 'ի ծաղկոց,
Ուստի արեւըն կենսատու լըծէ գձիանն անպախաղաց.
Բիւրակնեանք անդանօր գնացեն ալեբբք գեղաձեւեալ,
Իբր ընդ երան գեղայարմար բոսորաբուղխ զեռեալ վըտակք.
Սօքա հողխահրաշ կազմեն ըզդրախտըն բանաւոր,
Ի դրախտ ծաղկաձեւ ազդեն նորին շունչ և հոգի։
Անեղաշէն դրախտին պատկեր յօրինեսջիր մանրանըկար,
Անոր քառաշըրտակ աղբերացեալ դեռ բըղխեն գետք.
Ընհանդուրժ ընդ կամըրջաւ յոդեալ Նըրաստըն բազմաղեւր,
Ընդ ծոր սուրակոզեղ և ընդ մայրիս անտառախիտ,
Թանայ զԱրմաւիր և զդաստակերտս դիւցազանց,
Շըրջապարոյր աւեացն 'ի ծոց կրեալ ըզպերճ Նորաշնդաշատ։

Լիճք և կըղզեակք հեղեղասաստ ուղխիցըն հետք կան և վըկայք.
Ինքն ընդ կըրկին վեցեակ առաջս ուղխինահոս բերանացեալ,
Ի կասպեանն ահեղագոչ խոխոջմանօք դիմէ 'ի ծով,
Յորձանուտ վազիւք ընդ սար կամարակերպ ընդոստուցեալ,
Յար թաւալէ փըրփուր, և յար կախ ընդ այերըս կան ալիք.
Յամաքաթև ընդ լոյծ յարկան անկեալ 'ի չու գնայ կարաւան.
Սըլխաձև յառնէ ընդ օդըս մամրացող ամպ գոլորշեալ,
Ի փայլ վարսիցն արփենից շողեալ աղեղըն բազմերփեան.
Ընդ Եփրատ պըսակաւոր շամբիւք խաղայ ծովածաւալ,
Յարօտըս ծաղկաւէտս հեղեղատեալ գարնանագոյր,
Մինչ աւեր լերանց հալեալ լուծանին ուղխք ոտնակառեալք.
Ոչ այնպէս Նիլոս ըզգաշտըս մեմփիականըս պարարէ,
Յորժամ 'ի Շնիկ եթերաձեմ հերձոտին անդք բոցատոչոր,
Որպէս Եփրատ զասքանազեան տածէ զերկիր դալարագեղ.
Կարկուրայք վահանաձևք ընդ յորձախոր սահին ընդ ձոր,
Եւ թևաձակացն 'ի բաղխիւն ցայտեն ալիքըն փըրփրադէզ.
Տարմատարմ կայտռեն ձըկունք արծաթափայլ և կարմրախայտ.
Մերթ խորասոյզ, և մերթ ընդոստ 'ի վեր ընդ ծուփըս շողացեալ.
Ընդ աղբերաբուղխ գետահետեալ, ո՛ Հայաստան,
Ընտառախիտ կայմիւք Գըրկեալ ընդ անդաստանըս քո ձեռի,
Նախանձուկս աղխամաղխիւքն արկեալ 'ի Սուր և 'ի Սայդան.
Եւ Փասիս քո որընթաց գըրկախառնեալ փարի զԿոլքեաւ,
Ուստի Հելլէնք զոսկեղէնիկ բարձին ըզգեղմըն դիւցազունք.
Տաւրեանք աստ և անտի զուարակաձև կարկառին սեպք,
Ինքն ընդ ձոր ոլորտապտոյտ վիշապօրէն առեալ գալար,
Զոսկեբեր մըղէ յորձանս 'ի սպերական խառն 'ի ճաճանչ.
Փասեանք զեզերըն ծաղկազուարճըս ծածկեն հաւք երփնանըրկայք,
Գոհար 'ի գնացս ալեացն ակունս երկնէ զսուտակն և զզահանակ.
Ի սոյն տիպ շըրջագայեալ աղբերք ըզդըրախտ քո արբուցեն,

19 Զքարավազ հոսանաց Երասխայ տե՛ս 'ի Հնախօսութեան հայաստանեայց. Ա. 115:

30 Զվահանաձև նաւաց՝ որ ընդ Եփրատ գնային, տե՛ս անդ. Ա. 217:

40 Զվիշապն և զհրաշունչ զուարակս, 'ի պահ գեղմանն ոսկւոյ առասպելեալս, յարմարեն ոմանք 'ի պատ 'ի պատ գնացս Փասիս գետոյ, և 'ի Տաւրեան լերինս. զի Տաւրոս 'ի յոյն բարբառ նշանակէ Զուարակ. տե՛ս անդ. Ա. 187:

41 Զսպերական կամ զսոփերական ոսկւոյ, տե՛ս անդ. Ա. 220:

Մերթ ընդ ծաղկունս համբուրէր, ընկըղմեկօք մերթ գլուխս արկէր.
Աստ 'ի ժայռից մըղեալ 'ի ստոր, անդ երկնապող ցայտեալ 'ի վեր.
Ուրեք 'ի լիճ խաղաղաւէտ կացցեն գործեալ ջինջ հայելի.
Վարսաղեղ կախեալ ուռեաց 'ի նմա զինքեանըս նըկատել.
Վէտ վէտ ընդ խիճս այլ ուրեք շողեալ գնայցեն քաղցր 'ի կարկաջ,
Քան ըզԿաստաղ՝ քան ըզՊերմէս ազդել եռանդըն քերթողին։
Առ հովանուտ ալքերբք խռունքն ընծայեցան Մուսայք 'ի լոյս,
Մարդենեաւ պըսակաւոր 'ի գլուխ պարուն կայ Ապոլոն.
Եւ ընդ Տեմպէ Պէնէոս վըճիտ ալէօքըն թափառի,
Բարձր 'ի Պինդեայ գագաթանէն կարկաջահոս գահավիժեալ։
Զընկատեանք և ձեռագործ լիցին ծովակք քեզ կայտառնակք,
Բըզխունական ծովալըճին 'ի տիպ փոքրիկ կերծեալ մըրրիկ.
Սաղապաճեմ անտի նաւկնեար դարձցի որսովք լի ակաղձուռ.
Զիւնափայլ գնայցեն կարապք մանեկաձև ուլամբքն 'ի ձօձ,
Թաւթիցըն թևձնկօք ընդ ծուփս 'ի լիւղ թխալարեալ։
Եօթներանգ հաւուց այլոց վանդակապատ քեզ ապարանք
Ի քաղցրանուագ դայլայլիկ հրաւիրեսցեն հոյս 'ի յերկնէ,
Բնակաւէտ զանտառըս քո առնել հիւրովքն երաժըշտօք։
Ծառաստունկ անդր ուղիք մերթ պատ 'ի պատ ալամողեալ,
Մերթ ուղղորդ երկայնաձիգ հովանաւոր գործեսցեն ռահ,
Սաւառնաթև ընդ խիեարս ամբարձուղէշ գըրկախառնեալ։
Յաղըխանեանն ամփրասատան աղէ դու ո՛ն երթ 'ի Տիբուր.

66 Ադրիանոսի կայսեր ամարանոցն մերձ 'ի Հռովմ 'ի Թիւուլի գեղջ, թէպէտ և արդ յաւեր դարձեալ, սակայն և 'ի փլատակսն է զարմանալի. և 'ի նշխարաց անտի և 'ի պատմական աւանդից գուշակեն հնագէտք որ ինչ առա նկարագրեալս է, և առաւելագոյն ևս: Անդրիք և սիւնք հանեալք յաւերակաց անտի, ընտանեւ զարդարեն զԹանգարանն վատիկանեան և զամարանոցն Ալպանի: Մեծագործութիւն ջրմղաց նորա ընդ եգիպտական բրգանցն համեմատի 'ի հնագիտաց: Անմարթ է 'ի մտի առնուլ զնկարագիր նորա առանց տեսանելոյ զայն. ընդ լայնակիր դաշտս կամարակապ կառուցեալ կան եռայարկ կայք երկվարայ և բնակարանք հեծելոց նոցա. ուր յաւուր միում առաջի կըշխականոյ յանկարծակի հրաման տուեալ, և 'ի վեր երևեցոյց 'ի դաշտին ալըուձի բազմագունդ 'ի տեսիլ զուարձալի: Երրեակ թատերք էին 'ի նմա, հանդերձ բնակարանօք դերասանաց. ձիընթացարան ընդարձակ և նաւամրցարան, հանդերձ շուրջ տեսանելեաց կայիւք. ասպարէզ ազգի ազգի խաղուց սուսերամարտ և ընբշամարտ մրցութեանց. մեհեանք Ապողոնի, Արամմեայ և Աստղկան. մատենադարան՝ ուր դեռ ևս նշմարին հետք նկարելոց ձեղուանցն. ձեմարանք իմաստասիրաց, ջերմուկք և բաղանիք, որահք և դահլիճք իշխանաց փառաց, սենդարամեաք և դաշտք ելիսեանք, կանոպայ մեհեանն և այլոց եգիպտական և հելլէն հնութեանց նմանութիւնք. նկարէն որահակք Պեկիլեայ՝ որ յԱթէնս՝ պատկեր, ուր զինական մրցութիւնք ածէին 'ի հանդէս. և այլ ամենայն երևելի վայրաց աշխարհի զուծարեալ կային անդ տեսարանք, որոց յարդ ևս կան և մնան հետք։

Եօթներեակ ըղնովաւ շրջապատեալ գլխան մրճմք,
Աքքոռնականն 'ի միջի յառնէ դարպաս դղեկօրէն.
Շուրջ 'ի հանուրց զայն 'ի կողմանց նրկատեն ռահք նոճխաճահք:
Կամարակապ 'ի խորաձորս գլրերօք հեծեալ կամուրջք,
Ընդ ջրրմուղ կախաղանեայ ածեն զուղխից ահեղ խոխոջ:
Ընդ բոլորս համախըռնեալ զան 'ի տեսիլ վայրք ցանկալիք,
Աշխեանք երանաւէտ դաշտք և յորձանք աւերնականք,
Ընդ պարկացիր զարափոնս ճնընպատիկ ոլորտացեալ:
Հեղկէն տաղաւարաց կամարք 'ի սիւնս յեցք 'ի կըճեայս,
Եւ շուրջ տեսանելեաց կայք մահկաձև աստիճանեալ.
Յաղթաւէր նրժուգից արձակարանք 'ի խորոխտ դուպար.
Աթենականըն Պիկկինէ հընչեալ զխուց անդ 'ի շխահիւն,
Ուրանոր Միլտիադ նըկարակերտ զօրավարէ:
Ձեռագործ անդանոր ծով' 'ի կուռ նաւաց ալէկոծեալ.
Ճեմարանք իմաստաճեմք, և 'ի տաճար Ապոլնի
Իններեակ ըղնովաւ ակըմբեալ քորք իմաստուհիք.
Եւ ստոյիկեանն անդ դահլիճ' ուր վիճարդեայ Քրիսիպ ճառէ:
Ընդ զօրանիստ ըստորերկրեայք հեծելադոնդս 'ի վէր ժայթքեն.
Միհեան մեմփական ընդ գողուղի նենգեալ պատգամ,
Եւ աղանդ հեռոց բաւղին ոլորտապտոյտ նիւթեալ պատրանք:
Բուրգն և կոթող, սիւն և անդրի խառն ընդ նոճիս արձանացեալ,
Հրաշակերտից տիեզերաց գեղայօրէն պարառութիւն:
Օ՜ն զանտառն աստցից կաքաւարանըս սոխակաց,
Օ՜ն զաղբերս հոլանաւորս 'ի գեղուղէշ կաղամախեաց.
Ուրեք հեզիկ կայլակեալ գործեն բիւրղեայ լիճ թափանցիկ,
Ընդ երկրաւ այլ ուրեք դարանամուտ ղեռեալ երակք,
Ողողանեն յանկարծաբուղխ պատեալ ըղքեղ շուրջ անխախուստ,
Որպէս յարձակ 'ի դաշտի շրջապատեալ անկք թծմընկեցք,
Մինչ դղըրդէ յողդողդ զարուն ոստընդոստ փայլատակմբք:
Այն նրհանգ ծովական ընդ ռունգն 'ի վեր փըրքեայ ջրացայտ,
Ընդ ընդ ժայռըս ձեռագործս ականակիտ բըխէ վիժակ,
Ահաղին դըդըշմամբ ընդ քարանձաւըս գոռալով.
Հընչէն կամարքըն խորափիտք, սաւանի թուխ անդ սօսափիւն:
Քառաձի ընդ ելն 'ի դուրս խաղայ Պլուտ կառավարեալ,
Փըրփրերախ սանձք ամեհեացըն տատանին երիվարաց.

Սահեալ թեւթեւ թռանին ընդ ծայրս ալեաց անխուքըն կապուտակք․
Տրխոնք աջեայք եւ ահեկինք գնան ընդ նաւէտ ալիս փողաբք․
Եւ մէտ 'ի մէտ ընդ առեղունըն խոնարհեալ գլջանին ուղիք,
Ճաճանչ ջրեղէն եւ ձեղենակ յօրինելով 'ի շատրուանս,
Ափնածիր 'ի վարսագեղ ծառոց անդուր պերճացեալ ծով․
Չխնաթոյրք ընդ ծուխս 'ի յոյղ գլման կարապք եղերերգակք,
Եւ ոչ Կայիստր այնքան եղերս ընդ ալիս իւր լըսէ հընչեալ։
Քաղցր է բաղձել առ նովաւ, քաղցր 'ի կարկաջ ուղխից նիրհել․
Ոչ այնպէս ծովափունք 'ի յերրադարձ կոծեալք յալեաց,
Որպէս ընդ ձորըս քարախիտս ընթացք ուղխից են ախորժակք․
Մանաւանդ 'ի սօսաւիւն սօսեաց 'ի ստուեր անտառախիտ,
Հուպ 'ի դըրախտ բուրաղուարթ՝ ուր ծաղկահոտ շընչէ զեփիւռ։
Զեղու անդ սիրտ, եւ բարձր 'ի թռիչս անդամօր միտք թեւակոխեն․
Անդ ծընաւ իմաստութիւն, անդ Ակադեմ եւ Լիկէոն
Եւ սիրելեաց իմաստութեան աւագախումբ կային կաճառք։
Սոկրատայ եւ Պղատոնի անդ հընչեցեալ ձայնք գերիմաստ,
Եւ անդամօր սէր իմաստից թող ըղձերջին հետոց կընիք։
Անդր 'ի սփոփումըն դիմեն 'ի յարքունեաց աշխարհակալք,
Անդէձք յոգնավարանք մերժեալ անտի սրանան 'ի բաց։
Ընդ սարաւանդ լեւկադեան չէ հարկ 'ի բոյժ տարփից վազել․
Բամբիչն ատրնական ոչ Արալէզ բուժեալ դիուք,
Եւ ոչ յուռթից բըժժանօք 'ի դիւցազինըն տըւփմանց,
Բարձրաբերձ կախէ պարտէզ 'ի յամբարտակըս կոփածոյս․
Քառեակ զիրերօք յառնեն 'ի թռիչս աստիճանեալ
Պատուարք վիմակուռք, զոյգ շուրջ Եփրատ թանձր ստուեր։
Կան անտառք օդակառոյցք, ծաղկէն յայերըս բուրաստանք,
Եւ յերկնապիշ շատրուանաց անհատահոս ցայտեն բըխմունք․
Անդ արուեստ յաղթէ բնութեան, եւ գետն 'ի սատ ջրաբուղխ ուղղից
Անդ 'ի գնացիցն արտուղի վերելակեալ աղբերանց։
Եւ դու, Լեառըն Նպաղկէոյ, զո՞ր աստ պարծանս առից երգել․

121 Էր 'ի Լեւկադիա մերձ 'ի Նիկոպօլիս սար մի բարձր յոյժ, ուստի առեալ էին տարփաւորք ընկենուլ զանձինս 'ի ծովն առ 'ի բժշկութիւն տարփանացն։

122 Շամիրամայ սէր ընդ Արայի, եւ որ զհետ այնորիկ դէպք, յայտնի են ազգայնոց. իսկ զբուրաստանացն 'ի Նմանէ յօրինելոյ առ Եփրատաւ, տես 'ի Խորէն. Ա. 16։

ԶԱյնմանցն որ 'ի քեզ սրբոց ըղձեալս լուսաւորս,
Թէ զՄատենացն որ 'ի քէն իջեալ նոյին հրաւիրակաց.
Մի զայսոսիկ մի, Մուսա, զհրեղինաց երգըս պարուց
Քնարիս հողեղինի տացես հրաման նըւագելոյ.
Այլ ըղձըլախտիցն որ 'ի նմա պատմեա դու զգեղ ինձ ո՛ն և զփառս,
Զարքայից հայկազանց անպարտատան վայելչութեան.
Բընաւք անզամօր համախըմբեալ ազգք բուսականք,
Որքանեաց է ընկալուչ դեռ ևս երկիր աստուածանէծ,
Ոչ 'ի տեսիլ երփնագեղից ևեթ ծաղկանց ակնապարարք,
Այլ 'ի բուրումն խուկ անոյշ զըւարձընծայք հոտոտելեաց,
Պըտղնին մարգըրտայեռ ընդ այգն 'ի ցօղ քաղցրածաւալ.
Զեռամն վըտակք արծաթիք, ցայտեն աղբերք կենդանաբուղխ.
Անտառք դալարազեղք, և երէոց արգելարանք,
Ուր թագաւորացն շամփուրք ոչ չըկահէն երբէք ունայն.
Շուրջ երագագք սըփռեալ, պատի թեթևընթաց ասպականին.
Վայրենեաց հօրանք քօշից վաղ ընդ կատարս առեալ բըլրոց,
Նաև եղջերուք ընդ ծառաստանըս խոյս տըւեալ արշաւասոյր.
Ի լայնալիծ պարթևական ձայթէ ուժգին նետ եռասայր.
Ազատագունդըն ձիախրոխտ որսոյն ըղձեա փախըստէից
Ընդ սօսաւին սաղարթախիտ մայրւոյն գըլխեալ շահատակէ.
Ոչ անագգակ սէր դըժնէին Արեայ վառեալ ըզնա 'ի զէն,
Ոչ ոխերիմ ախոյենաց հրոսակք առ դուրս ահա հասեալ.
Զիթենեաւ պըսակաւոր ձեռմբ անդ ձօխ խաղաղութիւն,
Պէմեոր և Պոմոնա զուարթ անզամօր յօրինեն պար.
Ընդ գարուն ամենագեղ, և մըրգաւէտ պըտղնի աշուն.
Տիկնայք հայկազունք և օրիորդք արքայազինք
Ընդ ձեռն առեալ գերունակ զարմից ծաղկանց յօրինեն զարդ,
Շուշանք զընայունք և վարդենիք չըրջագայեալ.
Նաև մանրերամ մանկտին ընդ խաղ դարմանամուտ 'ի թըփաստան,
Ծըղօտ ծաղկաւէտ ուերկայն կակաչըս ձօձելով,
Թռչչին ըստէպ ընդ սաղարթիւք և ստէպ անդրէն գան յերևան,
Պաղտաձիգ 'ի յիրեարըս կարմրորակ արկեալ խըրձոր.
Ընթա յաւէրժ, դար բարեբաստ, ընթա 'ի փառըս հայկազանց...
Այլ զամենայն ինչ, աւա՛ղ, յեղաշըրջէ բախտ ոխերիմ.
Ո՛հ, 'ի սըգըւոյն ողբաձայնեալ չարագուշակ կուժէ ագռաւ



Ըզտըխուր կողոպուտ գեղեցկութեանցըն Ոսաղկեց։
Ըզնա մայրէք Արարատայ լան, նոճաբերըն լայ Տաւրոս,
Լան և սաոնապատըքըն Կովկասու ըզնա պարեխք·
Առիւծք խոկ արամեանք հեծեծելով մռնչեցին,
Կոծ առեալ ելաց Եփրատ, և բիւրակնեանք գետ լան աղբերք·
Սեաւթոյր էջ վարագոյր, ծածկեաց ըզթատրըն ցանկալի։
Յելից 'ի մուտս արդ արեւու յերեկորնեայն անց 'ի պարտէզ,
Ուր քորք Եսպերեայք կան խընձորոյն ոսկեաց 'ի պահ,
Ուր ընդ լախտին Հերակլեայ բիւր որկորովքըն գլխապատ
Անկեալ դընի երբեմն աշխեղ վիշապն 'ի սեամս անդ դարմնեալ։
Եւ բըխմանեանցն խոկ 'ի գլխին տամ քեզ հրաւէր բուրաստանաց·
Որմք դալարագեղք յառնեն կանգնին անդ բուսականք,
Ածէ փայլուն զայն երկաթով մըշակ 'ի յարդ ու'ի կերպարան·
Սարդ և տօսախ և նոճի ոչ ես 'ի բնիկ անձն 'ի տիպ·
Այլ 'ի նախանձ գեղարուեստից հըլուք ձեռին անդ ճարտարի,
Կեսք սիւնաձև ամբառնան, այլք 'ի կամար կարակնակերպ·
Բուրգն և կոթող և դահոյք դըրուագօրէն կանաչացեալ,
Սըրահք տընկընագործք և բուսաբեր առեղնեալ թատերք։
Անդ դադարէ հարկ պարուեան վիմին, յառնեն սեաւք տերևեալք·
Դուռն 'ի բաւիղ ծառաստանեայ ըզքեզ 'ի ներքս առեալ ածէ·
Ընդ թխըրըն խառն ըստերխուրեալ դընայ ուղիղն անդ արահետ·
Դեդալեան լուծցես թելիւ զանել հետոցըն տարակոյս։
Բըլուրք ձեռագործք և քարաժայռք արուեստակերտք,
Խորաձորք և աշխըկեց ժայռից 'ի ժայռս ընդոստ կամուրջք,
Անձաւք և նախանձորդք համադոյից էից տեսիլք,
Եւ իբր այն որ 'ի տաստակըս նըշմարեն նըկարակերտ
Գըմբէթք կիսաւերք և մահարձանք վաղընջականք,
Յորս ոխերիմ ժամանակըն 'ի դառ աչաց կեղծեալ եղեւն,
Անդ ամենայն ուրեք գործեն խառն ընդ մայրիս ախորժ պատրանս։
Սարդ 'ի մէջ անդըր ծաղկեղէն առ վըտակաւ խաղապատի·

174 Եսպերեայք էին քորք երեք դստերք Եսպերոսի եղբօր Ատլասայ. և էր նոցա դրախտ զուարճալի յԱփրիկէ, ուր էին ծառատունկք ոսկեպտուղք, և 'ի պահ պտղոյն կայր վիշապ աչագին բազմագլխի, զոր սպան Հերակլէս։

177 Բրիտանեան բուրաստանս իմա զամենայն եւրոպական պարտէզս ըստ օրինակի անգլիացւոց յօրինեալս ծաղկօք, անտառօք, աղբերօք, վտակօք, և այլ ևս արուեստակերտ տեսարանօք։

Սաւառնի զքարայրիւ սլխատակախառ անդ կաղամախ,
Եւ բաղեղն սոլորգոյն հիւսէ զձապուկ ուռս ընկոլաւ.
Ի փապարեալ 'ի սղոցոյն ոսկեփայլիկ մեղուաց գընդակ
Ըզքեզ մեղմ 'ի բըզզիւն յորդորէ սոէպ յանդորր 'ի նիրհ ։
Ճողինչէ ճըպուռն 'ի ճըղին, ճըճուռն ճընճըղուկք ճռուողակինք.
Երգս անտի արտուտձն առեալ, երգըս եզող կորաքամիկ,
Մինչ պատառէ զոտաժանաւոր ակօսն արջառ դանդաղաքայլ։
Ի բարձունէ ապարանիցն ա՛րկ ընդքեւ ծ՛ն ակն 'ի գլխին,
Կան համայնք շուրջանակի քեզ ակներեւ անդ 'ի բացէ.
Իսկ բուրաստանք զըստորոտովք ծաղկաւետեալ ածեն պըսակ,
Նուրունն ընդ պատուհանս անդր 'ի ներքըս ծաւալեալ.
Եւ յեւս ընդ սեամն այգորէն ակլմբահոյլ ըզքեզ ծաղկունք ։
Մինչնաշուխող անդր ուղիք ածեն 'ի ձեմ անձնիւրցն 'ի յայց,
Ըզպատշաճ անդանոր ուցխ զօրէնս ածուառելոյ ։
Ի դրանդխս բուրաստանին խնձ ուշ 'ի կուրծս անկեալ 'ի ձահ,
Աներկրաչափ ոք անդր 'ի ներքըս մըտանել իշխեսցէ մի ։
Ճախր առեալ զուգահետ ընդ մէջ ածուոց խաղայցեն ուհք,
Մերթ համաչափ եւ համաձեւ հանդէպ միմեանց հատեալ ածուս,
Մերթ զանազան 'ի չափ ու'ի ձեւ ըզընռու 'ի բաց հեռքեալ ձանձրոյթ.
Եւկլիդեան մակմնաւ նախ զարահետըն զըծագրեալ,
Կանաչազեղ ապա եզերքք ընկայս ծաղկանց պըսակեսցես.
Նոլորշի եւ ձրուարդ չորեքկուսի եւ քառանկիւն,
Եւ որ ինչ այլ ուսողացն յօրնաղիմի եւ յօրինացն
Խառն ընդ իրեարըս պատշաճեալ 'ի մի բոլոր յեռուցուն ձեւք,
Մասունըս գործելով հեշտալաստակ քեզ արտորէս ։
Խարխսխք եւ սինակք 'ի կիցս անկեանց կացցեն 'ի զարդ,
Ըզծաղկակալ բարձեալ զանօթըս բերելով խառն ընդ անդրիս,
Եւ զհիւսկէն 'ի գըզըրդ սակարըս շուրջ ծաղկանք 'ի կախ ։
Երփներանգ երկրէն իսկ տարը յաճախեսցէ զըրախոտն շըպար.
Կըկարէն նոքօք զածուս ձեւակերպեալ յերիւրեսջիր.
Ծաղկունք գետնասողք եւ աղաւնիձըն զունազոյն

212 Աներկրաչափ ոք՝ եւ այլն, է բան Պլատոնի, զոր 'ի սեամս դպրոցի տրամաբանութեան արձանագրեաց, յայտ իմն այսպէս արարեալ՝ զի առանց այնորիկ դժուարաւ ոք տրամաբանել թէ կարիցէ ։ Արդ ըստ դրոյն առեալ է բանս 'ի յօրինուած ձեւոց բուրաստանացս, որ չափով եւ համեմատութեամբ կազմին ։

Քան ըզգորգ անկուածոյ քան ըզկիտուած յախճապակեայ
Գեղազարդ քեզ յատակ յօրինեսցեն նըկարազգոյն:
Զի՛ զորմոցն ասացից ըզծաղկազարդ վայելչութիւն.
Ոչ կերպասք բեհեզեայք և ոչ դիպակք ոսկեճամուկք
Որմնկալք արքունեաց այնպէս չըքնաղ յօրինեն զարդ:
Այն ինչ զարուն ծաղկապըսակ գայ ձեռն 'ի դրախտս առնուլ Հայոց,
Մինչ հովիւք Այրարատայ ըզձիւնաթոյր մերկանան քօղ,
Եւ պըճնին ծառաստանք սաղարթազեղ կանաչացեալ,
Մինչ յայգեստանըս Գողթան ուռնուն 'ի զուարթ պըտկունք 'ի յուռ,
Եւ 'ի բառաչ ճարակաւոր խաշանց հընչեն արօտք և բլուրք,
Մինչ 'ի դալար թաւաթուփ տափունըք ընդոստ ճարակին ուլք
Եւ սարեակն և սոխակ առնուն փոփոխ գեղգեղել երգ,
Ըզգլնակեաց կենցաղոյ ախորժ յայնժամ է զփորձ առնուլ,
Ախորժ ամպըրաստան յարկաց յայնժամ է բնակութիւն:
Այս 'ի սկըզբանէ անմեղութեան շնորհեալ նըսէհ,
Ի դրախտին փափկութեան կացին ամոլքըն նախաստեղծք.
Յանկապատ դալարազեղ ըզվեհաւայրըն պըսակէր,
Շուրջ 'ի բայէ պատէին անտառք խոսունք հովանաւորք:
Մըրգաբերաց անդ փայտից համախըմբեալ ազինք բոլոր,
Երփներանգ պըտղովք կողերըքն հակէին ծանրաբեռնք.
Ծաղկեալ բոլոր արտորայք, բոլոր յայնժամ երկնէին ծառք.
Ընդ զարուն ընդ աշնայնոյ պարէին ձեռն 'ի ձեռն ածեալ,
Գարուն յարազուարճ, և պըտղալից յաւերժ աշուն.
Իսկ ձըմեռն ոխերիմ անտի 'ի սպառ մերժեալ 'ի բաց,
Զեփիւռ քաղցրաշունչ բարձեալ 'ի թեւս իւր բերէր
Բուրումն անուշահոտ զանաերինաբար ծնելոց ծաղկանց:
Քաղցր էր անդ ծայրակարմիր արշալուսոյ այգուն այգուն
Սըփռել մարգարիտս ընդ ծաղկաւէտ դալարաբոյս.
Ի սկըզբնածագ ճառագայթից փայլեալ լերանց ծայրք ոսկեզօծ,
Եւ լռութիւն գիշերոյ 'ի դայլայլիկ լուծեալ հաւուց.
Երփնից 'ի լոյս ցոլացութիւն, և յակընթեայ ողկուզաց փայլ.
Հասկաթուռ ծղօտից ընդ դաշտըս ծածանել գեղածըփեալ,
Եւ վըտակաց ականակիտ ալեօք ընդ մարգըս թափառել.
Աղբերք հովանաւորք և դալարիք դիւրինք 'ի նինջ.
Քաղցր ընդ երեկըս խոնարհումն արփւոյն 'ի մայր իւր զովագին,

Արծաթափայլ լուսնին մահիկ, և բոյք աստեղց յարաթուելոյ·
Նշկէր աղօտաջահ իբր հարսն 'ի շղարշ իւր պարարքող,
Եւ կայծոռիկք ըղձաղկանք աստեղօրէն թևապարեալ։
Հոյլք երկոց ուերանք հաւուց համբոյրք ընդ մեղ յայնժամ և հաշտք,
Ոչ վայրէք 'ի նոսա, ոչ ընտանեակք զանազանեալ,
Հըլուք ըղձեօք փարէին իբր ըղգաւնիկն և զաղաւնեակ,
Առիւծ յուշկրծ ըղձանիս, անդղ ըղմնգիլ իւր ամփոփեալ։
Զայգախի նախաստեղծիցն երանաւէտ վիճակեալ վայր,
Ո՛ր ապա անտի 'ի բաց անկան՝ ինձ ո՛ն պատմեա, Բրօմէեղ,
Որ փակելոյ դրախտին սուսերբ բոցեղինաւ պահակերես։
Նախանձ չար, նա 'ի դրախտէ անտի զնոսին արտաքսեցոյց·
Հարու ուաղափող, հրեղէն զօրաց գոյր պատերազմ·
Կէսք աստուածընդդէմ, այլք հակառակ նոցին զինեալ,
Գնդին 'ի ճակատ· եթեր մարտին էր ասպարէզ։
Ի բարձրաբերձ երկնաձեմ ուղի, կաթին յորջորջեալ ծիր·
Ընդ այն յարաթռուցեալ հողեղինաց պարէն կաճառք·
Գահոյք արքունականք անդ 'ի վերոյ ամպոց արկեալ,
Արուեստկելն դուռն աստուածօրէն 'ի նմա բաղմէր·
Իւր 'ի դէմս նորին դրօշմեալ ժըպիրհ յանդըգնութիւն։
Զայրոյթ կատաղի յախուռն 'ի սաստ զօրավարեալ,
Տայր գլխախումբ բանակին խրախոյս 'ի խազմին խիզախել։
Մէգ ըմբոքօք աղջամղջին ապարափակ էր հովանի,
Զօրքն և զօրագլուխ նրբեմաստուէր պարածածկեալ·
Գոչէր խորին առ ըստուերաւն այնուիկ էր տիւ լուսապայծառ։
Այգոյն յոխորտ ախոյենին կազմեալ առնի ճակատամարտ,
Ընտի պայծառ լուսափիլ խաղայր ճամբարն աստուածախումբ,
Միքայէլ իմանալեացն էից անդ ծայր զօրապետեալ։
Նորահրաշ էր և չքնաղ երկնազումար մարտին հանդէս·
Յական թօթափել ըսկիզբն և մէջ և կատարած
Զինուորութեանցն անմարմնոց փայլակնաձև հանդուստեալ։
Ոչ այնպէս 'ի նըշուլից արփւոյն արագ մերժի խաւար,
Որպէս բանակն այն սևադունդ 'ի գերարփին զօրաց փլուզեալ
Ընկաւ գահավէժ, դըղըրդեցան սանդարամետք·
Ծածկեցին ըղնոսա հեղեղք հրեղէնք յորձանասոյզ,
Բոց ընդ խաւար անդասոր խառնեալ տեսիլ հրաշանըշան·

Եւ որպէս շանթ 'ի յերկնէ յայնժամ ըզվէսըն Բելիար
Եհար պատգամ հընչեալ առ ազգ հողազանգուած . Լըցէք ըզկայս
Ապստամբօղ թըշնամւոյն՝ որ 'ի յերկնից ըստորանկեալ ։
Մըրմըռեալ անոխ դիւձ անդընդեհնչեալըն դատապարտ
Օձաձև 'ի դըրախտն 'ի ներքըս սողոսկել առ 'ի հրապոյր . . .
Փախիր, նախանձոտ, մի դու 'ի յիժըն խորամանկ
Ի փառաց իսկ առ քեզ ընծայաբերըն վըստահիր ։
Ուղղաբերձ նա զտուտն ընդ քարշ ածեալ ըզհետ իւր գալարուն ,
Ագըլխօղ լեզուն ընդ քիմըսն ձեպ ձապուկ յեղյեղելով ,
Կեղծ 'ի բարբառ կեղծ 'ի գորով յեղեռն 'ի նոյն ըզնա դըրդէ ,
Զամպարիշտ 'ի նմա ըզքաղց գերագոյն յուզեալ ընութեան ,
Օձել պըտղոյն ճաշակմամբ յաստուածասաստ 'ի հրամանէն ։
Ի ցանկն ամբաւիկ բացաւ 'ի մուտս յայնժամ խրամատ ,
Կենն 'ի յօձէն պատրեալ, և այրն 'ի գութ կընոջըն պարտեցաւ .
Հեծեծեաց բնութիւն, և զդողանի հիմունք երկրի յայնժամ հարան .
Յայնժամ նախ ըզգերարտօսր հոսեալ երկինք մըթագնէին ,
Եւ խիղճ 'ի սիրտ մեղապարտիցըն ճարակէր բոցատօչոր .
Անդ ըսկիզբըն հառաչանք, անդ նախ կըրծոց առին բախիւնք .
Յայնժամ նախ եկաց Ադամ, և արտասուք մարգըրտափայլ
Իջին 'ի ծնօտըս հարսինն իբր 'ի կարմիր ցօղեալ 'ի վարդ ։
Այլ աւա՜ղ, խոյս ետ Թըռեաւ բախտն 'ի նոցունց գեղանըստիկ .
Եւ անդարձ ըզնոցին վըճռեալ պատգամ զելս 'ի դըրախտէն ,
Բոցաձև ըզնոսա վարէր սուսեր քրովբէական
Յերկիր մահահրաւէր յանմահութեան վայրացն 'ի բաց ,
Անմատոյց ըզդըրախտըն սրովբէափակ դուռըն պահեալ ։
Բուրաստանեաց յայնըմ հետէ սիրան աղէտք յաւերժականք .
Տարերք ոստընդոստ ընդդէմ նոցին գումարտակեալ ,
Աջակիցք ընդ հիւսիսի ամպրոպք մըթին կարկըտաբերք ,
Հարկանէին ըզձիւնափայլ շուշան և զվարդ ծիրանագեղ .
Աշուն 'ի ծաղկանց՝ և 'ի մըրգաց կապտեալ գարուն ,
Եւ ձըմեռըն բըքայոյզ առնէ նոցին դարձ 'ի յաւէր ,
Յաւերժ ընդ ամարան մըղեալ անհաշտ ճակատամարտ ։
Ուր նարդոս անուշահոտ և մանիշակ ծաղկէր բուրեան ,
Աճող հարկանող և սուսարափուշ յանէն դըժնիկ ։
Բուսական ազանց գաւառք յայնժամ ցըրուեալ բաժանեցան .

Կեաք յանկոյս ովկիանոսն ծովուն մեծի սահեալ նըժդեհք,
Այլք 'ի յափունս՝ ուր Ռօլաս բարձեալ 'ի յուս իւր բերելով
Ըզգուոյն երկնից աստեղազարդ շրջէ և զհաս սփիռաձեմ.
Ոմն ընդ հիւսիս սլրաստեղն, ոմն ընդ հարաւ ընդելացեալ,
Դըժկամակէն արդ ընդ օտար երկնաւ բնակել տարադիմիկք.
Այամանակ և զաղօտ եղեմական դրախտին պատկեր,
Առ 'ի սրբել զարտասուս և զաքսորանս առ 'ի սփոփել,
Հազիւ մերոյ եղեւան ներէ զարդիս մեզ զատանիլք.
Մանկտի հայկազն, որ 'ի Վայոց ձոր առ սեմովք դրախտին ծընեալ,
Ըզձեզ մանաւանդ, եկայք ո՛ն, տաղքս իմ հրաւիրեն.
Սրբիմք Որփէոս ըղկարծրատորըը քարհացիս
Եւ զքարաժայռս 'ի լերանց կարաց յաձախ վայրաբերել.
Կացին գետք ոռնակառեալ, ածան գազանք 'ի զգօնութիւն.
Մի՛ դու մի, զգօն մանկըտեակ, 'ի լուր տաղից կաս անյորդոր.
Ծաղկեցո զեղեմական շուրջ ըզսահմանըս մըշակեալ.
Այսպէս տաղիցս այսոցիկ դիւրել լիցի քեզ ըզվաստակ
Ի գըրգումնըս ծաղկանց, 'ի յօրինուած բուրաստանի.
Իսկ ընդ որայս թէ ախորժես շկահել փայլուն մանգաղ 'ի հունձ,
Կամ շրջել ձրաքաղ ընդ այգեստան ողկուզաւէտ,
Դայեկել հիբլեան մեղուաց, կամ զեղմնաբարձ հօտից հովիւ
Կըշտալինդս ըղնոսին ածել 'ի գոմ անդր ընդ երեկ,
Քնարին ոսկւոյ Վիրգիլեայ երթ քաղցրուսոյց տաղիցն 'ի լուր.
Ես եմ Վըրոյր ես հայկազն, ոչ 'ի դրախտէն եւեթ նըժդեհ,
Այլ 'ի վայրաց իսկ ուր նայն ծաղկաւէտեալ աստուածատունկ.
Քերթող և զիս պիերեանք կացուցին քոյք իմաստուհիք,
Սակայն իղձ մըշակութեան եղև և է 'ի յիս յաւէրժ,
Ընդ սէր խնամոյ զեղապարոյր 'ի ձահ ձեմեալ.
Ըզդրախտոյ դարմանելոյ լինելն ընդ կիրթ վարժիցն անցեալ,
Ծաղկատարփիցն 'ի հրահանգ նուսխայօրէն արդ նըւագեմ,
Առ ափամբք Տիբերի մերձ 'ի սորոտ Կապիտոլին,
Մինչ հէնք յաղարտ զամբաստանըս շուրջ զինև առնուն վարել.
Արդէն նոճեարըն վաղեմի և կաղամախք տապաստ արկեալ
Ըսպառազէն հեծելութեան ախոյենացն ընդդիմարդել,
Եւ զպատակերտըս դարուց ջարդեն զանտառըս մայրեաց.
Առաթուր ծաղկունք հարեալ, բեկտեալ բազմոցք հիւրոյ ծաղկանց.

Ոչ ամպրոպաց խեռելոց եղեռն հանգոյն գործեն գուպարք,
Ոչ կինճ վայրենի և ոչ գազանք այնպէս մոլեալ.
Հասի՛ր Ուտինոյ, արգե՛լ զօձիրն ըսպառնական:
Խիտ ընդ խիտ ճիգն ըզշանթիս այրեցագործ հրաշէն ձայթմանց
Յաղթութիւն ապստամբիցն ոտանդոստ փայլատակեաց,
Սըրբոյ քաղաքին վերամարտիկ յաղթանակէ:
Տարայք ըզտաղս իմ գայտունիկ, տարայք հողմունք յունկն հայկազանց,
Յեփրատայ մինչ 'ի Գանգէս՝ ուր արամեան հընչէ բարբառ.
Եւ թէ Մուսայն իմ ոչ սրտէ, ոչ խոտեսցեն սպաք 'ի նոցունց:

370 Ուտինոյ սպարապետն մեծ գաղղիացւոց, որ եկն եհաս զօրօք 'ի Հռոմ, և գագարեցոյց զաւեր և զաւարառութիւն քաղաքին և զդրժողաց անգատամեաց յամին 1849, յորում ամի գրեցան տաղքս:

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

## Ա


Ադամ. Դ. 311. 316. տես և Նախաստեղծք, Սկզբնամարդ:
Ադրիանոս. Դ. 66.
Ազորիկ. Ա. 240.
Աթենաս (մայր դպրութեան). Գ. 380. 386.
Աթէնք, աթենական. Դ. 78.
Ալանք (սուրբ Սուքիասանք). Դ. 152.
Ալպիք. Բ. 300.
Ակադեմ. Դ. 115.
Ահեկան (ամիս). Ա. 475.
Աղեղն (ծիածան). Բ. 348.
Աղեղնաւոր (աստեղատուն). Գ. 128.
Ամազոնեան. Ա. 257.
Ամառն. Ա. 60. 191. 462. Բ. 74. 265. 301. 345. 435. Գ. 66. 157. 194. 202. 360. Դ. 329.
Ամատունի Վահան. տես Վահան Ամատունի:
Ամերիկա. Ա. 256. 437. 376. Գ. 126. 227. 282. 317.
Այծեղջիւր. Ա. 448. Գ. 345.
Այրարատ. Ա. 297. 306. 317. Բ. 249. 405. Գ. 252. 339. Դ. 168. 234.
Այրարատեան. Ա. 404. Բ. 4. 311. 386.
Աշուն. Ա. 22. 165. 189. 260. 459. 480. Բ. 39. 90. Գ. 314. Դ. 249. 250. 327.
Ապելլես. Բ. 255.
Ապեննին. Բ. 299.
Ապողոն. Դ. 52. 81.
Ապրիէլ. Ա. 263.
Ասիա. Բ. 415. Գ. 227.
Ասկլեպիոս. Ա. 438. Բ. 388.
Ասորական բամբիշն (Շամիրամ). Բ. 516. Դ. 122.
Ատղիկ. Ա. 226. 279. Բ. 299. 400.
Աշքանազեան. Ա. 292. 319.
Ատլաս. Գ. 85. Դ. 334.
Արաբ. Ա. 240.
Արալեզ. Դ. 122.
Արամ. Բ. 355.
Արամեան, Արամեանք. Գ. 258. 231. Դ. 170. 375.
Արաց (ամիս). 190.
Արես. Դ. 152.
Արծաթաղբերք. Բ. 334.
Արմաւիր. Դ. 14.
Արշակ. Բ. 358.
Արուսյիկք. Ա. 400.
Արուսեակ (աստղ). Ա. 284. 498.
Արուսեակ (սատանայ). Դ. 280.
Արսէն Վ. Բագրատունի. տես Բագրատունի հայր:
Աւարայր. Բ. 375.
Աւերնական. Դ. 75.
Աւսոնեան. Բ. 315.
Աքիլլես. Բ. 568.


## Բ


Բաբելոն. Բ. 318.
Բաբիկ սիւնի. Բ. 364.
Բագրատունի հայր (Վ. Հ. Արսէն Վարդապետ). Գ. 235.
Բաստուփիկք. Ա. 392. Բ. 292.
Բարէյոյս (հրուանդան). Ա. 374. Գ. 85.
Բելիար. Դ. 298. տես և Օձ.
Բզնունիք. Ա. 344. Դ. 36.
Բիւրակնեան. Բ. 594. Գ. 265. Դ. 6. 177.


## Գ


Գալէն. Գ. 254.

Գանգէս. Բ. 397. Դ. 373.
Գարուն. Ա. 47. 59. 61. 63. 65. 222. 238. 260. 267. 293. 359. 363. 405. 418. 425. 447. 450. 475. 487. 489. Բ. 54. 55. 63. 81. 123. 196. 214. 239. 256. 348. 406. Գ. 28. 135. 148. 193. 357. 363. Դ. 23. 95. 130. 235. 249. 250. 327.
Գերմանական. Բ. 295.
Գողթն. Դ. 236.
Գրիգոր Լուսաւորիչ. Ա. 316.


## Դ


Դամասկոս. Ա. 339.
Դեգայլոս. Դ. 188.
Դեմետր. Բ. 41. 119. Դ. 155.
Դիոնիս. Դ. 138.
Դիկլաթ. Դ. 35.
Դրախտ (Եդեմ). Ա. 210. Բ. 2. Դ. 10. 243. 272. 273. 302. 319. 329. 338. 341. 356. տես և Եդեմ:


## Ե


Եբրոս Բ. 415.
Եգեան. Բ. 308.
Եդեմ. Ա. 2. Բ. 318. Դ. 3. տես և Դրախտ:
Եդեմական. Ա. 118. 338. 347.
Եզնեան. Դ. 73.
Եղիսաբեթեան. Դ. 174.
Եպրուբիա. Բ. 137.
Երազմոյն. Գ. 380.
Երասխ. Դ. 12.
Երեկորնեայ. Բ. 314. Դ. 173.
Երկուորեակք (աստեղատուն). Ա. 424.
Երուանդաշատ. Դ. 15.
Եւա. Դ. 311. 317. տես և Նախամայր, Սկզբնամայր, Փլորա:
Եւգանեան. Ա. 322. Բ. 289.
Եւկլիդեան. Դ. 216.
Եւոլոս. Ա. 117.
Եւր. Ա. 117.
Եւրիդանոս. Բ. 298.
Եւրոպա. Բ. 413. Գ. 227.
Եփրատ. Ա. 497. Բ. 1. 22. 230. 366. Դ. 24. 29. 126. 171. 373.


## Զ


Զեփիւռ. Ա. 238.
Զեփիւռ. Ա. 180. 389. 805. Բ. 67. 315. 327. Դ. 115. 282. 327.


## Թ


Թիւլ. Գ. 386.
Թիւոլի. տես Տիբուր:


## Ի


Իբերեան. Ա. 239.
Իբերիա. Գ. 244.
Իգումական. Բ. 13.
Իպոկրատ. Գ. 234. 259.


## Լ


Լակոնացի. տես Քիոն:
Լամինք (Ոսկեանք). Դ. 155.
Լեւկադեան. 121.
Լիբանան. Ա. 436.
Լիբիա. Գ. 126. 317.
Լիգուրկեան. Ա. 122.
Լիկէոն. Դ. 113.
Լիննէոս. Բ. 11. 221. Գ. 233. 378.
Լիւզինեան. Բ. 402.
Լիւրիկեան. Ա. 443.


## Խ


Խափշիկ. Գ. 347.
Խոյ (աստեղատուն). Ա. 224.


## Ծ


Ծաղկեայ լեառն. Ա. 343. 406. Դ. 131. 167.
Ծայգան. Դ. 36.
Ծիածան (աղեղն բազմերփեան). Բ. 345. 349.
Ծիր կաթին. 277.
Ծուր. 56. տես և Տիգրիս:


## Կ


Կամէլլի. Գ. 203.
Կայխոսր. Դ. 108.
Կայխոսրեան. Ա. 300.
Կապիտոլ. Բ. 61. Գ. 233. Դ. 362. տես և Հռոմ:
Կասպեան. Դ. 19.
Կաստալ. Դ. 50.
Կարին (աստեղատուն). Ա. 162. Գ. 123.
Կիթերեան. Ա. 312.
Կիլիկեան. Ա. 430.
Կիպրական. Ա. 401.
Կիւկլադեայք. Բ. 303.
Կղզեակ Ս. Ղազարու որ 'ի Վենետիկ. Ա. 199. 203. և Դ. 336.
Կշիռ (աստեղատուն). Գ. 172.
Կոլքիս. Դ. 37.
Կոյս (աստեղատուն). Ա. 362. Բ. 288.
Կոմկաս. Դ. 169.
Կորիկոն. Ա. 430.

## Հ


Հայաստան. Ա. 204. Բ. 385. Դ. 54.
Հայեցի. Դ. 591.
Հայկ. Բ. 385.
Հայկազն, Հայկազեան. Ա. 20. Բ. 328. 358. 368. 387. 400. 436. Գ. 258. Դ. 137. 187. 341. 388.
Հայք, Հայկազն. Ա. 203. Բ. 280. 374. 414. Դ. 2. 164. 235. 374.
Հանդրին. Ա. 200. Բ. 293.
Հաշտենք. 394.
Հելլէն. Դ. 78.
Հելլէնք. Դ. 58.
Հելուէա. Բ. 202.
Հերա. Ա. 499. 509.
Հերակլէս. Դ. 178.
Հիբլեան. Ա. 189. Բ. 429. Դ. 382.
Հիմէն. Բ. 175.
Հիրիկ. Ա. 509.
Հնդիկ. Ա. 173. 240. Դ. 84. 365.
Հոն. Բ. 369.
Հոնանդուր. Բ. 368.
Հոռի (ամիս). Դ. 142.
Հռամ. Ա. 106.
Հռոմ. տես Քաղաք եօթանց բլրոց, Տիբեր, Կապիտոլ:


## Ձ


Ձմեռն. Ա. 31. 192. 258. 384. 460. 462. Բ. 55. 251. 259. 347. 438. Գ. 12. 66. 87. 95. 105. 193. 358. 362. Դ. 231. 328.


## Ղ


Ղեոնդեանք. տես Փահանայք սուրբք:


## Ճ


Ճենաց միրամարգ. Բ. 91.


## Մ


Մամգոնեան. Բ. 384.
Մասիս. Ա. 298. Բ. 326.
Մարերի (ամիս). Դ. 142.
Մաքաւոն. Բ. 396.
Մեմփական. Դ. 27. 85.
Մէանդր. Ա. 398. Դ. 196.
Մէոնիկ. Բ. 137.
Միլոխադէս. Դ. 79.
Միհր. Ա. 389.
Միհրդատ. Բ. 389.
Մեքայէլ հրեշտակապետ. Դ. 289. տես և Բ. 380.
Մուշեղ. Բ. 368.
Մուսայ. Ա. 203. 212. 292. Գ. 260. 378. Դ. 31. 82. 134. 376. տես և Պիերեան քորք:


## Յ


Յաբեթոսեան. Ա. 291.
Յարոն. Դ. 191. 204. 334.
Յակինթ պատանի. Ա. 388.
Յաւէրժհարսունք. Ա. 20.


## Ն


Նախամայր (այրարատեան աշխարհ). Բ. 312.
Նախամայր. Ա. 13. 113. 281. Բ. 338 Դ. 303. տես և Եւա, Նախաստեղծ, Սկզբնամայր, Փլորա:
Նախաստեղծ. Բ. 336. Դ. 243. 270. տես և Ադամ. Եւա:
Նաւասարդ (ամիս). Ա. 293.
Նեղոս. Դ. 27.
Նեբրոթ Մեծն. Գ. 252.
Նոյ նահապետ (երկրորդ հայր աշխարհի). Ա. 304.


## Շ


Շամիրամ. տես Ասորեստան թամբիշն:
Շնիկ (աստեղատուն). Բ. 308. Գ. 295. Դ. 28. տես և Սկուտղ:


## Ո


Ոսկեանք. տես Լատինք:
Ովկիական. Դ. 355.
Ովկիանոս. Գ. 83. 389.
Որփէոս. Դ. 345.
Ուոլինոյ. Դ. 370.


## Պ


Պալլադ. Գ. 1.
Պանքայեան. Բ. 408.
Պարթևական. Դ. 149.
Պարոսեան. Դ. 183.
Պարոնիկ. Ա. 240.
Պարսք. Ա. 179.
Պենեոն. Դ. 55.
Պեստոն. Ա. 260.
Պերմէս. Դ. 80.
Պերոզ. Բ. 402. Գ. 284.
Պէոն. Բ. 396.
Պիերեան քորք. Դ. 387. տես և Մուսայք:
Պիկիլէ. Դ. 78.
Պինդոս. Դ. 34.

Պխրդ. Դ. 100.
Պճատան. Դ. 117.

## Ռ

Ռոփսեան. Ա. 95.
Ռէոմիւրեան. Գ. 81.

## Ս

Սաբէական. Բ. 14.
Սանդարամետք. Դ. 293.
Սանդուխտ նախնի վկայուհի. Բ. 372.
Սանասովլին. Դ. 1.
Սիւնի Բաբիկ. տես Բաբիկ:
Սկզբնահայր, սկզբնամարդ. Ա. 2. Բ. 25. տես և Ադամ:
Սկունդ (աստեղատուն). Ա. 232. տես և Շնիկ:
Սոկրատ. Գ. 250. Դ. 117.
Սուքիասանք. տես Ալանք:
Սպեր կամ Սոփեր. Դ. 41.
Ստոյիկեան. Դ. 83.
Սրովբէ. Դ. 322.
Սօսանուէր անտառ. Գ. 233.

## Վ

Վահագն. Բ. 354.
Վահան ամատունի. Բ. 362
Վայոց ձոր. Դ. 341.
Վարազդատ. Բ. 366.
Վարդան. Բ. 378. 384.
Վարդանանք. Բ. 376. 384.
Վարդավառ. Ա. 291. 319.
Վիտրովիոս. Գ. 1.
Վիրգիլ, Վիրգիլիոս. Բ. 241. Դ. 354.
Վրկանիկք. Բ. 309.
Վրոյր. Դ. 338.

## Տ

Տաճոս. Ա. 689.
Տաւրոս, Տաւրեան. Դ. 39. 168.
Տեմպէ. Դ. 83.
Տիբեր. Բ. 60. 290. Գ. 92. Դ. 362. տես և Կապիտոլ:
Տիբուլ. Դ. 66.
Տիգրան Ա. Հայկազանց. Բ. 383,
Տիթոնուհի. Ա. 247.
Տիտանանք. Ա. 89.
Տիւրացի. Ա. 437. տես և Ծուր:
Տորք. Բ. 385.
Տրդատ. Բ. 361.
Տրիտոնք. Դ. 105.

## Ց

Ցուլ (աստեղատուն). Ա. 424. Գ. 129.

## Փ

Փասիս. Դ. 37.
Փափէն. Գ. 224.
Փծորս. Ա. 8.

## Ք

Քահանայք սուրբ (Ղեւոնդեանք). Բ. 376.
Քաղաք սուրբ, եօթանց բլրոց (Հռոմ) Դ. 373 Բ. 88. տես և Կապիտոլ.
Քիոն լակոնացի. Բ. 367.
Քիոս. Բ. 308.
Քրովբէ. 342. Դ. 271. 320.
Քրիսիպ. Դ. 83.

## Օ

Օմանիկ. Ա. 249.
Օձ (սատանայ). Դ. 302. 311. տես և Բէլիար:

# ՑԱՆԿ ԲՈՒՍՈՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԵԱՑ


## Ա

Ագռաւ. Դ. 166.
Աղաւնի. Դ. 268.
Աղաւնիճ. լտ. իտ. Verbena. Բ. 198. Դ. 227.
Ամարիլլեակք. Ա. 379.
Ամարիլլիս. լտ. գղ. Amarillis. Ա. 368.
— ամենագեղ. լտ. A. formosissima. Ա. 368.
— աստեղաձև, շուշան սպիտակ. լտ. Albuca major. իտ. Stella di Betlemme. Ա. 370.
— բաղեշ կամ ցցունք ամերիկեան. իտ. Crino d'America. Ա. 376.
— Թագ արքունի. իտ. Corona reale. Ա. 378.
— խստոր ամբրոսեան. իտ. Aglio ambrosiaca. Ա. 371. 372.
— սիրատարփ, հովանաձև. լտ. Agapanthus umbellatus. իտ. Fior d' amore. Ա. 373. 374.
Ամբրոսեան խստոր. տես Ամարիլլիս:
Ամերիկեան ձնղենակ կամ բաղեշ. տես Ամարիլլիս:
Ամպար. Գ. 312. տես Կասիա:
Այգեկութք. Ա. 22. Բ. 56. 93.
Այգի, այգեստան. Ա. 48. 437. Դ. 236. 381.
Անանաս. Գ. 364.
Անանուխ. իտ. Menta. տճ. Նանէ. Բ. 427.
Անգղ. Դ. 269.
Անգեայ. Ա. 34. 217. 272. Բ. 16. 324.
Անեմոն. լտ. իտ. Anemone. Ա. 402. Բ. 170.
Անթառամ եռագոյն. լտ. Amarantus tricolor. Բ. 192.
Անուշածաղիկ. իտ. Grandiglia, Fior di passione. տճ. Չարգի ֆէլէգ. Ա. 248.
Անտառ. Ա. 29. 97. Գ. 189. Դ. 89. 127. 144. 243.
Ապրիլ մեռնիլ. տես Երիցուկ:
Առիւծ. Դ. 170. 269.
Ասկլեպիաս մսեղ. լտ. իտ. Asclepias carnosa. Գ. 262.
Աստղիկ. ռմկ. Աչուկ. լտ. Aster. Բ. 194.
Արևադեմ. իտ. Vaniglia. Գ. 284.
Արմաւենի. Ա. 15.
Արմաւք. Ա. 15.
Արուսեկի հոպոպ. տես Հոպոպ արուսեկի:
Արջագի. տես Լէմոն:
Արջառ. Ա. 155. 360. Դ. 203.
Արջտակ (կոճղէզք). իտ. Tuberi. Ա. 490. 586.
Աքլորական բբուկ. տես Բբուկ աքլորի:

## Բ

Բաղեղն. Դ. 198.
Բանջար. Ա. 43. 136. Բ. 18.
Բբուկ աքլորի. իտ. Cresta di gallo. տճ. Հօրօզ Իպիպի. Բ. 44.
Բիտ, ազգ փրփրեմից. Գ. 381.
Բոյս, բուսակք. Ա. 73. 78. 81. 119. 131. 134. 148. 193. 218. և այլն:
Բուխձենիկ. Բ. 106.

## Գ

Գաղղէն. Բ. 319.
Գաղձն. Ա. 70.
Գամիռ. Բ. 442.
Գայլ. Բ. 441. Գ. 34.
Գառն. Ա. 144. Դ. 268.

Գղիր. Դ. 224.
Գնդածաղիկ. իտ. Palla di neve. տճ. Գար Թօփու. Ա. 225.
Գորգինեայ, Տալիեայք. լտ. Dahliae. իտ. Giorgine. Ա. 458. 470.
Գրէ, Գրէնիկ, Կռունկ. լտ. Geranium, Pelargonium. Գ. 132.
— Գիշերահոտ. լտ. G. triste. իտ. Giranio notturno. Գ. 165. 166. 167.

Դ

Դափնեծաղիկ. տես Ոլէանդր:
Դամասկեան վարդ. տես Վարդ Դամասկոսի:
Դեղձի. Ա. 181.
Դժնիկ. Ա. 72. Դ. 331.
Դլփնածաղիկ, Դլփինիկ. լտ. Delphinium. իտ. Spironella. տճ. Հէզարէ. Բ. 177.
Դրախտատունկ Մուսայ. տես Մուսայ դրախտատունկ:

Ե

Եգան լեզու. տես Մեղրուկ:
Եղակ. Գ. 363.
Եղևին. Ա. 94. 434. Գ. 217.
Եղէգն. Բ. 127.
Եղինձ. Ա. 70.
Եղրևանի. իտ. Lilla, Seccomoro. տճ. Լէյլաք. Ա. 172.
Եղջերու. Դ. 148.
Երաշտատունկ բոյսք. Բ. 209. Գ. 321. 381. տես և Ցօղ բուսակք:
Երիցուկ. ռմկ. Աղբիւր մեռնիմ. իտ. Camomilla. տճ. Փափաթիա. Գ. 258.
Երր. Ա. 33. տես և Զեռուն:

Զ

Զանգիկ. լտ. իտ. Campanula. Բ. 88.
Զամբիկ. Բ. 363.
Զեռուն. Ա. 36. տես և Երր:
Զոպայ. լտ. Hissopus. տճ. Զուֆա. Գ. 246.
Զութրակ. լտ. Origanum. Բ. 430.

Է

Էրէ. Դ. 144. 266.

Ը

Ընկոյզ. Գ. 316.
Ընձուղ. Ա. 485.

Թ

Թագ արքունի. տես Ամարիլլիս:
Թանթրուենի. լտ. Sambucus. Գ. 237.
Թաւրինջակ. լտ. Primula. Բ. 80.
Թթուենի. իտ. Agrumi. Գ. 99. 131.
Թթուկիչ. իտ. Acetosa. տճ. Գուզու գուլաղը. Գ. 247.
Թխթեռն. Ա. 18. Բ. 137. 187.
Թռչուն. Ա. 174. Բ. 197. 250. տես և Հաւ:
Թուփ, Թփաստան. Ա. 161. 170. 175. 181. 188. 227. 463. Բ. 426. Գ. 80. 99. 138. 168. 229. Դ. 160.

Ի

Իքերունի. տես Ցամքիկ Իքերունի:
Իժ. Դ. 303. տես և Օձ:

Լ

Լանդան. իտ. Landano. տճ. Լադէն. Գ. 244.
Լէոնոր կամ Արջագի. լտ. Leonurus. Գ. 288.
Լիփա. Գ. 317.
Լոբէլեայք. լտ. Lobelia. Գ. 282.

Խ

Խաշինք. Բ. 328. Դ. 237. 382.
Խաշխաշ. իտ. Papavero. Բ. 41. տես և Մեկոն:
Խընձուռնի. Ա. 74.
Խնձոր. Բ. 314. Դ. 163.
Խունկ, Խնկենի. Ա. 250. 440. Բ. 14. 422.
Խնկունի. իտ. Rosmarino. տճ. Պիպէրէ-նա. Բ. 426.
Խունչայլ. Ա. 468.
Խոտոր Ամբրոսեան. տես Ամարիլլիս:

Ծ

Ծաղիկ (ախտ). Բ. 407.
Ծաղիկք. Ա. 6. 36. 86. 70. 102. 147. և այլն:
Ծառք. Ա. 48. 184. 188. Բ. 231. 286. 418. Գ. 19. Դ. 148. 238. 246.
Ծխթրախին կամ սոխային (կոճղէզք). իտ. Cipolle. Ա. 490. 386.
Ծիծառն. Ա. 49.
Ծղրիթ. Բ. 302.
Ծոթոր. իտ. Timo. Բ. 429.

Կ

Կակաչ. իտ. Tulipano. տճ. Լալէ. Ա. 397. Բ. 298. Դ. 161.
— Մեանդրեան. Ա. 398.
— Կիպրական. իտ. Gigante. Ա. 401.

Կաղամախ. Գ. 90. 197. 364.
Կամելիա յաբոնիկ. լտ. Camellia. Գ. 191. 193. 197.
Կայծոռիկ. Գ. 263.
Կանկառունիկ. լտ. Cactus. Գ. 320.
Կասիա հոտական. լտ. Mimosa odorifera. իտ. Cassia. տճ. Ա՛ղբէր. Գ. 312. տես և Պատկառուկ:
Կատու. Ա. 58.
Կարապ. Ա. 300. Գ. 38. 107.
Կենեղուտ. լտ. իտ. Salvia. տճ. Տէւ օթու. Բ. 428.
Կինձ. Գ. 369.
Կիտրոն. լտ. Citrus. Գ. 102.
Կիտրոնիկ. իտ. Cedronella, Erba luigia. Ա. 227.
Կոճղէզ. իտ. Bulbo. Ա. 336. 362. 387. 409. 428. 430. 441. 462. 490. Գ. 169. 171.
Կոտիմն. լտ. Tropæolum. իտ. Nasturzio. Գ. 176.
Կորկորայք. իտ. Corcora. Գ. 261.
Կռունկ (բոյս). տես Գ.րէ:
Կռունկ (թռչուն). Բ. 116.

Հ

Հաղբեվարդ. Ա. 346. տես և Վարդ:
Հալուէ. լտ. իտ. Aloè. տճ. Էօփ աղաճը. Գ. 320.
Հարսնամատն, Նունուֆար. տճ. Կէօլ օթուէնի. Ա. 499. տես և Հիրիկ լճասէր:
Հաւ. Գ. 42. 60. 237. 266. տես և Թռչուն:
Հաւալուսն. Գ. 304.
Հինածաղիկ. տես Հրաշածաղիկ:
Հիրիկ. լտ. գղ. Iris. իտ. Iride. տճ. Սուսամ չիչէկի. Ա. 443.
— Բազմերփեան. Ա. 439. 510.
— Լճասէր. լտ. Iris halophila. տճ. Կէօլ օթուէնի. Ա. 496. տես և Հարսնամատն:
Հնդիկ մրջիւն. տես Մրջնառիւծ:
Հոպոպ Արուսեկի. լտ. Phaseolus caracalla. իտ. Fagiolo caracollo. գղ. Haricot caracolle, H. à grandes fleurs. տճ. Չիւրչէկ Արուսա. Ա. 243.
Հրանունկ. իտ. Ranuncolo. Ա. 402. Բ. 170.
Հրաշածաղիկ, Հինածաղիկ. լտ. Impatiens, Balsamina. իտ. Bell' uomo de' giardini. տճ. Գրճա չիչէկի. Բ. 204.

Ձ

Ձի. Բ. 370. Գ. 100.
Ձիթենի. Գ. 134.
Ձուկն. Գ. 33.

Ճ

Ճիպուռն, Ճպուռն. Գ. 332. Գ. 201.
Ճճի. Ա. 53. 174. Բ. 136. 168.
Ճնճղուկ. Ա. 219. Գ. 201.

Մ

Մակերան. Maggiorana. Ա. 428.
Մայր, Մայրի. Ա. 84. 98. 223. 436. Գ. 218. Գ. 131. 193. 366.
Մանիշակ, Մանուշակ. լտ. իտ. Viola. գղ. Violette. տճ. Մէնէքշէ. Ա. 66. Բ. 64. 190. Գ. 330.
Մատնեծաղիկ ծիրանեգոյն. լտ. Digitalis purpurea. Բ. 32.
Մատուտակ. իտ. Peonia. տճ. Շագայիգ. Ա. 445. 492.
Մարի. Բ. 142.
Մեխակ. լտ. Dianthus. իտ. Garofano. գղ. OEillet. տճ. Գարանֆիլ. Բ. 102. 103. 146. 154.
Մեկոն. տես Խաշխաշ:
Մեղու. Ա. 17. Բ. 429. Գ. 263. 296. Գ. 199. 332.
Մեղրուկ, Եզան լեզու. լտ. Borrago. իտ. Borragine. գղ. Bourrache. տճ. Լիսան էլսէվրի. Գ. 241.
Մողախոտ. Ա. 61.
Մոլեխինդ. լտ. իտ. Cicuta. տճ. Պալդըրան. Գ. 249.
Մոլոշ. լտ. իտ. Malva. տճ. Էպէմ կիւմէճի. Գ. 242.
Մուսայ դրախտատունկ. լտ. Musa paradisiaca. Գ. 44.
Մրջիւն. Ա. 79. 479.
Մրջնառիւծ, Հնդիկ մրջիւն. Ա. 84.

Յ

Յակինթ. իտ. Giacinto. տճ. Զիւմպիւլ. Ա. 103. 388. Բ. 294.
Յասմիկ. իտ. Gelsomino, տճ. Եասէմին. Ա. 234.
— Իբերունի կամ սպանիական. իտ. Gelsomino di Catalonia. տճ. Ֆրէնկի պատեր. Ա. 239.
— Պարսիկ, արաբ, աղորիկ. Ա. 240.
— Հնդիկ. իտ. Gelsomino cedrato կամ Mughetto. Ա. 240:
Յոյր բուսակք. իտ. Piante crasse. Գ. 321. տես և Երաշտատունկ:

## Ն

Նարգէս. իտ. Giunchiglia, Narciso. տճ. Զէրէն. Ա. 66. 103. 304.
Նարդոս. Դ. 350.
Նարինջ, Նարնջենի. Ա. 159. Բ. 13. Գ. 102.
Նժոյգ. Գ. 299. Դ. 77.
Նհանգ. Դ. 96.
Նշի. Ա. 267.
Նոճ, Նոճի. Ա. 110. 114. Դ. 69. 87. 168. 180. 364.
Նունուֆար. տես Հարսնամատն:
Նուռն, Նռնենի. Ա. 164. Բ. 411.

## Շ

Շահպուրակ. լտ. Cheiranthus. իտ. Violaciocca. գղ. Giroflée. տճ. Շէպպոյ. Բ. 171. 240. 255. 271. 284. 269.
Շամբ. Դ. 24.
Շաւաշար յաբոնիկ. լտ. Aucupa japonica. Գ. 384.
Շուշան. լտ. Lilium. իտ. Giglio. գղ. Lis. Ա. 102. 383. 384. 368. 367. 372. 393. Գ. 182. Դ. 159. 326. տես և Ամարիլլիս:
— սպիտակ. տես Ամարիլլիս աստ-ղաձև:

## Ո

Ոզնի. Գ. 327.
Ողորի. իտ. Viburno. Ա. 216.
Ոլէանդր, Դափնեծաղիկ. տճ. Զագգըմ. Ա. 168. Բ. 301.
Ոսկեծաղիկ. իտ. Crisantemo, Fior d' oro. Բ. 87. 94.
Որայ. Դ. 380.
Որդան կարմիր. տես Որդնիկ:
Որդնիկ կարմրորակ, Որդան կարմիր. Գ. 339.
Որթ. Ա. 482. Գ. 130.
Որմզդիկ, Որմզդածաղիկ. լտ. Flos Jovis. տճ. Հէրմէսի չինէքէսի. Բ. 167.
Որոմն. Ա. 69.
Որտենսիա յաբոնիկ. լտ. Hortensia japonica. Գ. 184.
Ուլ. Դ. 238.
Ուռի. Դ. 48.
Ուտիճ. Ա. 439. 488.
Ոփի. Ա. 86.
Ոքող. Գ. 324. Դ. 331.

## Պ

Պատկառուկ ամօթխած. լտ. Mimosa pudica. իտ. Sensitiva. Գ. 299. 310. — տես և Կասխա:
Պէոնիկ. Գ. 288.

## Ջ

Ջրասէր բուսակք. Գ. 175.

## Ռ

Ռահան. իտ. Basilico. տճ. Ֆէսլէյէն. Բ. 430.

## Ս

Սարդ, Սարդենի. Ա. 110. Դ. 52. 180.
Սարեակ. Ա. 202. Դ. 239.
Սիրամարգ. Բ. 91. 215.
Սիրատարփ Ամարիլլիս. իտ. Fior d' amore. տես Ամարիլլիս:
Սղոցի. Ա. 83. Դ. 166. 109.
Սոխակ. Բ. 212. Դ. 89. 239.
Սոխային (կոճղէզք). իտ. Cipolle. տես Ծիլթրասին:
Սոխիկ. տես Քրքում:
Սօսի. Գ. 233. Դ. 112.

## Վ

Վառեակ. Ա. 27. Բ. 143.
Վարդ. Ա. 102. 296. 318. 320. 354. Բ. 101. 256. 261. 310. Գ. 193. Դ. 317. 326.
— ալեորիկ. տճ. Վան կիւլիւ. Ա. 343.
— Դամասկոսի. լտ. Rosa damascena. Ա. 338.
— հազրեվարդ. Ա. 346.
— հարիւրթերթեան. լտ. Centifolia. տճ. Սատպէրկ. Ա. 346.
— մշտափթիթ. լտ. Semperflorens. Ա. 340.
— Օտտա կիւլիւ. Ա. 337.
Վարդաստան. Ա. 320. 322.
Վարդենի, Վարդենիք. Ա. 289. 261. 317. 341. 343. 347. 383. Գ. 139. 192. Դ. 159.
Վարուժան. Ա. 311. Գ. 294.
Վիշապ. Բ. 379. Դ. 176.

## Տ

Տօնեայք. տես Գորգինայք:

Տատասկ. Ա. 71.
Տատրակ. Գ. 294.
Տունկ. Ա. 150. Բ. 12. 443.
Տուղտ, Տղտենի. լտ. Althea. թճ. Կէ-հմ. Բէյմ. Գ. 257.
Տօսախ. Գ. 190.

## Ց

Ցինկ. Բ. 191.
Ցորեան. Ա. 69. Բ. 119. 349. Գ. 259. տես և Որայ։

## Փ

Փառեան հաւք. Գ. 42.
Փեգենայ. լտ. իտ. Ruta. թճ. Սէդէֆ. Գ. 240.
Փրփրեմ. լտ Portulaca. իտ. Porcellana. գղ. Pourpier. թճ. Սէմիզ օթու. Գ. 247. տես և 381.
Փուքսիա ծիրանեգոյն. լտ. Fuchsia coccinea. Գ. 273.

## Ք

Քրքում. իտ. Croco, Zafferano. թճ. Զաֆրան. Ա. 332. 429.
Քօշ. Գ. 147.

## Օ

Օձ (անասուն). Ա. 5. 205. Գ. 327. տես և Իժ։
Օձ (աստանեայ). տես 'ի Ցատուկ անուանս։
Օշինդր. իտ. Assenzio. թճ. Փէլին. Գ. 245.
Օշնան. իտ. Lavanda. Բ. 427.

Օ՛ՎՐՈՒՐԻ ՈՐՄԶԴԱՆԱՑ ԲՈՒՐԱՍՏԱՆՍՆ վասն քերթողական ախորժականն և վասն խիտ առ խիտ հայրենի յիշատակաց ճարտար հիւսուածոյն, արժանի տպագրութեան համարեցաք 'ի բարգաւաճման հայ դպրութեան ։

ՔՆՆԻՉՔ ԳՐՈՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՍ

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ